



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 112 2019

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեվանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 30.07.2019թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Շավաղը՝ 5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը Ա.Ս. Դավթյանին արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան շնորհելու մասին..... 3

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է Եվրոպայի խորհրդի Իրավունքի գերակայության և մարդու իրավունքների հարցերով գլխավոր տնօրեն Քրիստոս Զիակունդյանի գլխավորած բարձրաստիճան պատվիրակությանը 4

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

Մինսկում կայացել է ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նիստը. ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել ելույթով..... 5

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ангуш Акопян Законодательное регулирование поощрительных норм в борьбе со взяточничеством в некоторых зарубежных странах 7

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գոհար Ադոնց Վերաքննության սահմանների հիմնահարցը՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի համատեքստում13
Նելլի Աշրաֆյան Տուժողի հետ հաշտության քրեաիրավական բնույթը21

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դավիթ Օհանյան Պայմանագրի մեկնաբանման նախադրյալները..... 30

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լուսինե Թասալյան Հաշտարարության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 37

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բագրատ Ղազինյան Գործադիր իշխանությունը իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում 41
Հայկ Կետոյան Հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակը խորհրդարանական հանրապետություններում (համեմատական վերլուծություն) 47
Մարտին Մանուկյան Պառլամենտարիզմը պատմության մեջ. Եվրոպական փորձը 53
Սամվել Բարսեղյան Իրավական պետության հայեցակարգի տեղը և նշանակությունը իրավունքի տեսության համակարգում 57

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հերմինե Գևորգյան ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների աուտոդեստրուկտիվ վարքագծի ախտորոշման որոշ հարցեր 64

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts 70

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները 80

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Ա.Ս. ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով վարչապետի միջնորդությունը՝ համաձայն Սահմանադրության 137-րդ հոդվածի, ինչպես նաև «Դատախազության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հանրային ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Արթուր Սարգսի ԴԱՎԹՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

 Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. հուլիսի 3
Երևան
ՆՀ-149-Ա



ՀՀ զԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՅԵՐՈՎ զԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՔՐԻՍՏՈՍ ԶԻԱԿՈՒՄՈՂՈՒԼՈՍԻ զԼԽԱՎՈՐԱԾ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Ողջունելով պատվիրակության անդամներին՝ ՀՀ գլխավոր դատախազը բարձր է գնահատել Եվրոպայի խորհրդի համապատասխան կառույցների հետ ձևավորված համագործակցության բազմամյա փորձն ու արդյունքները: Արթուր Դավթյանը կարևորել է պատվիրակու-



թյան՝ հատկապես ներկայիս շրջափուլում Հայաստան այցելելու հանգամանքը՝ հաշվի առնելով մեր երկրում ինչպես մարդու իրավունքների պաշտպանության և դատաիրավական համակարգերում, այնպես էլ կոռուպցիայի դեմ պայքարում նոր բարեփոխումների մեկնարկը, դրանց անցնցում իրականացման համար գործընկեր միջազգային կառույցների աջակցության անհրաժեշտությունը:

Քրիստոս Զիակումոպուլոսն իր հերթին ընդգծել է ՀՀ դատախազության հետ արդեն ձևավորված և բնականոն զարգացող գործակցությունը, որը վստահություն է հաղորդում համատեղ հետագա ձեռնարկներին: Պատվիրակության ղեկավարը հավելել է, որ ԵԽ-ն ցանկանում է կարճաժամկետ և երկարաժամկետ փորձագիտական աջակցություն ցուցաբերել սկսված բարեփոխումներին, և իրենց այցի նպատակն առկա իրավիճակին ու Հայաստանի կարիքներին խորությամբ ծանոթանալն է:

Այս համատեքստում նա կարևորել է կոռուպցիայի դեմ պայքարի և դատաիրավական ոլորտի բարեփոխումների ռազմավարական առաջնահերթությունների ու կառուցակարգերի մշակմանը ՀՀ դատախազության ներգրավվածությունը՝ հետաքրքրվելով սկսված գործընթացից ակնկալվող արդյունքների վերաբերյալ դատախազության մոտեցումներից:

Արթուր Դավթյանը նշել է, որ դատախազությունն անմիջական դերակատարություն ունի բարեփոխումների իրավական բազայի ձևավորման գործընթացում և ներգրավված է այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբերում: Նա նշել է, որ քրեական հետապնդման մարմինների կողմից կոռուպցիայի դեմ պայքարում արձանագրած աննախադեպ արդյունքների ապահովման հիմնական գործոնները եղել են հանրային աջակցությունը, վստահությունը և պահանջատիրությունը, ուստի անհրաժեշտ է, որ այս ոլորտում ցանկացած բարեփոխում բխի այդ ձեռքբերումը պահպանելու և զարգացնելու տրամաբանությունից:

Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից՝ ՀՀ գլխավոր դատախազն առաջնահերթություն է համարել հատկապես պետությունից գողացված ակտիվների վերադարձման իրավական մեխանիզմներն ընդլայնելու համար օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունների իրականացումը, որը պետք է հիմնված լինի, մի կողմից, սեփականության անձեռնմխելիության և մարդու սեփականության իրավունքների հստակ երաշխավորման, մյուս կողմից՝ սոցիալական արդարության վերականգնման հանրային շահի հավասարակշռման սկզբունքի վրա:

Անդրադառնալով հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ կենտրոնացված մոդելի ստեղծման շուրջ քննարկումներին՝ Արթուր Դավթյանը նշել է, որ նոր մոդելը պետք է կառուցված

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

լինի հանրային ծառայողների և, առաջին հերթին, բարձրաստիճան պետական պաշտոն զբաղեցնող անձանց ավելի լայն հաշվետվողականության, հանրային վստահություն վայելող մասնագիտացած հակակոռուպցիոն մարմնի վերահսկողական ֆունկցիոնալ կարողությունների զարգացման հենքերի վրա:

Ըստ գլխավոր դատախազի՝ անհրաժեշտ է այնպիսի լուծումներ գտնել, որոնք կերաշխավորեն ներքին հակակշռման և հավասարակշռման մեխանիզմը և կնպաստեն կենտրոնացված ձևով կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված համակարգային կառուցակարգերի ուժեղացմանը, վերլուծական, կոնկրետ ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի գնահատման, խնդիրների բացահայտման և իրավապահ մարմիններին ներկայացման կարողությունների զարգացմանը:

Այս համատեքստում գլխավոր դատախազն առանցքային է համարել պետական կառավարման համակարգում այնպիսի մեխանիզմների ներդրումը, որոնք թույլ կտան պաշտոնատար անձանց հայտարարագրելու ոչ միայն իրենց գույքի և եկամուտների տարեկան շարժերը, այլ նաև նրանց բոլոր շահերը՝ հակակոռուպցիոն մարմնին հնարավորություն տալով

ցանկացած պահի ստուգման առարկա դարձնելու ներկայացված տեղեկատվության իսկությունը, լիարժեքությունը և ձեռնարկելու դրանից բխող ընթացակարգեր:

Ինչպես կոռուպցիայի դեմ պայքարի, այնպես էլ դատաիրավական ոլորտի բարեփոխումները, գլխավոր դատախազի համոզմամբ, պետք է բխեն իշխանության թևերի տարանջատման և հավասարակշռման, մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքներից և պետք է լիարժեք համապատասխանեն Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների իրավական չափանիշներին, հատկապես՝ եվրոպական իրավունքին և ՀՀ Սահմանադրությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են արդար դատաքննության իրավունքի իրացմանը, դատախազության կարգավիճակային և գործառությանն անկախությանը, քրեական դատարավության և քրեական նոր օրենսգրքերի ընդունման հեռանկարներին առնչվող հարցեր: Պատվիրակության կողմից գոհունակությամբ ընդգծվել է դատախազության վերաբերյալ GRECO-ի հանձնարարականները գրեթե լիարժեքորեն կատարված լինելու հանգամանքը:

ՄԻՆՍԿՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԱՊՂ ԿՈՌՈՒՊՅԻԱՅԻ ՀԱՎԱՉԴՍԱՆ ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ. ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԸ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԵԼՈՒՅԹՈՎ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի գլխավորած պատվիրակությունը Մինսկում մասնակցել է ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նիստին:

Նիստի ընթացքում մասնակից երկրների պատվիրակությունները ներկայացրել են կոռուպցիայի հակազդման սեփական փորձը: Այդ շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել անցած տարվա ընթացքում Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված ինստիտուցիոնալ բարեփոխումների ռազմավարական առաջնահերթություններին ու հետապըն-

դած խնդիրներին, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, պատճառված վնասների վերակազմման ոլորտներում հիմնական արդյունքներին վերաբերող ելույթով:

Արթուր Դավթյանը, մասնավորապես, նշել է, որ Հայաստանում մեկնարկած հակակոռուպցիոն բարեփոխումներն ունեն քննություն բռնելու և երկրի ընդհանուր զարգացման, ժողովրդավարացման, պետական կառավարման համակարգի թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության մակարդակի կտրուկ բարձրացման լիարժեք մեկնարկային նախադրյալներ, քանի որ հիմնված են դրսևոր-

վող քաղաքական կամքի, հասարակության լիարժեք օժանդակության, իրավապահ մարմինների պրոֆեսիոնալիզմի և վճռականության, ինչպես նաև ավելի վաղ կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված ինստիտուցիոնալ միջառոց կառուցակարգերի, մասնավորապես՝ ապօրինի հարստացումը քրեականացնելու, հայ-



տարարագիր ներկայացնող և նրանց փոխկապակցված անձանց շրջանակներն ընդլայնելու իրավական հիմքերի ստեղծման, ազդարարի ինստիտուտի ներդրման վրա: Ըստ գլխավոր դատախազի՝ այս բազայի հենքին Հայաստանը ներկայումս հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության բարձրացումը տեսնում է հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավման, երկրից ապօրինի դուրս բերված ակտիվները վերադարձնելու և օրինական տիրապետողին հանձնելու իրավական մեխանիզմների կատարելագործման, հակակոռուպցիոն կենտրոնացված մոդելի ստեղծման և այլ կոնցեպտուալ ուղղություններով: «Մեր կողմից այս կառուցակարգերի ներդրման հարցում դրսևորվում է ընդգծված զգուշավորություն, քանի որ առկա է շատ հստակ նախապայման՝ գտնել այնպիսի լուծումներ, որոնք լիարժեքորեն կերաշխավորեն, մի կողմից, սեփականության անձեռնմխելիության և մարդու սեփականության իրավունքի պաշտպանության, իսկ մյուս կողմից՝ սոցիալական արդարության վերականգնման հանրային շահի բավարարման հավասարակշռությունը», – հավելել է Արթուր Դավթյանը:

Փոխըմբռնման, վստահության և կառուցողական երիտսության ոգով անցկացված Խորհրդի նիստի ընթացքում ընդհանուր առմամբ ընդունվել է 10 որոշում, որոնք վերաբերում են

ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի կողմից ընդունված նախկին որոշումների, հակակոռուպցիոն պայքարում Միջպետական խորհրդի մասնակից երկրների համագործակցության կոնցեպցիայի իրականացման արդյունքներին, ինչպես նաև հանցավորության դեմ համատեղ միջոցների 2019-2023թթ. միջպետական ծրագրով առաջիկա մեկ տարվա համար նախատեսված միջոցառումներին: Մասնակից երկրների պատվիրակությունների ղեկավարներն արդյունավետ են գնահատել նախորդ տարի անցկացված «Միասին ընդդեմ կոռուպցիայի» միջազգային երիտասարդական հակակոռուպցիոն մրցույթը, ինչից ելնելով՝ որոշվել է այս տարի ևս նման միջոցառում անցկացնել:

Բարձր գնահատելով ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի նախագահությամբ նախորդ տարվա ընթացքում Միջպետական խորհրդի գործունեության դինամիկան և արդյունավետությունը՝ նիստի ընթացքում սահմանված կարգով նախագահությունը փոխանցվել է Բելառուսի Հանրապետությանը:

Որոշվել է ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հաջորդ տարվա նիստն անցկացնել Ղազախստանի Հանրապետությունում:



Բելառուս կատարած աշխատանքային այցի շրջանակներում Արթուր Դավթյանը նաև երկկողմ հանդիպումներ է ունեցել ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի անդամ առանձին երկրների պատվիրակությունների ղեկավարների, գլխավոր դատախազների հետ, որոնց ընթացքում քննարկվել են իրավական փոխօգնության և այլ ոլորտներում երկկողմ և բազմակողմ համագործակցության ամրապնդմանն առնչվող հարցեր:

АНУШ АКОПЯН

Российско-Армянский университет,
Институт права и политики,
аспирант Кафедры уголовного права и уголовно-процессуального права

ЗАКОНОДАТЕЛЬНОЕ РЕГУЛИРОВАНИЕ ПООЩРИТЕЛЬНЫХ НОРМ В БОРЬБЕ СО ВЗЯТОЧНИЧЕСТВОМ В НЕКОТОРЫХ ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ

Институт освобождения от уголовной ответственности за дачу взятки и посредничество во взяточничестве в связи с добровольным сообщением в Беларуси, Казахстане и Киргизии имеет свои особенности. В главе 35 УК Республики Беларусь «Преступления против интересов службы» установлена ответственность за получение взятки (ст. 430), дачу взятки (ст. 431) и посредничество во взяточничестве (ст. 432). Согласно примечанию к ст. 431 УК Республики Беларусь, лицо, давшее взятку, освобождается от уголовной ответственности, если в отношении его имело место вымогательство взятки либо если это лицо после дачи взятки добровольно заявило о содеянном¹. Содержание данной нормы имеет некоторые сходства с содержанием аналогичной нормы, установленной в УК РФ. Но институт освобождения от уголовной ответственности в связи с добровольным сообщением о даче взятки трактуется более расширительно законодателем Республики Беларусь, чем аналогичный институт в РА и РФ. Так, во-первых, не установлено каких-либо временных ограничений для добровольного сообщения о даче взятки, что приветствуется нами. Во-вторых, законодателем Республики Беларусь не установлен перечень государственных органов и организаций, куда взяткодатель может обратиться с добровольным заявлением. Данное обстоятельство, с одной стороны, носит положительный характер, так как законодатель не ставит каких-либо ограничений в выборе органов и организаций,

куда можно обратиться с добровольным заявлением о даче взятки. Но, с другой стороны, трактовка данной поощрительной нормы вызывает множество вопросов, таких как, например, может ли считаться добровольным заявлением о даче взятки заявление, данное штатному сотруднику какой-либо коммерческой организации. По мнению автора, в целях единообразного толкования закона необходимо иметь перечень органов и организаций, в которые можно давать заявления о фактах взяточничества, будучи уверенным в том, что заявление лица будет учтено при решении вопроса о привлечении лица к уголовной ответственности.

Также, в УК Республики Беларусь установлена поощрительная норма об освобождении от уголовной ответственности посредника во взяточничестве. В соответствии с примечанием к ст. 432 УК РБ, виновный в посредничестве во взяточничестве либо соучастник в даче или получении взятки освобождается от уголовной ответственности, если он после совершения преступных действий добровольно заявил о содеянном². В данной норме белорусский законодатель, в отличие от российского и армянского законодателя, также устанавливает возможность освобождения от уголовной ответственности соучастника в даче или получении взятки. Мы считаем, что нашему законодателю необходимо обратить внимание на данную трактовку указанной нормы. Также, в данной норме прямо указывается на то, что соучастник и посредник во взяточничестве – это

¹ См.: Уголовный Кодекс Республики Беларусь [Электронный ресурс]: URL: <http://xn----ctbcgfviccvibf9bq8k.xn--90ais/statya-431> (дата обращения: 31.05.2019)

² См.: Там же.

два разных понятия, с разными функциями и ролями, что не вызывает каких-либо затруднений в разграничении их ответственности.

В главе 13 УК Республики Казахстан «Коррупционные и иные преступления против интересов государственной службы и государственного управления» установлена ответственность за получение взятки (ст. 366), дачу взятки (ст. 367) и посредничество во взяточничестве (ст. 368). В соответствии с примечанием 2 к ст. 367 УК Республики Казахстан, лицо, давшее взятку, освобождается от уголовной ответственности, если в отношении него имело место вымогательство взятки со стороны лица, указанного в части первой статьи 366 настоящего Кодекса, или если это лицо добровольно сообщило правоохранительному или специальному государственному органу о даче взятки³. Здесь мы также видим два самостоятельных основания освобождения взяткодателя от уголовной ответственности. Также, законодатель Республики Казахстан не ставит каких-либо дополнительных условий освобождения взяткодателя в связи с добровольным заявлением, таких как способствование раскрытию преступления, а равно не ставит каких-либо временных ограничений для добровольного заявления. Но, в отличие от законодателя Республики Беларусь, здесь установлен круг органов, в которые лицо может сообщить о факте взяточничества. Исходя из толкования данной статьи, автор приходит к выводу, что уголовное законодательство Республики Казахстан дает возможность сообщать о содеянном преступлении в довольно широкий круг органов. Интерес вызывает понятие специального государственного органа о даче взятки, но законодатель Республики Казахстан не дает определения понятия данного органа. Не содержится определения круга специального государственного органа и в нормативном постановлении Верховного суда Республики Казахстан от 27 ноября

2015 года №8 “О практике рассмотрения некоторых коррупционных преступлений”.

В УК Республики Казахстан не установлено поощрительной нормы, освобождающей от уголовной ответственности посредника во взяточничестве. Но интерес вызывает иная поощрительная норма, установленная в примечании к ст. 366 УК РК, в которой говорится, что не является преступлением в силу малозначительности и преследуется в дисциплинарном или административном порядке получение впервые лицом, уполномоченным на выполнение государственных функций, либо приравненным к нему лицом имущества, права на имущество или иной имущественной выгоды в качестве подарка при отсутствии предварительной договоренности за ранее совершенные законные действия (бездействие), если стоимость подарка не превышала двухмесячных расчетных показателей⁴. То есть законодатель даёт возможность освобождения взяткополучателя от уголовной ответственности в виду малозначительности деяния, если:

- это деяние совершено впервые;
- взяткополучатель совершил законные действия до получения предмета взятки;
- у сторон отсутствовала договоренность о совершении действий за вознаграждение;
- стоимость предмета взятки не превышает двухмесячных расчетных показателей.

Аналогичная норма установлена и в ст. 367 УК Республики Казахстан. Законодатель Республики Казахстан обращает особое внимание на вышеуказанные поощрительные нормы, специально указывая в пункте 27 нормативного постановления Верховного суда Республики Казахстан от 27 ноября 2015 года №8 “О практике рассмотрения некоторых коррупционных преступлений” об их обязательном учете органом, ведущим уголовный процесс⁵. По мнению автора, армянскому законодателю следует обратить вни-

³ См.: Уголовный Кодекс Республики Казахстан. [Электронный ресурс]: URL: http://kodeksy-kz.com/ka/ugolovnyj_kodeks/367.htm (дата обращения: 31.05.2019)

⁴ См.: Там же.

⁵ Нормативное постановление Верховного суда Республики Казахстан от 27 ноября 2015 года №8 “О практике рассмотрения некоторых коррупционных преступлений” [Электронный ресурс]: URL: https://tengrinews.kz/zakon/verhovnyiy_sud_respubliki_kazahstan/natsionalnaya_bezopasnost/id-P150000008S/ (дата обращения: 31.05.2019)

мание на данную поощрительную норму и внести аналогичную норму в законодательство.

В главе 44 УК Кыргызской Республики «Коррупционные и иные преступления против интересов государственной и муниципальной службы» установлена ответственность за получение взятки (ст. 325), дачу взятки (ст. 328) и посредничество во взяточничестве (ст. 327). В соответствии с примечанием к ст. 328 УК Кыргызской Республики, лицо, давшее взятку, освобождается от уголовной ответственности, если имело место вымогательство взятки со стороны должностного лица или если лицо добровольно сообщило органу, имеющему право возбудить уголовное дело, о даче взятки⁶. Нужно отметить, что до принятия нового уголовного кодекса Кыргызской Республики от 02 февраля 2017 года, законодатель устанавливал возможность освобождения от уголовной ответственности при добровольном сообщении взяткодателя о предстоящей даче взятки. Трактовка данной нормы была неопределенной, так как законодатель вначале говорил о лице, давшем взятку, то есть об оконченном преступлении, а далее о предстоящей даче взятки, то есть о неоконченном преступлении. При буквальном толковании данной нормы было очевидно, что законодатель Кыргызской Республики устанавливал возможность освобождения от уголовной ответственности при добровольном сообщении взяткодателя лишь в случае, когда преступление не окончено, а именно – когда предмет взятки не был передан. В данном случае имеет место добровольный отказ от совершения преступления, а не деятельное раскаяние, в отличие от предыдущих случаев. То есть законодатель Кыргызской Республики не устанавливал возможности освобождения от уголовной ответственности взяткодателя за оконченное преступление. В целях недопущения неопределенности в применении данной нормы были внесены изменения в поощрительную норму в виде отделения оснований освобождения от

уголовной ответственности за дачу взятки, когда имело место вымогательство взятки, и освобождения от уголовной ответственности за дачу взятки, когда лицо добровольно заявило об этом органу, имеющему право возбудить уголовное дело.

Согласно примечанию к ст. 327 УК Кыргызской Республики, лицо, являющееся посредником в получении или даче взятки другому лицу, освобождается от уголовной ответственности за деяние, предусмотренное настоящей статьей, если оно добровольно сообщило об этом органу, имеющему право возбуждения уголовного дела, и способствовало раскрытию и (или) пресечению преступления⁷. По мнению автора, законодатель поступил нелогично, установив более строгие условия освобождения посредника во взяточничестве от уголовной ответственности, по сравнению с освобождением взяткодателя при добровольном заявлении о даче взятки. Считаем, что установление условия о способствовании раскрытию и (или) пресечению преступления в отношении посредника во взяточничестве излишне, если аналогичное условие не установлено для взяткодателя, так как, по мнению автора, дача взятки и получение взятки являются более тяжкими преступлениями и при конструировании поощрительных норм для данных статей должны применяться более строгие или равнозначные условия.

Также, интерес вызывают поощрительные нормы об освобождении от уголовной ответственности за факты взяточничества некоторых стран СНГ, таких как Республика Узбекистан и Республика Украина.

Так, согласно ч. 3 ст. 369 УК Украины, лицо, давшее взятку, освобождается от уголовной ответственности, если в отношении него имело место вымогательство взятки или если после дачи взятки оно добровольно заявило о случившемся, до возбуждения уголовного дела в отношении него орган, наделенный законом правом на возбуждение уголовного дела⁸. Но

⁶ См.: Уголовный Кодекс Кыргызской Республики. [Электронный ресурс]: URL: <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-gu/111527> (дата обращения: 31.05.2019)

⁷ См.: См.: Там же.

⁸ См.: Уголовный Кодекс Республики Украина. [Электронный ресурс]: URL: http://kodeksy.com.ua/ka/ugolovnyj_kodeks_ukraini/statja-369.htm <http://meget.kiev.ua/kodeks/ugolovnyj-kodeks/razdel-1-17/> (дата обращения: 31.05.2019)

данная поощрительная норма утратила силу, и в соответствии с последними изменениями УК Украины от 15 марта 2016 года, в УК Украины не содержится какой-либо поощрительной нормы, освобождающей взяточдателя от уголовной ответственности.

В соответствии со ст. 211 УК Республики Узбекистан, лицо, давшее взятку, освобождается от ответственности, если в отношении него имело место вымогательство взятки, и это лицо в течение тридцати суток после совершения преступных действий добровольно заявило о случившемся, чистосердечно раскаялось и активно способствовало раскрытию преступления⁹. Исходя из данной нормы, законодатель установил одно основание освобождения от уголовной ответственности, включающее в себя соблюдение следующих условий:

- имело место вымогательство взятки;
- лицо добровольно заявило о случившемся в течение тридцати суток после совершения преступных действий;
- лицо чистосердечно раскаялось;
- лицо активно способствовало раскрытию преступления.

Данная трактовка поощрительной нормы имеет сходство с трактовкой, данной армянским законодателем. Здесь также установлено одно основание освобождения взяточдателя от уголовной ответственности, также установлено временное ограничение – тридцатидневный срок, также установлены дополнительные условия в виде способствования раскрытию преступления. Но, в отличие от армянского законодательства, в законодательстве Республики Узбекистан имеется поощрительная норма, дающая возможность освобождения от уголовной ответственности и посредника во взяточничестве. Согласно ст. 212 УК Республики Узбекистан, лицо, выполнявшее посреднические функции во взяточничестве, освобождается от ответственности, если оно в течение тридцати суток после совершения преступных действий добровольно

заявило о случившемся, чистосердечно раскаялось и активно способствовало раскрытию преступления¹⁰.

Особый интерес вызывает поощрительная норма, установленная в УК Латвии. Статья 324 УК Латвии посвящена освобождению взяточдателя и посредника во взяточничестве от уголовной ответственности. В соответствии с ч. 1 ст. 324, лицо, давшее взятку, может быть освобождено от уголовной ответственности, если в отношении этого лица имело место вымогательство взятки, или если оно после дачи взятки добровольно сообщило о происшедшем и активно способствовало раскрытию или расследованию преступления¹¹. В данной норме в отдельности установлено основание освобождения от уголовной ответственности взяточдателя, если в отношении него имело место вымогательство взятки, и в отдельности установлено основание освобождения от уголовной ответственности при добровольном сообщении о преступлении. Также, в части 3 указанной нормы установлена поощрительная норма об освобождении от уголовной ответственности посредника во взяточничестве, в соответствии с которой, посредник или пособник во взяточничестве могут быть освобождены от уголовной ответственности, если он после совершения преступных действий добровольно сообщает о происшедшем и активно способствует раскрытию или расследованию преступления. По содержанию данные нормы практически во всем аналогичны с нормами, установленными в УК РФ. Считаю необходимым выделить то существенное различие данной поощрительной нормы, которое выражается в том, что в УК Латвии установлена диспозитивная поощрительная норма, которая дает возможность выбора правоохранительным органам при принятии решения об освобождении лица от уголовной ответственности, даже при наличии такого основания, как вымогательство взятки. Данная норма подверглась изменению 13 декабря 2012 года. До

⁹ См.: Уголовный Кодекс Республики Узбекистан. [Электронный ресурс]: URL: http://fmc.uz/legisl.php?id=k_ug_33 (дата обращения: 31.05.2019)

¹⁰ См.: Там же.

¹¹ См.: Уголовный Кодекс Латвии. [Электронный ресурс]: URL: http://www.pravo.lv/likumi/07_uz.html (дата обращения: 31.05.2019)

внесения изменений, в УК Латвии содержалась императивная норма об освобождении взяточдателя, посредника во взяточничестве и пособника от уголовной ответственности на основании вымогательства взятки либо добровольного сообщения о совершенном преступлении.

Часть 2 ст. 324 УК Латвии дает определение понятия вымогательства взятки. Согласно указанной норме, под вымогательством взятки понимается требование взятки для принятия законного решения либо требование взятки, связанное с угрозой причинить вред законным интересам лица. Как было отмечено выше, поощрительные нормы вначале носили императивный характер. В 2013 году данная норма подверглась изменениям, согласно которым, жертвы вымогательства и лица, добровольно заявившие о совершенном преступлении, не будут автоматически освобождаться от уголовной ответственности, а лишь при наличии всех условий, указанных в ст. 324 УК Латвии. Также было предусмотрено дополнительной условие освобождения от уголовной ответственности – активное содействие раскрытию или расследованию преступления.

Основанием для принятия изменений в указанную норму послужили рекомендации международных организаций, в частности, Организации экономического сотрудничества и развития (ОЭСР), которая в Отчете об имплементации Конвенции ОЭСР по борьбе со взяточничеством в Латвии указала, что многие лица могут необоснованно ссылаться на наличие вымогательства взятки со стороны должностных лиц и тем самым освобождаться от уголовной ответственности. Прокуроры и следователи должны учитывать все обстоятельства при принятии решения об освобождении лица от уголовной ответственности на основании вымогательства взятки или добровольного сообщения. Факторы, которые должны учитываться, включают в себя мотивы добровольного заявления, выгоду, полученную от преступления, протя-

женность заявления и др. Постановление об освобождении лица от уголовной ответственности должно быть пересмотрено прокурором, а в случае принятия его прокурором – вышестоящим прокурором¹².

В 2014 году Бюро по предотвращению и борьбе с коррупцией Латвии (KNAB) выпустило руководящие принципы для следователей, чтобы обеспечить последовательное применение вышеуказанного положения. Данные руководящие принципы требуют от следователей учитывать конкретные факторы, такие как то, предоставил ли взяточдатель информацию, неизвестную следователям, было ли получение такой информации иным способом сложным либо невозможным, мотивы участия и др. Не существует такого руководства для прокуроров или судов, которые также правомочны освобождать лицо от уголовной ответственности¹³.

Статья 227 уголовного кодекса Литовской Республики содержит поощрительную норму об освобождении взяточдателя от уголовной ответственности, согласно которой, лицо освобождается от уголовной ответственности за дачу взятки, если у него потребовали или его спровоцировали дать взятку, и он, предлагая, обещая дать или давая взятку, как можно скорее, но в любом случае до признания его подозреваемым, уведомляет об этом правоохранительные органы, либо в случаях, когда он обещает дать или дает взятку, когда правоохранительным органам известно об этом. Трактовка данной поощрительной нормы имеет сходства с трактовкой, данной армянским законодателем. Считаем, что наличие таких оценочных понятий, как «как можно скорее сообщило правоохранительным органам о даче взятки», может привести к неопределенности в правоприменительной практике применения данного института.

Что касается поощрительных норм рассматриваемого института, схожих с нормой, установленной в УК РА, то к таковым можно

¹² Phase 1 Report on Implementing the OECD Anti-Bribery Convention in Latvia. June 2014. - С. 17 [Электронный ресурс]: URL: <https://www.oecd.org/daf/anti-bribery/LatviaPhase1ReportEN.pdf> (дата обращения: 31.05.2019)

¹³ Phase 2 Report on Implementing the OECD Anti-Bribery Convention in Latvia. October 2015. - С. 46-47 [Электронный ресурс]: URL: <http://www.oecd.org/daf/anti-bribery/Latvia-Phase-2> (дата обращения: 31.05.2019)

отнести также норму, установленную в ст. 426 УК Испании. В соответствии с данной статьей, освобождается от наказания за взяточничество частное лицо, которое, соглашаясь с просьбой о подарке или другой компенсации, сделанной должностным лицом или государственным служащим, сообщает об этом деянии должностному лицу, ответственному за расследование, до начала соответствующего производства, если со дня деяния прошло не более двух месяцев¹⁴. То есть, в УК Испании, как и в УК Армении, установлено одно основание освобождения взяточдателя от уголовной ответственности, имеющее место при наличии следующих условий:

- имело место вымогательство взятки;
- лицо добровольно заявило о случившемся должностному лицу, ответственному за расследование;
- заявление было сделано до начала расследования;
- лицо сообщило об этом не позднее двух месяцев с момента совершения деяния.

Данная норма имеет схожие черты с нормой, установленной в УК РА. УК Испании содержит более гуманные условия освобождения взяточдателя от уголовной ответственности, такие

как, например, двухмесячный срок для добровольного заявления о совершенном преступлении.

Из сравнительно-правового исследования законодательного регулирования добровольного сообщения о даче взятки и посредничестве во взяточничестве в некоторых зарубежных странах, как поощрительной нормы об освобождении взяточдателя и посредника во взяточничестве от уголовной ответственности, автор пришел к такому выводу, что ни одна из всех тех стран, содержащих в уголовном законодательстве данную поощрительную норму, не устанавливает такое количество дополнительных условий освобождения взяточдателя от уголовной ответственности, как Республика Армения. Несмотря на то, что уровень коррупции в указанных странах намного ниже, и во многих странах коррупция носит эпизодичный характер, в то время как в Республике Армения коррупция носит системный характер, ни одна из указанных стран, при соблюдении рекомендаций со стороны международных организаций, при имплементации международных актов против коррупции не создала стольких препятствий для применения данной поощрительной нормы.



¹⁴ См.: Уголовный Кодекс Испании. [Электронный ресурс]: URL: [Электронный ресурс]: URL: <https://wipolex.wipo.int/en/text/415252> (дата обращения: 31.05.2019)

ԳՈՇԱՐ ԱԴՈՆՑ

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՓԸ՝ ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Անմեղության կանխավարկածը քրեական արդարադատության կարևորագույն սկզբունքներից մեկն է: Դա քրեադատավարական երաշխիքների բարդ համակցություն է, որի տարրերը սերտորեն փոխկապակցված են: Անմեղության կանխավարկածը հոշակված է ՀՀ Սահմանադրությամբ, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերում և կոնկրետացված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որոնցից բխում է, որ անմեղության կանխավարկածի հիմնական բաղադրիչները երեքն են.

1. անձը հանցագործության մեջ մեղավոր կարող է ճանաչվել բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճռով (անձի դատավարական կարգավիճակի կանոն և երաշխիք),
2. անձը պարտավոր չէ ապացուցելու իր անմեղությունը, մեղադրանքի ապացուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները (ապացուցման բեռի կանոն),
3. չփարատված կասկածները մեկնաբանվում են hoqուտ մեղադրյալի (ապացույցների գնահատման կանոն):

Ապացուցման բեռի կանոնն անմեղության կանխավարկածի հիմնաքարերից մեկն է: Ինչպես իրավացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ՝ դա խիստ գործնական նշանակություն ունի. եթե անմեղության կանխավարկածի առաջին կանոնը երաշխավորում է, որ անձն անմեղ է, քանի դեռ բացառիկ արդարադատական ակտով հակառակը չի փաստվել, և պաշտպանում անձին նրա մեղավորու-

թյան մասին կանխակալ դիրքորոշումից ու հասարակական ընկալումից, ապա հաջորդ երկու կանոնը կազմում են ապացուցման գործընթացի հիմքը և ուղենշում, թե ինչպես կարող է անմեղության կանխավարկածը հաղթահարվել՝ անձի մեղավորությունն ապացուցվել¹:

Ապացուցման բեռի կանոնից բխում է, որ մեղադրանքը հիմնավորելու պարտականությունն ուղղակիորեն դրված է քրեական հետապնդման մարմինների վրա, իսկ մեղադրյալը դա հերքելու պարտականություն չունի: Մեղադրյալն իրավունք ունի, բայց պարտավոր չէ ապացուցելու իր անմեղությունը, ուստի սեփական անմեղության մասին վկայող ապացույցներ չներկայացնելը չի կարող օգտագործվել նրա դեմ և չի կարող բարձրացնել մեղադրական ապացույցների կշիռը: Այսինքն՝ մեղադրյալի կողմից իր անմեղությունը հաստատող ապացույցներ չներկայացնելն ինքնին չի հաստատում վերջինիս մեղավորությունը²:

Ասվածից ակնհայտ է, որ անմեղության կանխավարկածի գործնական երաշխիքային ասպեկտը, ի թիվս այլնի, արտահայտվում է ապացուցման բեռի վերաբերյալ կանոնում, որը, հանդիսանալով անձի կարգավիճակի կանոնի շարունակությունը, ազատում է նրան իր անմեղությունը հաստատելու պարտականությունից, ինչը դնում հակառակ՝ մեղադրանքի կողմի վրա: Անձն այդ կերպ երաշխավորվում է մեղավորության կանխավարկածից ու դա հերքելու, հակառակը հիմնավորելու բեռից:

Անմեղության կանխավարկածի այսպիսի բացարձակությունը խորհրդային քրեական դա-

¹ Գ.Բաղդասարյան. Անմեղության կանխավարկածը որպես ապացույցների բավարարության չափանիշ. Երևան, Պետություն և իրավունք. 2018, թիվ 3-4 (81-82), էջ 4:

² М.С.Строгович. Материальная истина и судебные доказательства в советском уголовном процессе. Москва, Ленинград, 1955, Издательство Академии наук СССР. С. 217-226.

տավարությանը բնորոշ մոտեցում էր, որը ժամանակի ընթացքում փոխվեց, հատկապես՝ եվրոպական իրավունքի ազդեցությամբ: Ինչպես ակնհայտ է Եվրոպական դատարանի իրավունքից՝ մեղադրյալը կամ կասկածյալն ազատված են իրենց անմեղությունն ապացուցելու պարտականությունից (*Թելֆներն ընդդեմ Ավստրիայի*³), սակայն այս իրավունքը չունի բացարձակ բնույթ, և ապացուցման պարտականությունը բացառիկ դեպքերում կարող է դրվել պաշտպանության կողմի վրա: Այդպիսի մոտեցում է արտահայտված հատկապես այն հանցագործությունների գործերով, որոնց դեմ պայքարը հռչակված է որպես համընդհանուր առաջնահերթություն: Դրա ապացույցն ապօրինի հարստացման գործերով ապացուցման բեռը մեղադրյալի վրա դնելու մասին Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 20-րդ հոդվածի դրույթն⁴ ու *Ֆամ Հոանգի* գործն է, որով դիմումատուի ուղեբեռում թմրամիջոցի առկայությունը բավարար էր դիտվել փաստելու, որ թմրամիջոցը հենց դիմումատուին էր պատկանում: Բացի այդ՝ Եվրոպական դատարանը համաձայնում է, որ դատարանները փաստերը գնահատելիս կարող են հետևությունների հանգել նաև մեղադրանքի կապակցությամբ մեղադրյալի խելամիտ բացատրությունների բացակայության հիման վրա՝ փաստելով միաժամանակ, որ այդ հետևությունները պետք է լինեն ողջամիտ:

Ապացուցման բեռի բացարձակությունն արտահայտված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերում, ինչպես նաև 65-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ «Մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք (...):»:

Միաժամանակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներն ու դրանց մեկնաբանությունները ոչ բոլոր դեպքերում են արտահայտում մեղադրյալի՝ իր ան-

մեղությունն ապացուցելու պարտականությունից ազատ լինելու անվերապահությունը և հիմքեր տալիս պնդելու, որ առանձին դեպքերում վերջինս առնվազն անուղակիորեն կրում է իր անմեղությունն ապացուցելու պարտականությունն ու դա չկատարելու բացասական հետևանքները: Այդպիսի բովանդակություն ունեն վերաքննության սահմանների վերաբերյալ նորմերն ու դրանց դատական մեկնաբանությունները:

Վերաքննության՝ որպես դատական վերանայման համակարգի բաղադրիչի նպատակը ստորադաս դատարանի թույլ տված դատական սխալներն ուղղելն է: Ինչպես նշվում է *Տիգրան Առաքելյանի և մյուսների* վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ՝ «Վերաքննիչ վերանայումն ունի օբյեկտիվ-իրավական և սուբյեկտիվ-իրավական հիմքեր և մարդու իրավունքների սահմանափակումների իրավաչափությունն ապահովելու կարևոր երաշխիք է: Վերաքննիչ վարույթում դատական սխալների ուղղումն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հստակ որոշված սահմաններում, որոնք որոշում են նաև վերաքննիչ դատարանում փաստարկներ և դրանք հիմնավորելու համար նոր ապացույցներ ներկայացնելու դատավարության մասնակիցների, այդ թվում՝ ամբաստանյալի հնարավորությունը⁵»:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի համաձայն.

«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Բացառությամբ նույն օրենսգրքի 45.1 գլխի կանոններով քննված գործերի՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

3.(...):»:

³ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները՝ <https://hudoc.echr.coe.int> կայքում.

⁴ Ս. Դիրանդյան. Անմեղության կանխավարկածը և ապացուցման պարտականությունը քրեական դատավարությունում. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2017, էջ 434-444:

⁵ Տիգրան Առաքելյանի և մյուսների վերաբերյալ ԵԿԴ/0225/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի մայիսի 8-ի որոշում, կետ 21:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի համաձայն՝

«3. Բացառիկ դեպքերում կողմերն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնելու նոր նյութեր կամ միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, *Տիգրան Առաքելյանի և մյուսների* վերաբերյալ գործով որոշմամբ անդրադառնալով վերաքննության սահմաններին, մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությամբ արձանագրել է, որ. «Վերաքննիչ վարույթի հիմքում ընկած է սահմանափակ վերանայման հայեցակարգը, ինչը թույլ չի տալիս վերաքննիչ դատարանին իրականացնել գործի ամբողջ ծավալով քննություն. վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միայն վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում, իսկ նոր ապացույցների հետազոտում կարող է իրականացնել միայն կողմի միջնորդության հիման վրա և բացառապես այն դեպքում, երբ միջնորդություն հարուցած կողմը հիմնավորում է, որ օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին կամ ստորադաս դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ ներկայացված միջնորդությունն անհիմն մերժվել է: Այլ կերպ ասած՝ առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների վերաբերյալ եզրակացություն անելու նպատակով վերաքննիչ դատարանը գործի դատաքննությունը նոր ապացույցներով լրացնելու հարցում ունի սահմանափակ հայեցողական մոտեցում դրսևորելու հնարավորություն, ինչն ամբողջապես բխում է վերաքննիչ վարույթի առանձնահատկություններից:

Վճռաբեկ դատարանը համարում է, որ դատական ակտի սահմանափակ վերանայման հայեցակարգը՝ ընդհանրապես, և Վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցների հետազոտման հարցում սահմանափակ հայեցողական մոտեցում դրսևորելու հնարավորությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն շահագրգիռ անձի՝ արդար դատական քննությունն ապահովող իրավական արժեքների հետ: Վերաքննիչ վարույթի ընթացքում դատաքննությունը նոր ապացույցներով լրացնելու հնարավորությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս, սակայն, հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել արդար դատական քննության իրավունքի չեզոքացմանը: Ուստի խնդրո առարկա հարցի կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ շահագրգիռ անձը չզրկվի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից⁶:

Մեջբերված իրավական դիրքորոշումներից բխում է, որ վերաքննության սահմանների կանոնները, սահմանափակելով վերաքննիչ դատարանում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը, չեն կարող չեզոքացնել կամ նվազեցնել արդարադատության հիմնարար դրույթների գործողությունը: Չնայած դրան՝ վերաքննիչ դատարանում նոր ապացույցներ հետազոտելու հնարավորության մասին հենց Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները կասկածի տակ են դնում արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի կենսունակությունը:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը, *Գևորգ Հախնազարյանի* վերաբերյալ գործով որոշմամբ անդրադառնալով վերաքննիչ դատարանում քրեական գործի քննությունը վերաքննու-

⁶ Տիգրան Առաքելյանի և մյուսների վերաբերյալ թիվ ԵԿԴ/0225/01/11 քրեական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի մայիսի 8-ի որոշում, կետեր 21-22:

թյան կամ վճռաբեկության կանոններով իրականացնելու խնդրին, իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) լրացուցիչ ներկայացվող ապացույցներով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բողոքը կարող է քննել այն դեպքերում, երբ համոզվում է, որ բողոքաբերն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել այդ ապացույցները ներկայացնելու մինչև վերաքննիչ դատարանում գործի քննությունը, այսինքն՝ գործով մինչդատական վարույթի և առաջին ատյանի դատարանում վարույթի ընթացքում»:

Լրացուցիչ ապացույցների ներկայացման կամ հետազոտման օբյեկտիվ հիմքերի բացակայության դեպքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու է գործը քննել վճռաբեկության, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածով սահմանված կարգով:

Վերաքննիչ դատարանը կարող է գործը քննել Վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով միայն այն դեպքում, երբ՝

ա) դատական նիստ նշանակելու մասին որոշման մեջ նշել է այդ մասին, և հիշյալ որոշումը պատշաճ կարգով ուղարկվել է դատավարության մասնակիցներին,

բ) վերաքննիչ բողոք կամ բողոքի պատասխան ներկայացրած կողմը նոր նյութեր չի ներկայացրել և չի միջնորդել հավաքելու կամ հետազոտելու նոր ապացույցներ, կամ վերաքննիչ դատարանն այն համոզման է եկել, որ կողմը, միջնորդելով գործին կցել նոր նյութեր, կամ դատարան կանչել իր նշած վկային կամ փորձագետին, կամ նշանակել փորձաքննություն, չի հիմնավորել, որ առաջին ատյանի դատարանում օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու վերոնշյալ գործողությունները, կամ որ դրանց կատարման վերաբերյալ միջնորդություններն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել են անհիմն⁷:

Ըստն Պեպրոսյանի վերաբերյալ գործով որոշմամբ վերահաստատելով և զարգացնելով մեջբերված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանի կողմից գործի քննության վճռաբեկության կարգից վերաքննության կարգին անցում կատարելու համար անհրաժեշտ պայմանն այն է, որ նոր նյութ, ինչպես նաև նոր ապացույց հավաքելու կամ հետազոտելու միջնորդությունն առաջին ատյանի դատարան կողմի չներկայացնելը պայմանավորված լինի օբյեկտիվ, անձի կամքից անկախ պատճառներով: Այլ կերպ ասած՝ կողմը պետք է մատնանշի այդպիսիք առաջին ատյանի դատարան չներկայացնելու պատճառները, ընդ որում՝ հիմնավորի, որ դրանք առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում անարգել կամ ողջամիտ ջանքերի գործադրման պարագայում էլ չէին կարող ներկայացվել:

Դա, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ՝

- առաջին ատյանի դատարանն անհիմն հրաժարվել է նոր նյութն ընդունելուց և հետազոտելուց կամ անհիմն մերժել կողմի՝ նոր ապացույց հավաքելու միջնորդությունը,
- առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում այդ նյութն օբյեկտիվորեն առկա է եղել, սակայն դա ներկայացնելու որևէ հնարավորություն անձը չի ունեցել,
- առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում այդ նյութն օբյեկտիվորեն առկա չի եղել և առաջացել է գործի քննության ավարտից հետո: Ընդ որում՝ առաջին ատյանի դատարանում գործի քննության ավարտից հետո առաջացած նոր նյութի ընդունելիության հարցը լուծելիս Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առնի այն, թե արդյոք անձի կողմից համապատասխան կամահայտնություն դրսևորվելու և ջանքեր գործադրվելու դեպքում այդ նյութն օբյեկտիվորեն չէր կարող ի հայտ գալ ավելի վաղ: Եթե դա օբյեկտիվորեն չէր կարող ի հայտ գալ ավելի վաղ (որևէ կերպ կախված չէր ներկայացնող անձի կամահայտնությունից և ջանքերից), ապա Վերաքննիչ դատարանը պետք է

⁷ Գևորգ Հախնազարյանի վերաբերյալ թիվ ԵՔԲԴ/0219/01/18 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշում, կետեր 13 և 19:

ընդունի այդ նյութը: Եթե դա կարող էր ի հայտ գալ ավելի վաղ (ավելի վաղ ի հայտ գալը կախված էր ներկայացնող անձի կամահայտնությունից և ջանքերից), ապա Վերաքննիչ դատարանը չպետք է ընդունի այդ նյութը:

Այսպիսով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը չի կարող գործի քննության վճռաբեկության կարգից անցում կատարել վերաքննության կարգին, եթե պարզվում է, որ կողմն առաջին ատյանի դատարանում դրսևորել է ոչ բարեխիղճ վարքագիծ և, ունենալով իրական հնարավորություն՝ չի ներկայացրել համապատասխան նյութը կամ հանդես չի ելել համապատասխան միջնորդությամբ՝ հետապնդելով ոչ իրավաչափ, օրինակ՝ գործի քննությունը ձգձգելու նպատակ: Ուստի գործի քննության կարգը փոխելիս Վերաքննիչ դատարանը պետք է նախ և առաջ պարզի վերոգրյալ գործողություններն առաջին ատյանի դատարանում կատարված չլինելու պատճառները, այդ պատճառներին տա իրավական գնահատական, գնահատի դրանց՝ հարգելի կամ ոչ հարգելի լինելը (...)⁸:

Մեջբերված որոշումների վերլուծությունից ակնհայտ է, որ վերաքննիչ դատարանում նոր ապացույցներ ներկայացնելու կողմի իրավունքն ուղղակիորեն կախված է այդ ապացույցն առաջին ատյանի դատարան ներկայացնելու նրա օբյեկտիվ հնարավորությունից և դրան ուղղված՝ նրա գործողություններից: Ավելի պարզ՝ կողմը, այդ թվում՝ ամբաստանյալը, չի կարող վերաքննիչ դատարան նոր ապացույց ներկայացնել, միջնորդել հարցաքննելու վկային կամ նշանակել փորձաքննություն, եթե ունեցել է դրանք ստորադաս դատարանում կատարելու հնարավորություն և չի կատարել: Ավելին՝ դա առաջին ատյանի դատարանում կատարելու նրա օբյեկտիվ հնարավորության բացակայությունը գնահատելու չափանիշներից մեկն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում նրա վարքագիծն է՝ այդ ապացույցի գոյությունը պարզելու ուղղությամբ ջանքեր գործադրած լինելը կամ չլինելը:

Նախ՝ պետք է նշել, որ նոր նյութ ներկա-

յացնելու, ինչպես նաև նոր ապացույց հավաքելու կամ հետազոտելու միջնորդությունը վերաքննիչ դատարան ներկայացնելու հնարավորության՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թվարկված սահմանափակ դեպքերը հաշվի չեն առնում, որ վերաքննիչ բողոքի պատասխանը հիմնավորելու համար ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունն ածանցյալ է այն բողոքի փաստարկներից, որի դեմ ներկայացվում է պատասխանը: Այսինքն՝ դատավարության կողմի՝ վերաքննիչ բողոքի պատասխանը հիմնավորելու նպատակով նոր ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ միայն վերաքննիչ բողոք և դրանում համապատասխան փաստարկ ներկայացվելուց հետո, իսկ նախքան այդ փաստարկը ներկայացվելը՝ պատասխանի հեղինակը դրան հակափաստարկելու, ուստի և՛ այդ նպատակով նոր ապացույց ներկայացնելու հիմք, պատճառ և անհրաժեշտություն կարող էր և չունենալ: Հետևաբար՝ վերաքննիչ բողոքի պատասխանը հիմնավորելու, բողոքով առաջին անգամ առաջ քաշված փաստարկը հերքելու համար նոր ապացույցներ ներկայացնելու՝ կողմի իրավունքը չի կարող կախման մեջ դրվել այն հանգամանքից, թե վերջինս առաջին ատյանի դատարանում իմացել է այդ ապացույցի գոյության մասին, դա հայտնաբերելու և ներկայացնելու օբյեկտիվ հնարավորություն ունեցել կամ այդ ուղղությամբ ջանքեր գործադրել է, թե՛ ոչ:

Բացի այդ՝ այնքանով, որքանով վերաքննիչ դատարան նոր ապացույց ներկայացնելու հնարավորության սահմանափակումները վերաբերում են նաև իր անմեղությունը հիմնավորելու համար վերաքննիչ բողոք ներկայացրած ամբաստանյալին կամ նրա պաշտպանին, հետևաբար՝ դրանք չեն համապատասխանում անմեղության կանխավարկածի սկզբունքին, ավելի կոնկրետ՝ ապացուցման բեռի վերաբերյալ կանոնին:

Ինդիքն այն է, որ ամբաստանյալն իր անմեղությունն ապացուցելու և այդ նպատակով որևէ ապացույց կամ դրա ձեռք բերելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու պարտականություն չունի քրեական դատավարության

⁸ Լևոն Պետրոսյանի վերաբերյալ թիվ ՍԴ/0137/01/14 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի մարտի 30-ի որոշում, կետեր 24-25:

որևէ փուլում: Անմեղության կանխավարկածի այդ կանոնը փուլային տարբերակում չի ենթադրում: Մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե այդ մասին վկայող ապացույց օբյեկտիվորեն կամ, վերջինս գիտե՞ր դրա մասին, կամ ներկայացնելու որևէ հնարավորություն ունե՞ր, թե՞ ոչ: Այնինչ՝ վերաքննիչ դատարանում իր անմեղությունը հիմնավորելու համար նոր ապացույց ներկայացնելու՝ ամբաստանյալի իրավունքը պայմանավորվում է նախորդ փուլում ներկայացնելու օբյեկտիվ անհնարինությամբ:

Ավելի հստակ՝ պաշտպանության կողմի, դիցուք՝ ամբաստանյալի և նրա պաշտպանի վրա չդնելով քրեական դատավարության մինչդատական փուլերում և առաջին ատյանի դատարանում ամբաստանյալի անմեղությունն ապացուցելու և այդ նպատակով ապացույցներ ներկայացնելու պարտականություն՝ օրենսդիրը վերջիններիս պարտավորեցնում է արդեն հաջորդ փուլում՝ վերաքննիչ վարույթում, պատճառաբանել նախորդ փուլերում ապացույցներ չներկայացնելը, հիմնավորել դրանք ներկայացնելու անհնարինությունը, ավելին՝ այդպիսիք վերաքննիչ դատարան ներկայացնելը համարում է անհնարին հենց այն պատճառով, որ վերջինս առաջին ատյանի դատարանում դա չի ներկայացրել: Այլ կերպ ասած՝ ամբաստանյալը զրկվում է վերաքննիչ դատարանում նոր նյութեր ու ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից միայն այն պատճառով, որ նախորդ փուլերում միջոցներ չի ձեռնարկել սեփական անմեղությունն ապացուցելու ուղղությամբ, ինչի պարտականությունը չունե՞ր՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի ուժով:

Այսպիսի բացարձակ իրավակարգավորումներն ու դրանց խիստ մեկնաբանությունները, ամբաստանյալի կողմից իր անմեղության վերաբերյալ ապացույցն առաջին ատյանի դատարան չներկայացնելու պատճառով վերաքննիչ դատարան ներկայացնելը համարելով անհնարին և այդ կերպ ուղղակիորեն բացասական հետևանքներ առաջացնելով իր անմեղությունն ապացուցելու ուղղությամբ ջանքեր չգործադրած ամբաստանյալի համար՝ անուղղակիորեն իր անմեղությունն ապացուցելու պարտա-

կանություն են դնում նրա վրա, ինչն անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում է:

Ավելին՝ այդպիսի կարգավորումը չի երաշխավորում նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքը, քանի որ բացասական հետևանքներ է առաջացնում օրենքով չարգելված բոլոր միջոցներով և պաշտպանական որոշակի մարտավարությամբ իր պաշտպանությունն իրականացրած մեղադրյալի համար:

Համաձայնելով, որ վերաքննության սահմաններն ու վերաքննիչ վարույթում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունների սահմանափակումները պայմանավորված են վերաքննության տեսակով և ուղղված են իրավաչափ նպատակի, այն է՝ բացառել դատական վերանայման ավելի լայն ծավալը գործի ըստ էության քննության համեմատությամբ, պետք է նկատել, որ դրանց պատճառով առաջացող հետևանքները դուրս են հետապնդվող իրավաչափ նպատակից և հանգեցնում են անձի հիմնարար իրավունքի սահմանափակման:

Միաժամանակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավունքի վերլուծությունը վկայում է, որ վերաքննության սահմանների մեկնաբանություններն այդուհանդերձ չեն հանգում դրանց բացարձակության, և սահմանված են դեպքեր, երբ վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալու վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Մասնավորապես՝ *Մ.Էլրյանի և այլոց* վերաբերյալ գործով կայացված որոշման մեջ քննարկման առարկա դարձնելով վճռաբեկ վերանայման սահմանները՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրելով «բոլոր դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրն արտահայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանորմներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ ասած՝ եթե վերադաս դատարանը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա իրավասու է ուղղել այդ դատական սխալը՝ կաշ-

կանդիված չլինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ և 415-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները չունեն և չեն կարող ունենալ բացարձակ բնույթ, քանի որ կողմերի իրավական հետևողականության ապահովման իրավական շահին հակակշիռ իրավական շահը՝ դատական սխալների ուղղումը, որոշակի պայմաններում կարող է էապես մեծարժեք լինել՝ որպես գերակա հանրային շահ: Ուստի հիմնարար բնույթ ունեցող դատական սխալների հայտնաբերման պարագայում Վճռաբեկ դատարանն իրավասու է դուրս գալու բողոքարկման սահմաններից և վերացնելու այդ դատական սխալները (...)⁹»:

Վերահաստատելով և զարգացնելով վկայակոչված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն *Արթուր Խուրշուդյանի* վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրում է, որ վերոգրյալը՝ «(...) վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններն ամրագրող իրավանորմերին: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածում ամրագրված սահմանափակումները բացարձակ բնույթ չունեն, և դրանք պետք է դիտարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ իրավանորմերի համատեքստում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից միայն այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս), կամ առկա է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր)¹⁰»:

Փաստորեն, Վճռաբեկ դատարանը, կարևորելով հանդերձ դատական վերանայման սահմանների նշանակությունը, դրան հակակշռող շահի ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հնարավոր է համարում այդ սահմանների շրջանցումը՝ դրա հիմք համարելով, ի թիվս դատավճռի անվերապահ բեկանման այլ դեպքերի, այն դեպքը, երբ գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը:

Վերաքննության սահմանների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի մեջբերված իրավամեկնաբանությունները, ըստ էության, մի կողմից՝ բացարձակացնելով վերաքննիչ վարույթում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորության սահմանափակումները, իսկ մյուս կողմից՝ դատական վերանայման ընթացակարգի պահպանմանը հակակշռող հանրային շահի դեպքում հնարավոր համարելով շրջանցել վերաքննության սահմանները, հայեցակարգային առումով հակասում են միմյանց: Այդպիսով՝ այդ մեկնաբանությունները, մի կողմից՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությունը, վերաքննության սահմաններից անկախ, անվերապահ հիմք համարելով դատավճռի բեկանման համար, մյուս կողմից ամբաստանյալին զրկում են քրեական վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությունը հաստատելու համար նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից այն պատճառաբանությամբ, որ նա այդ ապացույցն առաջին ատյանի դատարանում չի ներկայացրել: Այս մոտեցումը սահմանափակում է ոչ միայն անմեղության կանխավարկածի սկզբունքը, այլև անտրամաբանական հակասություն առաջացնում վերաքննության սահմանների վերաբերյալ իրավակարգավորումներում՝ հանգեցնելով դատական վերանայման համակարգի նպատակների չեզոքացման:

⁹ Մխիթար Էլոյանի և այլոց վերաբերյալ թիվ ԵԿԴ/0211/01/10 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի որոշում, կետեր 13 և 14:

¹⁰ Արթուր Խուրշուդյանի վերաբերյալ ԵԱԲԴ/0065/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի որոշում, կետ 15:

Հետևաբար՝ վերաքննիչ դատարանում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը սահմանող դատավարական նորմերը պետք է մեկնաբանվեն դատական վերանայման սահմանները շրջանցելու դատավարական հնարավորությունների համատեքստում և այն տրամաբանությամբ, որը թույլ կտա ամբաստանյալին քրեական հետապնդումը բացառող հանգամանքը և իր անմեղությունը հաստատող ապացույցներ ներկայացնել վերաքննիչ դատարան՝ առաջին աստիճանի դատարանում դրանք ներկայացրած լինելու կամ այդպիսի հնարավորություն ունենալու հանգամանքից անկախ: Վերաքննիչ դատարան նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը չի կարող սահ-

մանափակվել նաև այն դեպքում, երբ նոր ապացույցը ներկայացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է բացառապես վերաքննիչ բողոքով՝ դրանում ներկայացված փաստարկը հերքելու համար:

Այսպիսի իրավակարգավորումը չի խախտի դատական տարբեր օղակների միջև գործառույթային կապը և անհարկի չի ընդլայնի վերաքննության սահմանները՝ միաժամանակ վերացնելով վերաքննիչ դատարանում իր անմեղությունն ապացուցելու ամբաստանյալի հնարավորության բացարձակ անընդունելի արգելքն ու դրա հետևանքով անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտումը:



ՆԵԼԼԻ ԱՇՐԱՖՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՏՈՒԺՈՂԻ ՇԵՏ ՆԱՇՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Անհրաժեշտ է տարբերակել տուժողի հետ հաշտության կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը և ինքնին հաշտեցումը: Հաշտեցումը, ինչպես արդեն բազմիցս նշել ենք, հիմք է դատավարական որոշում կայացնելու համար: Ընդ որում՝ հաշտեցումը կարող է հաշվի առնվել ոչ միայն քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս, այլև կոնկրետ քրեական գործը քննելիս դատարանը կարող է հաշվի առնել ՀՀ ՔՕ-ի 62-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք: Դրանով իսկ հաշտեցումը դուրս է մնում ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում շարադրված նորմի շրջանակից: Հենց միայն դրանից ելնելով՝ կարելի է պնդել հաշտեցման իրավական առանձնահատուկ բնույթի մասին, ինչը դուրս է մնում ՀՀ ՔՕ-ի 11-րդ գլխի սահմաններից, որում դիտարկվում է քրեական պատասխանատվությունից ազատելը: Ասվածից ելնելով՝ միանգամայն ակնհայտ է դառնում հաշտեցման ունիվերսալ բնույթը¹: Դրա հետ մեկտեղ՝ ակնհայտ է նաև այն, որ հաշտեցումը բավականին հանելուկային երևույթ է ինչպես քրեական իրավունքում, այնպես էլ քրեական դատավարությունում, որովհետև դրան օրենսդրական որևէ սահմանում չի տրվում: Օրենսդիրը հղում է անում հաշտեցմանը որպես ինքնըստինքյան ակնհայտ հասկացության, որը չի կարող առաջացնել ոչ մի հարց այն առնչությամբ, թե դրա ներքո ինչ պետք է հասկանալ: Այդուհանդերձ՝ դրա վերաբերյալ բազմաթիվ հարցեր են առաջանում թե՛ տեսության մեջ, թե՛ պրակտիկայում: Առաջինը հաշտեցումը որպես քրեական պատասխանատվություն

ից ազատելու հիմք ընդունելու հարցն է, ինչ գործողություններ պետք է կատարել, որպեսզի համարվի, որ հաշտությունը ձեռք է բերվել՝ հետևաբար և կիրառելով ՀՀ ՔՕ-ի 73 հոդվածը: Չէ՞ որ հաշտեցումը կարելի է դիտարկել և՛ որպես տուժողի կողմից հանցանք գործած անձի ներողությունն ընդունելու նշան, և՛ որպես գործողությունների համակարգ, որոնք կատարվել են այն նպատակով, որ տուժողը ների: Քրեական օրենքում այդ մասին պարզաբանումներ չկան: Այդուհանդերձ՝ դա կարևոր է, քանի որ հաշտեցումը, գործող քրեական օրենքի համաձայն, հիմք է, որը կիրառելով հնարավոր է դառնում կտրել «հանցագործություն-պատիժ» պատճառահետևանքային կապը: Այդ հիմքը թույլ է տալիս հանցագործությունը թողնել առանց պատժի: Առաջին հայացքից ակնհայտ է, որ դա արդարացի չէ, ուստի նման ընթացքը կարող է սոցիալական դժգոհություն առաջացնել: Բարոյականության ընդունված նորմերի համաձայն՝ հանցագործության համար միշտ պետք է նշանակվի պատիժ, քանի որ անպատժելիությունը հանգեցնում է ամենաթողության, ինչը հանցավոր գործունեության հիմքն է: Սակայն խնդիրն ավելի խորությամբ դիտարկելիս ակնհայտ է դառնում նաև այն, որ հանցանք գործած անձի՝ իր մեղքը գիտակցելը հոգեկան մեծ տառապանքներ է պատճառում այդ անձին, որոնք երբեմն գերազանցում են այն տառապանքները, որոնք պայմանավորված են քրեական պատժի նշանակմամբ ու պատիժը կրելով²: Ուստի միանգամայն ակնհայտ է, որ նման անձի նկատմամբ քրեական պատիժ սահմանելը կարող է ավելորդ լինել, անգամ վնասակար, քանի որ կարող է չարացնել նրան պե-

¹ Sten Кристи Н. Примирение или наказание? Евроремент Гулага // Досье на цензуру: Евроремент Гулага.– М., 2003, № 18 (23), էջ 7-20:
² Sten Досаева Г.С., Осадчая Н.Г. Цели наказания и цели освобождения от уголовной ответственности: проблемы достижения при применении института примирения с потерпевшим // Криминалистика: актуальные вопросы теории и практики. Сборник материалов третьего Всероссийского «круглого стола», 17-18 июня 2004 г.,– Ростов-на-Дону: РЮИ МВД России, 2004, էջ 339-344:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

տության և հասարակության դեմ: Այս առումով՝ հաշտեցումը հարկավոր է դիտել որպես միանգամայն որոշակի արդյունք, որին հասել է հանցանք գործած անձը՝ մեծ աշխատանք կատարելով իր արարքը վերախմաստավորելու և սեփական գործողությունների ու այլ մարդկանց գործողությունների գնահատականները վերանայելու ուղղությամբ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ անձը կորցրել է հասարակական վտանգավորությունը, քանի որ այլևս հանցագործություններ չի կատարի:

Այն որ օրենսդրությունում առկա չէ «հաշտեցում» հասկացությունը, կարելի համարել օրենսդիրի բացթողումը, որն ինչ-որ առումով նաև անփութություն է: Սակայն նման գնահատականն օրենսդիրի գործունեությանը վաղաժամ է, քանի որ նման իրավիճակ է առկա նաև այլ երկրների օրենսդրությունում: Ոչ մի երկրում, որտեղ հիշատակվում է հաշտեցումը, դրա սահմանումը տրված չէ: Դրանից կարելի է եզրակացնել, որ հաշտեցման օրենսդրական սահմանման բացակայությունը պատահական չէ, դա միանգամայն որոշակի նպատակադրում ունի: Դրանով ստեղծվում են պայմաններ համապատասխան դատավարական որոշումն ընդունող անձանց համար՝ ինքնուրույն մեկնաբանելու «հաշտեցում» հասկացությունը³: Կարելի է ենթադրել, թե դա հարկավոր է առաջացող բոլոր հնարավոր բազմազան իրավիճակները հաշվի առնելու և քննիչին, դատավորին ինչ-ինչ ձևականություններով չսահմանափակելու համար, որպեսզի նրանք գնահատեն համապատասխան իրավիճակը և լուծում տան քրեական պատասխանատվությունից ազատելու հարցին: Շատ հավանական է, որ այս նկատառումներն են ընկած եղել «հաշտեցում» հասկացությանն օրենսդրական ձևակերպում տալուց հրաժար-

վելու հիմքում: Սակայն օրենսդիրն առաջնորդվում է ոչ միայն դրանցով: Հաշտեցումը ոչ միայն կոնֆլիկտի կողմերի միջև ձեռք բերված միանգամայն որոշակի արդյունք է, այլև դրան հասնելու բուն գործընթացն է: Նշյալ գործընթացն առնչվում է արդարադատությանը, սակայն չի կարող դիտարկվել որպես քրեական դատավարության տարր⁴: Այստեղ առկա են մի շարք սկզբունքների գործողություններ, որոնք բնորոշ են հաշտարարությանը: Ամենից առաջ նկատի է առնվում վեճի մասնակիցների կամավորության և նախաձեռնողության սկզբունքը, որով նրանք ձգտում են դուրս գալ ստեղծված վիճակից: Պետությունը չպետք է ճնշում բանեցնի կատարված հանցագործության հետևանքով առաջացած կոնֆլիկտի մասնակիցների նկատմամբ, քանի որ դա սահմանափակում է նախաձեռնողականությունը: Բացի այդ՝ պետության մասնակցության դեպքում առկա է վտանգ, որ կողմերից մեկին կպարտադրվի դիրքորոշում, որը չի համապատասխանում նրա շահերին, ինչն իր հետքը կթողնի իրականացվող հաշտեցման և դրա հիման վրա ընդունվելիք փոխզիջման վրա: Նման հաշտեցումը կողմերը կարող են միանման չընդունել՝ որպես արդարացի արդյունք: Դրանից խուսափելու համար պետությունը հաշտարարական ընթացակարգերի իրականացումն ընձեռում է հենց վեճի մասնակիցներին⁵: Նրանք ինքնուրույն են ներկայացնում իրենց դիրքորոշումները հիմնավորող փաստարկներ, ինչն ապահովում է երկու կողմերին էլ ձեռնտու լիարժեք փոխզիջման որոնումները, ուստի և ընկալվում է որպես արդարացի փոխզիջում: Ներկայումս պետությունն անհրաժեշտ չի համարում անգամ սահմանել հաշտեցման գործընթացի ինչ-որ սկզբունքներ: Դա ամբողջովին վեճի կողմերի իրավասությունն է⁶: Պե-

³ Պետք է նշել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի 1-ին հոդվածում առաջին անգամ տրված է քրեական օրենսդրությունում օգտագործվող հիմնական հասկացությունների նշանակությունը, կարծում ենք՝ այդ շարքում կարելի է տալ նաև «հաշտեցման» բնորոշումը, որն էական նշանակություն կարող է ունենալ քրեական իրավունքում այս ինստիտուտի արդյունավետ կիրառության համար:

⁴ Sեն Ларионова А.А. Примирение сторон в уголовном процессе как способ разрешения криминального конфликта // Преступность в Западной Сибири: актуальные проблемы профилактики и расследования преступлений: Сборник статей по итогам всероссийской научно-практической конференции (28 февраля – 1 марта 2013 г.).– Тюмень: Изд-во Тюмен. гос. ун-та, 2013, էջ 384-387:

⁵ Sեն Кузбагарова Е.В. Институт примирения сторон в уголовном процессе как альтернативный способ разрешения криминальных конфликтов // Третейский суд.– С.– Пб., 2006, №5, էջ 157-160:

⁶ Sեն Жидков Э.В. Примирение сторон как средство разрешения социального конфликта в уголовном праве и процессе // Российский следователь.– М.: Юрист, 2003, №3, էջ 29-31:

տության համար կարևոր է միայն այն, որ ձեռք բերվի հաշտություն: Ըստ այդմ էլ հաշտեցման գործընթացը քրեական դատավարության գործընթաց չէ և նույնիսկ քրեական դատավարության տարր չէ, այլ գտնվում է քրեական դատավարության շրջանակից դուրս, և դա նույնպես պետք է դիտել որպես երաշխիք, որ հետագայում կապահովվի համապատասխան անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին արդար դատավարական որոշման ընդունումը: Այդ է պատճառը, որ ժամանակակից օրենսդրությունում չի սահմանվում, թե ինչ պետք է հասկանալ՝ հաշտեցում ասելով: Օրենսդիրը ստեղծել է պայմաններ, որ կոնֆլիկտի կողմերն իրենք գտնեն հաշտեցման ձևը, և որ ստեղծված իրավիճակում դա համապատասխանի արդարության մասին իրենց պատկերացումներին: Այս առումով պետք է ընդգծել հաշտեցման բուն գործընթացի ոչ քրեադատավարական բնույթը:

Այնուամենայնիվ, գիտակցումը, որ հաշտեցման գործընթացը քրեադատավարական բնույթ չունի, այսինքն՝ չի կարող դիտվել որպես առանձնահատուկ ընթացակարգ, որը կազմում է քրեական դատավարությունը, բնավ չի պատասխանում վերոնշյալ գործընթացում ձեռք բերված արդյունքի բնույթի վերաբերյալ հարցին: Ձեռք բերվող փոխզիջումը, անկասկած, դրվում է քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշման հիմքում, և հենց դրա ներքո է ենթադրվում հաշտեցումը, բայց օրենսդրության մեջ չկան ցուցումներ, թե ինչ ձև պետք է ընդունի նշյալ փոխզիջումը: ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում միայն ասվում է այն մասին, որ տուժողի հետ հաշտվելու դեպքում հանցանք գործած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից և պատժից: Այստեղ ոչինչ ասված չէ այն մասին, թե ինչ ձև պետք է ունենա հաշտեցումը: Սրանից հետևում է, որ օրենսդիրն այս հարցի լուծումը վերապահում է կատարված հանցագործության հետևանքով առաջացած վեճի կողմերին: Օրենսդիրի համար նշանակություն չունի՝ կձևակերպվի

հաշտեցումը գրավոր կամ բանավոր ձևով, կարևոր է միայն, որ ձեռք բերվի, և հնարավոր լինի օգտագործել կոնկրետ անձին քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու հարցը լուծելու համար: Գործնականում, որպես կանոն, հաշտեցման ձևին նշանակություն չի տրվում: Բավարար է համարվում այն, որ հանցանք գործած անձը և տուժողը հաստատում են հաշտություն կնքելու փաստը: Ուստի պրակտիկան չի ընթանում հաշտեցումը լրացուցիչ գրավոր ձևով ամրագրելու ճանապարհով⁷: Առավել ևս, որ դա կարող էր անտեղի ձևականացնել հաշտության հասնելու գործընթացը, իսկ դա անխուսափելիորեն կարտացոլվի ձեռք բերվելիք արդյունքի որակի վրա: Թեև բացառված չէ, որ հետագայում նման գրավոր համաձայնությունն անհրաժեշտ կլինի, քանի որ հաշտեցման գործընթացում վեճի կողմերը (ավելի հավանական է՝ տուժողը) կարող են ցանկանալ արձանագրել այդ հաշտության պայմանները, որոնք պետք է հաշվի առնվեն համապատասխան անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում կայացնելիս: Սակայն, հաշվի առնելով այն, որ ներկայումս նախատեսված չէ այդպիսի ձև, հաշտեցումը տեղի է ունենում բանավոր⁸:

Հաշտեցման հասնելու մասին նշվում է համապատասխան անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ ընդունված դատավարական որոշման մեջ: Այդպիսով ձեռք բերված հաշտեցումը հիմք է դառնում վերոնշյալ դատավարական որոշումը կայացնելու համար: Այս ամենը ևս ի ցույց է դնում հաշտեցման բնույթը, այն, որ դա քրեաիրավական չէ: Հարկ է նշել նաև այն, որ հաշտեցման ձևը՝ որպես համապատասխան գործընթացում ձեռք բերված արդյունք, չի սահմանվում նաև այն երկրների օրենսդրությամբ, որոնցում նախատեսված է քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն հաշտեցման կապակցությամբ:

Ինչպես արդեն քանիցս նշել ենք՝ հաշտեցումը հիմք է հանցանք գործած անձին քրեա-

⁷ Stiu Петрикова С.В. Вопросы реформирования законодательства об освобождении от уголовной ответственности в связи с деятельным раскаянием и примирением с потерпевшим // Lex Russica.– М.: Изд-во МГЮА, 2015, №6, էջ 48-57:

⁸ Stiu Палатурьян Г.Г. Прекращение уголовного дела в связи с примирением сторон – проблемы применения на практике // Юридические науки: проблемы и перспективы: материалы II Международной научной конференции (г. Пермь, январь 2014 г.).– Пермь: Меркурий, 2014, էջ 109-113:

կան պատասխանատվությունից ազատելու համար: Ուստի, որպեսզի հաշտեցման բնույթի մասին պատկերացումը լինի ավելի լիարժեք, հարկավոր է դիտարկել քրեական պատասխանատվությունից ազատելուն վերաբերող քրեական իրավունքի ինստիտուտը, և թե ինչ տեղ է գրավում դրանում քրեական պատասխանատվությունից ազատելու հաշտվելու պարագայում: Քրեական պատասխանատվությունից ազատումը կիրառվում է այն դեպքերում, երբ, հաշվի առնելով հանցագործության ու հանցանք գործած անձի բարձր հասարակական վտանգավորության բացակայությունը, վերանում է պատիժ կիրառելու իմաստը⁹: Քրեական պատասխանատվությունից ազատում կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր կատարել են ոչ մեծ ծանրության հանցագործություն: Այս ընդհանուր կանոնից բացառություն է ՀՀ ՔՕ-ի 75-րդ հոդվածի նորմը, որի համաձայն՝ ծանր և առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե կատարելուց հետո անցել է համապատասխանաբար տասը և տասնհինգ տարի: Ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ հանցանքների ծանրության աստիճանը վկայում է տվյալ անձի ուղղվելու հնարավորության կամ հասարակական վտանգավորությունը կորցնելու մասին, ուստի և նման պայմաններում պատիժ կիրառելն աննպատակահարմար է դառնում և նույնիսկ կարող է հանգեցնել անցանկալի արդյունքի՝ անձը կհիասթափվի արդարադատությունից և կվերածվի պետության ու արդարադատության երդվյալ թշնամու՝ ամեն ինչում տեսնելով միայն անարդարություն: Ընդ որում՝ պետք է նշել, որ հասարակական վտանգավորության աստիճանը միակ հիմքը չէ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում ընդունելու համար: Դա միշտ պետք է համակցվի մյուս հիմքերի հետ: ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում դա տուժողի հետ հաշտեցումն է: ՀՀ ՔՕ-ի 72-րդ հոդվածով նախատեսված դեպքում դա գործուն գղջումն է:

ՀՀ ՔՕ-ի 74-րդ հոդվածով նախատեսված դեպքում իրավիճակի փոփոխությունն է: Այս բոլոր դեպքերը ցույց են տալիս, որ քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելու համար միշտ անհրաժեշտ է նվազագույնը երկու պայման. առաջինը կատարված հանցագործության ոչ մեծ ծանրության լինելն է, երկրորդը՝ հանցավորի անձնավորությունն է, ավելի ստույգ՝ այն, որ նա հասարակական վտանգ չի ներկայացնում, ուստի նոր հանցանք չի գործի, և հասարակությունը նրանից զուշանալու կարիք չունի, ինչից ելնելով էլ կարելի է կիրառել քրեական պատասխանատվությունից ազատում: Նման պայման կարող է լինել նաև անձի՝ առաջին անգամ հանցագործություն կատարելը: Պետք է նշել, որ դա որպես պայման նախատեսված է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի 87-րդ հոդվածով: Այսինքն՝ այս պայմանը հիմք է և կարող է ունենալ բավականին հստակ սահմանված կանխարգելիչ նշանակություն:

Բացի այդ՝ դա նախատեսված է կոնկրետ, կատարված հանցագործությունից հետո ստեղծված իրադրության համար: Սակայն ոչ միայն պայմանները, այլև հիմքերն են նախատեսված միանգամայն որոշակի անձի և իրադրության համար, որոնք առաջացել են կատարված հանցագործությունից հետո, և որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ համապատասխան անձն այլևս հանցանք չի գործի: Նշյալ պայմանների ու հիմքերի առկայությունը հնարավոր է դարձնում կոնկրետ մեղավոր անձին ազատել քրեական պատասխանատվությունից:

ՀՀ ՔՕ-ի 48-րդ հոդվածի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Սակայն այդ նպատակներին կարելի է հասնել նաև առանց պատժի: Նման դեպքերում կարիք չկա պատիժ կիրառելու, քանի որ պետության ու հասարակության համար կարևոր նպատակներին կարելի է հասնել նաև առանց դրա: Այս առումով՝ համապատասխան հանցանքը գործած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից:

⁹ Shtu Стойко Н.Г. Стратегия примирения: восстановительная и общественная модели уголовного процесса // Петербургский юрист.– М.: Закон, 2014, №2, էջ 74-79:

նից: Ընդ որում՝ քրեական պատասխանատվությունից ազատելը պետք է դիտարկել որպես հնարավորություն, որը կարող է ստեղծվել միայն որոշակի պայմանների դեպքում: Անգամ համապատասխան նորմերով նախատեսված հիմքերի դեպքում կոնկրետ անձի նկատմամբ կարող է և չկիրառվել քրեական պատասխանատվությունից ազատում¹⁰: Քննիչը, դատախազը, դատարանը կարող են եզրակացնել, որ, թեև առկա են վերոնշյալ հիմքերը, սակայն կոնկրետ անձը չի հրաժարվել իր քրեական շարժառիթներից և շարունակում է վտանգ ներկայացնել հասարակության համար, և որ միայն պատիժ կիրառելով կարելի է ուղղել հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձին: Կիրառել, թե՛ ոչ քրեական պատասխանատվությունից ազատումն անգամ համապատասխան հիմքերի առկայության դեպքում. դա ոչ տուժողի, ոչ էլ, առավել ևս՝ հանցանք գործած անձի իրավունքն է¹¹: Նրանք կարող են միջնորդել, խնդրել այդ մասին, բայց ոչ պահանջել որպես իրենց իրավունք: Քննիչի և դատարանի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ կարծիքները կարևոր են, սակայն նրանք նման որոշում պետք է ընդունեն՝ ելնելով ոչ միայն քրեական օրենքի համապատասխան նորմում շարադրված հիմքերից, այլև նկատի առնելով կատարված հանցագործությունից հետո առաջացած կոնկրետ իրավիճակը, կոնկրետ մեղավորի անձնավորության հետ տեղի ունեցած փոփոխությունները (նա շարունակում է վտանգ ներկայացնել հասարակության համար, թե՛ ոչ) և մի շարք այլ հանգամանքներ: Անկասկած, ինչպես արդեն նշել ենք՝ տուժողն իր տեսանկյունից կարող է որոշել, թե ինչ խորությամբ փոփոխություններ են կատարվել հանցանք գործած անձի հետ, և դրա հիման վրա եզրակացնել իր և հասարակության համար նրա

վտանգավոր լինելու մասին: Բայց հնարավոր է նաև, որ տուժողը չկարողանա նկատել հանցանք գործած անձի կեղծավորությունն ու երեսպաշտությունը, և դրա հիման վրա սխալ եզրահանգում անի առ այն, որ այդ անձը լրջորեն վերափոխվել է ու այլևս վտանգ չի ներկայացնում որևէ մեկի համար: Բացի այդ՝ չի կարելի բացառել նաև այնպիսի դեպքերը, երբ հանցանք գործած անձը կստիպի տուժողին հաշտվել: Համանման փաստի բացահայտումը կբխի տուժողի շահերից, ով նման դեպքերում հատկապես զգում է իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության կարիքը: Այդպիսի և համանման դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունն այդպես էլ կմնա չիրացված հնարավորություն: Քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունն իրացնելուց հրաժարվելը ևս, ինչպես և կիրառելը, դառնում է երաշխիքը, որ տուժողի իրավունքներն ու օրինական շահերը հուսալիորեն կպաշտպանվեն: Բացի այդ՝ կարևոր է նաև, որ լուծվում է այն հարցը, թե հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձը կկատարի նոր հանցագործություններ ապագայում:

Քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը վերոնշյալ հիմքերով շատ կարևոր է ոչ միայն քրեական իրավունքի, այլև քրեական արդարադատության համար առհասարակ, քանի որ պայմաններ է ստեղծում հաջողությամբ բացահայտելու և քննելու համապատասխան հանցագործությունները: Դրանով հանդերձ՝ հարց է ծագում, թեկուզ և զուտ տեսական, հանցանք գործած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու անխուսափելիության վերաբերյալ¹²: Խնդիրն այն է, որ կա հակասություն քրեական պատասխանատվության մասին նշյալ պահանջի,

¹⁰ Sեն Коршакевич Н.Г. Прекращение уголовного дела в связи с примирением сторон – право или обязанность суда? // Сибирские уголовно-процессуальные и криминалистические чтения.– Иркутск: Изд-во БГУЭП, 2014, №2 (6), էջ 71-76:
¹¹ Sեն Будник О.А. Проблемы освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Актуальные проблемы юридической науки и практики: Материалы межвузовской научно-практической конференции. – Ставрополь: Агрус, 2013, էջ 25-27:
¹² Sեն Корниенко Ю.В. Понятие и юридическое содержание неотвратимости уголовного наказания // Проблемы реализации уголовной политики Российской Федерации на региональном уровне: сборник материалов круглого стола, посвященного 10-летию образования филиала ФГКУ «ВНИИ МВД России» по СКФО (г. Ставрополь, 28 июня 2013 года).– Ставрополь: АГРУС Ставрополь. гос. аграр. ун-та, 2013, էջ 115-120:

ինչին պետք է ձգտեն իրավապահ մարմինները՝ մի կողմից, և այն հանգամանքի միջև, որ հայտնաբերված և բացահայտված հանցագործության մեջ մեղավոր անձը կարող է և չենթարկվել քրեական պատասխանատվության ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի ուժով, կամ էլ՝ ՀՀ ՔՕ-ի 11-րդ գլխի մեկ այլ նորմի ուժով: Այսինքն՝ այնպես է ստացվում, որ ՀՀ ՔՕ-ի 11-րդ գլխի նորմերը անհնար են դարձնում համապատասխան հանցագործություններ կատարելու մեջ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու անխուսափելիությունը: Ըստ այդմ՝ միանգամայն տրամաբանական է այն, որ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունքի սկզբունքների շարքում նշված չէ անխուսափելիության սկզբունքը¹³:

Ընդ որում՝ պետք է նշել, որ պատասխանատվության անխուսափելիության մասին փորձություն անցած պոստուլատը ներկայումս ուրուշ էվոլյուցիոն փոփոխությունների է ենթարկվում՝ պայմանավորված քրեական արդարադատության և քրեական պատժի զարգացմամբ, որոնք դառնում են ավելի մարդասիրական և ավելի մարդակենտրոն՝ վեճում և քրեական դատավարությունում դրանց կարգավիճակից անկախ: Այսպես՝ ներկայումս կարևոր է յուրաքանչյուր հանցագործության բացահայտումն ու դրան գնահատական տալու հնարավորությունը, ինչպես նաև հանցագործություն կատարելու մեջ մեղավոր կոնկրետ անձի վրա ներգործելը՝ նրան ուղղելու նպատակով, և դրա շնորհիվ նոր հանցագործությունները կանխելը¹⁴: Ըստ էության՝ տվյալ դեպքում ևս առկա է անձի պատասխանատվությունը, բայց ոչ թե բառի քրեաիրավական իմաստով, այլ՝ ավելի լայն, համակիրառելի իմաստով, քանի որ, երբ վճռվում է քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը, ապա բավականին ամբողջական գնահատական է տրվում ինչպես բուն ա-

րարքին, այնպես էլ մեղավորի անձնավորությանը: Ընդ որում՝ այդ անձը ստիպված է բացատրություններ տալ իր կատարած հանցագործության և այն շարժառիթների վերաբերյալ, որոնք դրդել են իրեն կատարելու դա: Ինչնով նման չեն այդ բացատրությունները քրեական պատասխանատվությանը, որը նույնպես ենթադրում է մեղավոր անձի պատասխանատվությունը կատարած հանցագործության համար: Այս առումով անվերապահորեն կարող ենք պնդել, որ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը որևէ չափով չի նսեմացնում կատարված հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու անխուսափելիության մասին պոստուլատը:

Քրեական պատասխանատվությունից ազատելու մասին հարցը վճռելիս քննիչը, դատախազը և դատարանը ելնում են առանց անձի նկատմամբ համապատասխան քրեական պատիժ կիրառելու նրա ուղղվելու հնարավորությունից: Այսինքն՝ հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի ուղղվելու հարցը քննվում է ոչ այն նպատակով, որ նրա նկատմամբ նշանակվի համապատասխան պատիժ: Բայց այս կապակցությամբ հարց է ծագում՝ ինչ է նշանակում ուղղվելը¹⁵: Այս առնչությամբ ՀՀ ՔՕ-ի 48-րդ հոդվածում, որտեղ գործածվում է «ուղղել» եզրույթը, բացատրություն չկա: Ուղղվել ասելով՝ կարելի է հասկանալ, որ համապատասխան անձն այլևս հանցագործություն չի կատարի, կարելի է հասկանալ նաև ավելի խոր գործընթաց, որը ենթադրում է անձի արժեքային կողմնորոշիչների փոխարինում, իդեալների և գաղափարների փոփոխություն, ինչն ազդում է վարքագծի, բարոյական վերափոխման վրա¹⁶: Կարծում ենք՝ նշված նորմը միանգամայն պրագմատիկ է, ուստի «ուղղվել» հասկացությունն այստեղ ունի կի-

¹³ Պետք է նշել, որ դա նախատեսված չէ նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով:

¹⁴ Sեն Игнатенкова К.Е. Неотвратимость наказания как условие его эффективности // Правовая политика и правовая жизнь.– М., Самара, 2011, №2, էջ 131-133:

¹⁵ Sեն Долгополов К.А., Саруханян А.Р. Исправление осужденного как цель назначения уголовного наказания // Актуальные проблемы современного российского права: Материалы VI Международной научно-практической конференции. Невинномысск, 7-8 мая 2014 года.– Невинномысск: НГТТИ, 2014, էջ 203-207:

¹⁶ Sեն Беляева Л.И. Исправление как цель уголовного наказания: Доклады пленарного заседания // Уголовно-исполнительная система Российской Федерации в условиях модернизации: современное состояние и перспективы развития: сборник докладов участников Международной научно-практической конференции (Рязань, 22-23 ноября 2012 г.): в 4 т.: Доклады пленарного заседания.– Рязань: Акад. ФСИН России, 2013, Т. 1, էջ 57-59:

րառական նշանակություն: Պետության ու հասարակության համար միանգամայն բավարար է այն, որ անձը հետագայում հանցագործություններ չկատարի: Եթե նկատի ունենալին ավելի խոր գործընթաց, ապա այդ դեպքում կգործածվեր «վերասոցիալականացնել» հասկացությունը, որը ներառում է անձի մեջ նրա հիմքերի փոփոխությունը, որի ներքո հասկացվում են համապատասխան անձի վարքագիծը պայմանավորող արժեհամակարգը, սկզբունքները, հայացքները¹⁷: Վերասոցիալականացնել հասկացությունը զուտ որպես նոր հանցագործություն կատարելուց հրաժարում ընկալելը հեշտացնում է հանցավորի անձնավորության փոփոխությունները կանխատեսելու աշխատանքը: Այդ դեպքում չկա համապատասխան անձի ավելի խոր վերլուծության անհրաժեշտություն, ինչը քրեական դատավարության պայմաններում բավականին դժվար է, հերիք է միայն պարզել, թե կոնկրետ անձը որքանով է պատրաստ հետագայում ևս հանցագործություններ կատարելու կամ չկատարելու: Առավել ևս, որ հանցանք գործած անձի վրա չափից դուրս մեծ ներգործությունն ինքնին կարող է համարվել հոգեկան բռնության սահմանագծին մոտեցող մի քայլ, ինչը խախտում է մարդու իրավունքներն ու ազատությունները, որոնք երաշխավորվում են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային մի շարք փաստաթղթերով: Քրեական գործող օրենսդրությամբ նպատակը սահմանված է ուղղելը, իսկ վերասոցիալականացնելու մասին ոչինչ ասված չէ: Վերասոցիալականացումը լիովին համապատասխանում է մարդասիրական արժեքներին, որոնք ընկած են ժամանակակից քրեական իրավունքի հիմքում: Ուղղելը, ինչպես նկատում ենք, այնքան էլ չի համապատասխանում այդ արժեքներին, քանի որ ենթադրում է ավելորդ ներգործություն անձի վրա, ինչն առանձին դեպքերում կարող է դիտվել որպես չհիմնավորված հոգեկան բռնություն: Այս ամենից կարող ենք հետևու-

թյուն անել, որ վերասոցիալականացումը հանցավոր անձնավորության այնպիսի վերափոխությունն է, որը երաշխավորում է, որ նա հետագայում հանցագործություններ չի կատարի: Ուստի ՀՀ ՔՕ-ի 72-րդ, 73-րդ, 74-րդ հոդվածներով քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը քննելիս պետք է ելնել այն հանգամանքից, որ առանց պատիժ նշանակելու հնարավոր է հասնել դրված նպատակին, որն է՝ համապատասխան անձն այլևս հանցագործություն չի կատարի: Ընդ որում՝ պետք է նաև նկատի ունենալ, որ հիշատակված նորմերից յուրաքանչյուրը ենթադրում է նշյալ նպատակին հասնելու իր եղանակը: Հարկ է նշել նաև, որ չի բացառվում համապատասխան անձի ուղղվելու հնարավորությունը: Դա հնարավոր է, եթե անձը գիտակցի իր արարքի ամբողջ ծանրությունը, խղճի խայթ և հոգեկան այլ ապրումներ ունենա, որոնք կարող են փոխել նրա անձնավորության հիմքերը: Բայց և այնպես՝ նպատակն այդ չէ, թեպետ և ողջունելի է, քանի որ մեծացնում է երաշխիքը, որ անձը, ում առնչությամբ քննվում է քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը, նոր հանցանք չի գործի: Հետևաբար՝ անձի ուղղվելը միանգամայն բավարար է քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելու համար:

Քրեական պատասխանատվությունից ազատելու տարբեր ձևերում հաշտեցման բնույթը, հետևաբար և՛ տեղը պատկերացնելու համար անհրաժեշտ է դիտարկել քրեական պատասխանատվությունից ազատելու նման ձևը որպես քրեական պատասխանատվությունից ազատում վաղեմության ժամկետը լրանալու կապակցությամբ (ՀՀ ՔՕ-ի 75-րդ հոդված): Նշյալ հիմքը չի ենթադրում որևէ ակտիվ կամ նույնիսկ ոչ ակտիվ գործողություն այն անձի կողմից, ում նկատմամբ կիրառվում է քրեական պատասխանատվությունից ազատելու տվյալ ձևը: Այստեղ էլ պարզապես արձանագրվում է վաղեմության ժամկետի լրանալը¹⁸: ՀՀ ՔՕ-ի

¹⁷ Стів Байдаков Г.П. Исправление и перевоспитание осужденных и другие цели уголовного наказания // Исполнение наказаний и социальная адаптация освобожденных. Сборник научных трудов.– М.: Изд-во ВНИИ МВД СССР, 1990, էջ 16-22:

¹⁸ Стів Антонов А.Г. Возможно ли освободить от уголовной ответственности осужденного, совершившего побег, в связи с истечением сроков давности? // Уголовно-исполнительная система: право, экономика, управление.– М.: Юрист, 2016, №3, էջ 22-24:

75-րդ հոդվածի նորմում չկա որևէ շեշտադրում անձնավորության, նրա ուղղվելու վրա: Առկա է միայն ձևական հիմքը՝ ժամանակը, որն անցել է հանցագործության կատարվելուց հետո: Այդուամենայնիվ, միանգամայն պարզ է, որ տվյալ դեպքում հենց անձնավորությունն ու նրա առավել էական հատկանիշներն են քրեական պատասխանատվությունից ազատելու պատճառը: Օրենսդիրը ելնում է այն հանգամանքից, որ հանցագործության կատարվելու պահից բավականին ժամանակ անց հանցանք գործած անձը պարտադիր պետք է վերասոցիալականացվի և ըստ այդմ կորցնի իր հասարակական վտանգավորությունը¹⁹: Դա հաստատվում է ինչպես իրավակիրառ պրակտիկայով, այնպես էլ հոգեբանության տվյալներով, որոնք վկայում են, որ մարդն անդադար զարգանում է, և նրա ներանձնայինն անփոփոխ չի մնում: Ուստի զգալի ժամանակահատված անցնելուց հետո հանցանք գործած անձն այլ մարդ է դառնում: Քրեական օրենսդրության հիմքում դրված մարդասիրական սկզբունքներից ելնելով՝ կիրառվում է այն հիմնադրույթը, որ մարդը փոխվում է դեպի լավը: Հանցագործությունից հետո ընկած երկար ժամանակահատվածը համարվում է հանցագործության հանգեցրած հոգեբանական հիմքերի շուրջ մտորելու և դրանք վերագնահատելու ժամանակ: Ենթադրվում է, թե հանցանք գործած անձն արմատապես փոխել է իր վերաբերմունքը դրա հանդեպ՝ բացասաբար գնահատելով այն: Ակներև է, որ հակառակն էլ կարող է տեղի ունենալ (անձը կշարունակի հանցավոր գործունեությունը՝ կատարելով նոր հանցագործություններ), սակայն օրենսդիրը, ելնելով մարդասիրության սկզբունքներից, հաշվի է առնում ավելի բարենպաստ կանխատեսումները համապատասխան հանցավորի անձնավորության վերաբերյալ: Նա նախընտրում է, որ ուղղված անձը, այնուամենայնիվ, ազատվի քրեական պատասխանատվությունից, չնայած ոմանց համար ժամանակը չի

դարձել դեպի լավը փոխվելու գործոն: Տվյալ նորմը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, դա նկատի է առնում ոչ միայն և ոչ այնքան ձևական հիմքը՝ հանցագործություն կատարվելուց հետո անցած ժամանակը, այլև հանցանք գործած անձի ներանձնայինի մեջ փոփոխությունները, որոնք պետք է տեղի ունենային: Այս տեսանկյունից կարելի է պնդել, որ քրեական պատասխանատվությունից ազատելու բոլոր ձևերի համար էականը հանցանք գործած անձի ներանձնայինն է, նրա ուղղվելու հնարավորությունը:

Պետք է նշել նաև տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու այնպիսի կարևոր հատկանիշ, ինչպիսին դրա խթանիչ նշանակությունն է: Դա քաջալերում է հանցանք գործած անձին՝ տուժողի հետ հաշտվելու ուղիներ որոնելու: Դա ստիպում է նրան վերափոխվել, ինչպես նաև գործել այնպես, որ տուժողի համար համոզիչ լինի իր վտանգավոր չլինելն ու նոր հանցագործություններից հետագայում ձեռնպահ մնալը: Առավել ևս, որ հաշտության հասնելը կախված է հանցավոր անձի հետքերեական գործողություններին տուժողի տված գնահատականից: Նա է որոշում, թե որքանով է մեղավորն արժանի իր հետ հաշտվելուն²⁰: Նա առնում է դա՝ վերլուծելով այն, թե ինչ գործողություններ են կատարվում այդ հաշտությանը հասնելու համար: Դրանով իսկ հաշտեցումը խթան է հանցավոր անձի համար՝ իմաստավորելու կատարածը և դրա հիման վրա ուղղվելու: Ըստ էության՝ հաշտեցումը հանցավոր անձին ուղղելու խթանիչ մեթոդ է: Հաշտեցումը մեթոդ է, քանի որ ենթադրում է ոչ թե պարզապես գործողությունների համախումբ, այլ՝ գործունեության միանգամայն որոշակի համակարգ՝ նախապես որոշակիացված ոչ միայն վերջնական, այլև միջանկյալ նպատակներով: Դրա հետ մեկտեղ՝ որոշակիանում են միանգամայն հստակ ձևեր ու միջոցներ, որոնք կարող են կի-

¹⁹ Sfin Kiryagina I.A. Институт прекращения уголовного дела по истечении сроков давности уголовного преследования при реализации положений федерального законодательства Российской Федерации // Актуальные проблемы уголовного процесса и криминалистики России и стран СНГ. Материалы международной научно-практической конференции, посвященной 85-летию со дня рождения профессора, доктора юридических наук, заслуженного деятеля высшей школы Юрия Даниловича Лившица – 4 апреля 2014 года.– Челябинск: Циперо, 2014, Ч. I, էջ 95-99:

²⁰ Sfin Ashirbekova M.T. Законопроект Верховного Суда РФ: процессуальные средства продвижения примирения обвиняемого с потерпевшим // Мировой судья.– М.: Юрист, 2016, №2, էջ 9-14:

րառվել նշյալ նպատակներին հասնելու համար: Քանի որ հաշտեցումը խթանող մեթոդ է, որի նպատակը հանցավոր անձին ուղղելն է, դա նաև կանխիչ դեր ունի՝ կանխարգելելու նույն անձի կողմից նոր հանցագործությունը: Ընդ որում՝ տվյալ մեթոդը մեղավոր անձին դնում է այնպիսի վիճակի մեջ, որ նա ինքնըստինքյան հանգում է այն մտքին, որ անհրաժեշտ է փոխել իր վարքագիծը և համապատասխանաբար փոխել իր անձնավորությունը: Նա խթանում է նշյալ անձին վերափոխվելու և վտանգ չներկայացնելու ո՛չ տուժողի, ո՛չ շրջապատող մարդկանց, ո՛չ պետության, ո՛չ էլ՝ հասարակության համար: Հանցանք գործած անձին խթանելու նպատակն այն է, որ նա կամովին ձեռնարկի հաշտեցմանն ուղղված գործողություններ: Նման գործողություններ են, ըստ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի, վնասը հատուցելը, հանցագործությամբ պատճառված վնասը հարթելու այլ ձևերը: Հաշվի առնելով, որ հաշտեցմանն ուղղված գործողությունների ցանկը սպառիչ չէ, հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձն ինքը պետք է հստակեցնի այն գործողությունները (նշվածներից բացի), որոնք պետք է կատարի հաշտության հասնելու համար: Նման նախաձեռնողությունն ինքնըստինքյան արդեն հանգամանք է, որը կարող է ընդունելի լինել տուժողի համար և դրվել հաշտեցման հիմքում:

նելու նպատակն այն է, որ նա կամովին ձեռնարկի հաշտեցմանն ուղղված գործողություններ: Նման գործողություններ են, ըստ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի, վնասը հատուցելը, հանցագործությամբ պատճառված վնասը հարթելու այլ ձևերը: Հաշվի առնելով, որ հաշտեցմանն ուղղված գործողությունների ցանկը սպառիչ չէ, հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձն ինքը պետք է հստակեցնի այն գործողությունները (նշվածներից բացի), որոնք պետք է կատարի հաշտության հասնելու համար: Նման նախաձեռնողությունն ինքնըստինքյան արդեն հանգամանք է, որը կարող է ընդունելի լինել տուժողի համար և դրվել հաշտեցման հիմքում:



ԴԱԿԻԹ ՕՀԱՆՅԱՆ

«Ն» ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱՔԱՆՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Քաղաքացիական իրավունքում պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի էության բացահայտման, ինչպես նաև դրա կիրառման ոլորտի որոշակիացման համար կարևոր նշանակություն ունի այն նախադրյալների ուսումնասիրությունը, որոնց առկայության պարագայում շրջանառության մասնակիցները զգում են այս ինստիտուտի «օգնության» կարիքը: Պայմանագրային պայմանների մեկնաբանման անհրաժեշտությունը կարող է առաջանալ բոլոր տեսակի գործերով և կարող է պայմանավորված լինել կողմերի միջև կնքված պայմանագրում այս կամ այն պայմանի վիճելի բնույթով:

Ակներև է, որ պայմանագրի մեկնաբանումը իրավական վեճի տրամաբանական հետևանք է: Իրավունքի մասին վեճի էության սահմանումը համարվել և համարվում է իրավաբանական գրականության առավել քննարկվող թեմաներից մեկը: Ամենևին չցանկանալով մտնել այս հարցի շուրջ տեսության մեջ առկա հասկացության «հողմապտույտի»¹ մեջ՝ կցանկանայինք նշել, որ իրավական վեճը ենթադրում է այն իրավիճակը, երբ կողմերից մեկի պարտականության չկատարումը վերացնում է մյուս կողմի սուբյեկտիվ իրավունքի ռեալիզացման օբյեկտիվ հնարավորությունը:

Համապատասխանաբար, պայմանագրի մեկնաբանման մասին վեճը ենթադրում է, թե կողմերից յուրաքանչյուրն ունի վիճելի պայմանի մասին իր պատկերացումները և իր պահանջները ներկայացնելիս հենվում է դրանց վրա: Հետևաբար՝ մեկ պայմանի շուրջ երկու տարբեր պատ-

կերացումների առկայությունը պայմանագրի մեկնաբանման մասին վեճի ընդհանուր նախադրյալն է: Պրակտիկայում դեպքերը, երբ կողմերն ունեն հակասություններ՝ վիճելի պայմանի հետ կապված, զանազան են և պայմանավորված են տարատեսակ երևույթներով: Ուստի հարց է առաջանում՝ հնարավոր է արդյոք վեր հանել նմանատիպ դեպքերի համար ընդհանուր օրինաչափություններ: Կարծում ենք՝ այս հարցի դրական պատասխանը ոչ միայն հնարավոր է տեսական հարթության մեջ, այլև հիմնավորված է պրագմատիկ անհրաժեշտությամբ²:

Իրավիճակները, որտեղ պայմանագրի պայմանները բնութագրվում են անորոշությամբ, բազմիմաստությամբ կամ հակասականությամբ, բազմազան են և տարբերվում են ըստ կոնկրետ հանգամանքների, սակայն դրանց հայտնաբերման եղանակները մեծ մասամբ համընկնում են, ինչը հնարավորություն կտա բնութագրելու այն դեպքերը, երբ առաջանում է մեկնաբանման անհրաժեշտություն:

Որպես կանոն՝ պայմանագրային պայմանի ընկալման տարբերությունը կապվում է դրա բովանդակային անորոշության հետ, երբ ակնհայտ է, որ կողմերի կողմից ասվել է, գրվել է կամ արտահայտվել է այլ բան, և նրանց կամարտահայտությունը մնում է ոչ պարզ³: Ս.Վ. Սարբաշը նշում է, որ մեկնաբանման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ կամքի արտահայտման ձևն անհասկանալի է, և պարզ չէ դրա իմաստը, կամ դա էական կասկած է հարուցում⁴:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

¹ Կցանկանայինք նշել, որ իրավունքի մասին վեճը, որի արմատներն իրականում ավելի խորն են և տանում են դեպի փիլիսոփայական կոնֆլիկտոլոգիա, սույն հոդվածում նպատակահարմար չէ ուսումնասիրել, քանզի ենթակա է ինքնուրույն և համապարփակ հետազոտման:

² Ինչպես նշում է Ֆ. Էնգելսը՝ եթե մենք համադրենք այնպիսի երկու միմյանց նկատմամբ ծայրահեղ երևույթներ, ինչպիսին, օրինակ, մետեորիտն է և մարդը, ապա այստեղ մենք կունենանք քիչ ընդհանրություններ, լավագույն դեպքում այն, որ երկուսին էլ վերագրելի են ծանրություն և մարմնի այլ ընդհանուր հատկանիշներ: Սակայն այս երկու երևույթի միջև կարող են լինել բավականին այլ հատկանիշներ և բնության պրոցեսներ, որոնք հնարավորություն կտան լրացնելու երևույթները մեկը մյուսով և այդ կերպ ճանաչելու դրանք: Տե՛ս К. Маркс, Ф. Энгельс. Сочинения, тома 1-39. Издание второе М.: Издательство политической литературы, 1955-1974 г.г. էջ 547:

³ Տե՛ս Цвайгерт К, Кетц Х. Введение в сравнительное правоведение в сфере частного права, Т. 2, М., 1998, էջ 105:

⁴ Տե՛ս Сарбаш С. В. Некоторые тенденции развития института толкования договора, Государство и право, 1997, №2, էջ 39:

Ընդհանուր իրավունքի (common law) երկրների դատարանների պրակտիկայում ձևավորվել է մի հասկացություն՝ պայմանագրային պայմանի անորոշություն (ambiguity of contract term), երբ վիճելի պայմանն ունի *երկու և ավելի ելակետային նշանակություն*, որոնցից յուրաքանչյուրը կարող է ընդունվել առանց լեզվի խեղաթյուրման⁵: Անորոշության նմանատիպ հասկացությունն ուղղակիորեն կապված է այն հանգամանքի հետ, որ լեզուն, որն օգտագործում են պայմանագրի կողմերը, բազմիմաստ է: Բառերի և բառակապակցությունների բազմիմաստությունը պայմանավորված է ինքնին լեզվի էության հետ, որը ժամանակակից հումանիտար գիտության մեջ ընդունված է համարել նշանների (սիմվոլների) համակարգ՝ օգտագործվող հաղորդակցման և ճանաչողության նպատակների համար⁶:

Բառերը, հանդիսանալով որպես առավել տարածված սիմվոլներ, ունեն մեկից ավելի նշանակություն. ցանկացած բառարան դրավառ ապացույցն է: Ավելին՝ բառերը կամ բառակապակցությունները, որոնց նշանակությունը առաջին հայացքից կարող է պարզ թվալ, մասնավոր և, հատկապես՝ պայմանագրային իրավունքում կարող է այդպիսի պարզությունը վերանալ: Ինչպես նկատում է Կ. Լյուիսոնը՝ պայմանագրի բառերը կարող են լինել լրիվ պարզ և միանշանակ, ինչպես օրինակ՝ *իմ գարմիկ Ջոզեֆ Գրանյու* կամ *արդար շուկայական գին*, բայց կոնկրետ հանգամանքներում, երբ դուք սկսեք կիրառել կոնկրետ պայմանը, դուք կհայտնաբերեք, որ *Ջոզեֆ Գրանյու* բառերը կարող են վերաբերել երկու անձանց, կամ գոյություն ունեն երկու շուկա, որոնց կարող էին հղում կատարել կողմերը⁷:

Ստացվում է, որ բանավոր և գրավոր կերպով արտահայտված բառերը, բոլոր մյուս սիմվոլները, որոնց միջոցով մարդիկ մտնում են իրավահարաբերությունների մեջ, կարող են ոչ ամբողջությամբ արտացոլել այն ամենը, ինչն

այդ պահին նրանց համար անհրաժեշտ էր թվում⁸: Քանի որ պայմանագրի կնքելիս կողմերն օգտագործում են լեզուն իր ամբողջությամբ, հետևաբար՝ բառերի և բառակապակցությունների բազմիմաստությունը⁹ մեկնաբանման համար *օբյեկտիվ նախադրյալ է* ոչ միայն իրավունքում, այլ նաև հումանիտար գիտության այլ ճյուղերում¹⁰:

Հաշվի առնելով, որ պայմանագրի անորոշությունը կապված է մեկ պայմանի շուրջ երկու և ավելի նշանակությունների առկայության հետ, ուստի դա կարելի է դիտարկել որպես ընդհանուր լեզվական անորոշության մասնավոր դրսևորում: Քանզի բառի կամ բառակապակցության նշանակությունը, որն օգտագործվում է ինչպես պայմանագրում, այնպես էլ կենցաղային խոսքում, կախված է այն համարտեքստից, որում դրանք կիրառվում են, ոչ միշտ է, որ մի կողմի պայմանի ընկալումը համընկնում է մյուս կողմի ընկալման հետ:

Վերագրյալ անորոշության օրինակ է ներկայացնում պրոֆեսոր Կ. Լարենցը գերմանական քաղաքացիական իրավունքի դասագրքում՝ հյուրանոցային համար պատվիրելիս պատվիրատուն պատվիրում է *երկու սենյակ երեք մահճակալով*¹¹: Այն ժամանակ, երբ պատվիրատուն ցանկանում է վերցնել երկու սենյակ, որոնցից յուրաքանչյուրում կլինեն երեք մահճակալ, հյուրանոցի սեփականատերը գրանցում է երկու սենյակ՝ համապատասխանաբար մեկ և երկու մահճակալներով: Քննարկվող օրինակում ակնհայտ է, որ պատվերի բովանդակությունը համարվում է անորոշ և հնարավորություն է տալիս վեր հանելու երկու հավասարազոր նշանակություն՝ երկու սենյակի պատվեր վեց մահճակալով և երկու սենյակի պատվեր երեք մահճակալով:

Վերադառնալով պայմանագրի պայմանի անորոշություն հասկացությանը՝ պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ քննարկվում են նաև լինգվիստիկայի ոլորտում

⁵ Տե՛ս Lewison K. The interpretation of contracts, L. 2011, էջ 419:

⁶ Տե՛ս Зотов А. Ф. Современная западная философия, М., 2011, էջ 209:

⁷ Տե՛ս Lewison K.– նշվ. աշխ., էջ 416:

⁸ Տե՛ս Цвайгерт К., Кетц Х. նշվ. աշխ., էջ 106:

⁹ Յուրաքանչյուր նշան ունի առարկայական (նշված օբյեկտ) և իմաստային (օբյեկտի բնութագիր) նշանակություն: Տե՛ս Ивлев Ю.В. Логика для юристов. М., 2001., էջ 24:

¹⁰ Տե՛ս Mitchell C.– Interpretation of contracts / Current controversies in law/ NY. 2007. էջ 5:

¹¹ Տե՛ս Larenz K, Wolf M.– Allgemeiner Teil des Bürgerlichen Rechts, München 2004, էջ 391:

արված հետևությունները (լինգվիստիկական «ձեռքբերումները») իրավունքի դաշտ մեխանիկորեն փոխադրելու նպատակահարմարության հարցը:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ա. Ֆարնսվորդը՝ չնայած պայմանագիրը մեկնաբանելիս սեմանտիկայի¹² հետևությունները կիրառելու գրավչությունը մեծ է, այնուամենայնիվ, գործնական տեսանկյունից նման կառուցակարգերը դժվար թե օգնեն իրավաբանին: Դա բացատրվում է այն փաստարկով, որ ժամանակակից փիլիսոփաները և լինգվիստները ուսումնասիրում են լեզվի բնութագրական ֆունկցիան, մինչդեռ պայմանագրերում լեզվի կիրառման հիմնական խնդիրն այլ է՝ կողմերի վարքագծի նկատմամբ հսկողությունը: Այն ժամանակ, երբ լինգվիստները կենտրոնացած են, որ լեզուն արտահայտի ճշմարտությունը, իրավաբանների նպատակն այն է, որ լեզուն արդարացնի պայմանագրի կողմերի սպասումները¹³:

Համանման դիրքորոշում է արտահայտում նաև Ս. Բարտոնը. պայմանագրի անորոշությունը դիտարկել որպես նշանակությունների բազմակիության իրավիճակ ճիշտ է սեմանտիկայի տեսանկյունից, բայց իրավաբանական պրակտիկայի համար ունի սահմանափակ նշանակություն, քանզի հնարավոր է թույլ տալ վիճելի պայմանի նշանակության անսահմանափակ քանակ, իսկ դատական վեճում կողմերը ենթադրում են, որպես կանոն, երկու հնարավոր նշանակություն, որոնք համապատասխանում են նրանց շահերին¹⁴:

Վերոնշյալ մոտեցումների արդյունքով ստացվում է, որ եթե հումանիտար գիտությունների առաջ գլոբալ խնդիր է դրված, առաջին հերթին, ճանաչողության, այնուհետև, երկուսների բացահայտման, ապա իրավունքի գիտության առաջնային խնդիրն այն հետևությունների ձևավորումն է, որոնք կարող են դատարանին օգնել ճիշտ լուծել վեճը:

Մի բան ակնհայտ է՝ *պայմանագրի անորոշությունը որպես մեկնաբանման օբյեկտիվ նախադրյալ ճիշտ է բնորոշել որպես իրավիճակ, երբ պայմանագրի պայմանը հավասարապես թույլ է տալիս երկու և ավելի նշանակության առկայություն, ինչը կողմերի սպասուցման առարկան է*:

Չնայած պայմանագրի անորոշությունն օբյեկտիվ է լեզվի բազմիմաստության ուժով, դրա հայտնաբերման եղանակները տարբերվում են: Որպեսզի պարզենք, թե ինչպիսի իրավիճակներում են հայտնաբերվում պայմանագրի անորոշությունները, պետք է անդրադարձ կատարենք իրավաբանական դոկտրինայում ձևավորված անորոշությունների տեսակներին:

Անգլիական իրավունքում ավանդաբար ընդունված է խոսել բացահայտ և թաքնված անորոշությունների մասին: Գրականության մեջ դրանք վերնագրվում են որպես ներքին և արտաքին անորոշություններ՝ հատկապես, որպեսզի ընդգծվի տարբերությունը դրանց հայտնաբերման եղանակների միջև մեկնաբանման վեճը լուծելիս¹⁵:

Այն ժամանակ, երբ բացահայտ անորոշությունն ուղղակիորեն հանդիպում է պայմանագրի լեզվում, թաքնված անորոշությունը հանդիպում է այն դեպքերում, երբ պայմանագրի լեզուն կիրառվում է կոնկրետ փաստական հանգամանքներում¹⁶: Անգլիական դոկտրինայում որպես բացահայտ անորոշության տեսակ հաճախ ներկայացնում են այն վեճերը, երբ պայմանագրում տարբերվում են գները, որոնք տրված են թվերով և բառերով, կամ երբ ժամկետները, որոնք տրված են օրերի քանակով և օրացուցային ամսաթվով, չեն համընկնում¹⁷:

Ուստի կարող ենք հետևություն անել, որ պայմանի բացահայտ անորոշությունը, որպես կանոն, հետևանք է սխալի (վրիպակի, անհստակության) կամ շտապողականության, կամ կա-

¹² Իմաստաբանություն, նշանակաբանություն (հուն.՝ σημασιολογία – նշանակվող), լեզվաբանության բաժին, որը զբաղվում է լեզվական տարբեր միավորների (ձևայինների, բառերի, քերականական ձևերի և այլն) իմաստների ուսումնասիրությամբ:

¹³ Տե՛ս Farnsworth A. Meaning in the law of contracts, Yale law journal, Vol. 76. 1967, էջ 942:

¹⁴ Տե՛ս Burton S. j. Elements of contract interpretation, N. Y., 2009, էջ 106:

¹⁵ Ամերիկյան դոկտրինայում ներկայացնում են նաև անորոշության այլ տեսակներ՝ տերմինի անորոշություն, նախադասության անորոշություն, համակարգային անորոշություն, տե՛ս Farnsworth A. նշվ. աշխ. էջ 952:

¹⁶ Տե՛ս Burton S. j. նշվ. աշխ. էջ 13:

¹⁷ Տե՛ս Lewison K. նշվ. աշխ. էջ 416:

մարտահայտությունների ոչ հստակ ձևակերպման:

Առավել հաճախ պայմանագրային վեճերի ընթացքում հանդիպում են թաքնված անորոշությունների իրավիճակներ, երբ պայմանը դադարում է լինել միանշանակ կոնկրետ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Այդպիսի պայմաններում նույնիսկ մանրակրկիտ կարգավորված պայմանագիրը կարող է պարունակել թաքնված անորոշություններ, որոնք կողմերը պայմանագրի կնքման պահին չէին կարող կանխատեսել:

Կ. Լյուիսոնն իր աշխատության մեջ թաքնված անորոշության հետաքրքիր օրինակ է ներկայացնում անգլիական պայմանագրային պրակտիկայից (*Raffles v. Wichelhaus*): Գործի հանգամանքների համաձայն՝ կողմերը պայմանավորվել են բամբակի խմբաքանակի առքուվաճառքի մասին, որը պետք է մատակարարվեր Բոմբեյից *Peerless* նավով: Առաջին հայացքից՝ այս պայմանը շատ պարզ է և կարիք չունի մեկնաբանման: Սակայն հետագայում, պայմանագիրը կատարելիս, պարզվում է, որ Բոմբեյի նավահանգստից տարբեր ժամանակահատվածներում դուրս են գալիս երկու նավ՝ միևնույն անվանումով: Գնորդը պայմանագիրը կնքելիս նկատի է ունեցել այն նավը, որը դուրս է եկել ծով հոկտեմբերին, այնինչ վաճառողն ակնկալում էր այն նավը, որն ուղղվել է դեպի նշանակության վայր միայն դեկտեմբերին¹⁸:

Այս գործի հանգամանքներից հետևում է, որ մատակարարման պայմանը պահանջեց դատական մեկնաբանում միայն կոնկրետ հանգամանքների բերումով, այն ժամանակ, երբ պայմանագրի կնքման փուլում կողմերի մեջ տարաձայնություններ չէր առաջացնում: Դրանում է ինքնին պայմանագրի թաքնված մեկնաբանման էությունը, որի մեկնաբանման անհրաժեշտությունն առաջանում է միայն պայմանը կոնկրետ հանգամանքներում կիրառելիս:

Թաքնված անորոշության մեկ այլ օրինակ կարելի է ներկայացնել ռուսական պայմանագրային իրավունքից: Գործատու ընկերության և համալսարանի միջև կնքվում է պայմանա-

գիր, որի համաձայն՝ ընկերությունն իր վրա պարտավորություն է վերցնում վճարել իր աշխատողի իրավաբանական մասնագիտացման համար, ով պայմանագրի կնքման պահին աշխատում է ընկերությունում որպես փականագործ: Պայմանագրով ընկերությունը նաև պարտավորվում է իր կառուցվածքային ստորաբաժանումներում ապահովել նրա աշխատանքն ուսուցման ավարտից հետո 5 տարի ժամկետով: Ավարտական դիպլոմը ստանալուց հետո աշխատողը դիմում է ընկերությանը իրավախորհրդատուի աշխատանքի տրամադրման համար, ինչում նա մերժվում է այն հիմնավորմամբ, որ արդեն տեղավորված է աշխատանքի՝ փականագործի հաստիքում¹⁹:

Այս իրավիճակում վիճելի պայմանի անորոշությունը հայտնաբերվեց հատկապես կողմերի հարաբերություններում կիրառելիս, քանզի այն հարցը, թե ինչ մասնագիտությամբ է ընկերությունը պարտավորվել աշխատանք տրամադրել աշխատողին, պայմանագրի կնքման պահին դժվար թե կասկած հարուցեր: Դատարանը պետք է գնահատեր կողմերի միջև ձևավորված բոլոր հարաբերությունները, որպեսզի ճիշտ որոշում կայացներ առ այն, որ պայմանագրով երաշխավորվել է այնպիսի աշխատանք, որը համապատասխանում է իրավաբանական մասնագիտացմանը: Հակառակ պարագայում կողմերի միջև կնքված պայմանագիրը դառնում էր անտրամաբանական և կորցնում էր իր տնտեսական նշանակությունը:

Անգլիական իրավունքում անորոշությունների տարբերակումն ունի գործնական նշանակություն. ակնհայտ անորոշությունների դեպքում դատարանը, որպես կանոն, չի կարող հղում կատարել տեքստից դուրս գտնվող ապացույցների վրա (օրինակ՝ բանակցություններ, թղթակցություն, հետագա վարքագիծ և այլն), այն ժամանակ երբ քողարկված անորոշություն պարունակող պայմանը մեկնաբանելիս դատարանին ոչ միայն թույլատրվում է, այլ նաև անհրաժեշտ է:

Անորոշությունների հայտնաբերման ներկայացված դեպքերն արժեքավոր են այնքանով, որքանով հնարավորություն են տալիս կա-

¹⁸ Տե՛ս Lewison K. նշվ. աշխ. էջ 417:

¹⁹ Տե՛ս Постановление Президиума Московского областного суда от 11 мая 2011 года N 176:

տարելու հետևյալ եզրահանգումը՝ **պայմանագրի պայմանը, որն առաջին հայացքից թվում է պարզ և միանշանակ, գործի բոլոր հանգամանքների հետ հարաբերակցություն տանելով՝ կարող են հայտնաբերվել թաքնված անորոշություններ:**

Պայմանագրի պայմանի անորոշության սահմանումը, տարբերակումները հնարավորություն են տալիս ուրվագծելու այն իրավիճակները, երբ դատարանը պետք է իրականացնի մեկնաբանում: Սակայն, որպեսզի պարզվի, թե որո՞նք են կողմերի միջև հակասությունների պատճառները, դա բավարար չէ: Պայմանագրի անորոշությունը ոչ միայն պետք է դիտարկել որպես լեզվի օբյեկտիվ բնութագիր, այլ նաև կողմերի կամարտահայտությունների ճանաչելիության խնդիր: Այս ասպեկտն առավել խորապես ուսումնասիրված է գերմանական դոկտրինայում, որտեղ ավանդապես պայմանագրի պայմանի անորոշությունը կապում են հասկացողությունների տարբերության հետ, որն առաջանում է կամարտահայտության հեղինակի և հասցեատիրոջ միջև: Ի տարբերություն ընդհանուր իրավունքի դոկտրինայի, որն առավելապես կենտրոնացված է լեզվի օբյեկտիվ բնութագրի վրա, գերմանական դոկտրինայում առաջնահերթ է համարվում վիճելի պայմանի ընկալումն այն անձի կողմից, ում հասցեագրված է: Այդպիսի մոտեցումը համապատասխանում է գերմանական փիլիսոփայական ավանդույթներին, որոնք շրջանակներում ճանաչողության ֆենոմենը հիմնական հերմենևտիկական խնդիր է²⁰:

Անհատական բառօգտագործման առանձնահատկությունները, ձեռնարկատիրական փորձը, գործի կոնկրետ հանգամանքների տիրապետման շրջանակը և այլ հանգամանքներ ձևավորում են այն, ինչ գերմանական դոկտրինայում ընդունված է համարել վիճելի պայմանի մասին յուրաքանչյուր կողմի **հասկացողության հորիզոն (Empfängerhorizont)**: Ոչ միշտ է, որ հասցեատիրոջ ընկալման հորիզոնը, որը ձևավորվում է նշված տարրերից, կարող է համապատասխանել այն նշանակությանը, որը դրել է իր կամարտահայտության մեջ հեղինակը,

հատկապես այն դեպքերում, երբ այդպիսի նշանակությունն ամուր կապված է այն հանգամանքների հետ, որոնք շրջապատում են հեղինակին:

Ներկայացնենք մեկ օրինակ գերմանական պայմանագրային իրավունքից. գործի փաստերի համաձայն՝ հոլանդացին (վաճառող) և չեխը (գնորդ) Բեռլինում պայմանավորվում են ծիու վաճառքի մասին՝ 1000 կրոնի դիմաց: Միևնույն ժամանակ՝ կողմերից յուրաքանչյուրը պայմանագիրը կնքելիս նկատի է ունենում իր երկրի ազգային արժույթը: Ակնհայտ է, որ վեճը կողմերի միջև ծագել է, որովհետև օֆերտայի հասցեատիրոջ (վաճառողի) ընկալման հորիզոնը չունեի այն նշանակությունը, ինչ հաղորդել էր իր օֆերտային հեղինակը (գնորդ)²¹:

Որպես կողմերի ընկալման հորիզոնների չհամընկման հետևանք՝ առաջանում է պայմանագրի հիմք հանդիսացող կամարտահայտությունների բովանդակային հակասություն: Արևմտյան իրավական դոկտրինայում ձևավորվել է նմանատիպ հակասության հաղթահարման երկու հիմնական մոտեցում՝ *սուբյեկտիվ և օբյեկտիվ*: Առաջին մոտեցման շրջանակներում վճռորոշ նշանակություն ունի այն, թե ինչպես է կամարտահայտությունն ընդունվել կամ ինչպես պետք է ընդունվեր այն անձի կողմից, ում հասցեագրված էր: Իսկ երկրորդ մոտեցման շրջանակներում հաստատվում է բանական մարդու ընկալումը, այսինքն՝ վերացական երրորդ անձի:

Տարբերվող ընկալումների նշված լուծումն ամուր կապված է այնպիսի փիլիսոփայական կատեգորիայի հետ, ինչպիսին ինտերսուբյեկտիվությունն է, որը մշակվել է ականավոր գերմանացի փիլիսոփա Է. Գուսերլի կողմից: Այս տեսությունը որպես ճանաչողական պրոցեսի հիմք առաջարկում է լրիվ հրաժարում **ճանաչողական Ես**-ից, այսինքն՝ սուբյեկտիվիզմի գերակայությունից հեռացում, որի շրջանակներում ճանաչողական Ես-ին հակադրվում է օբյեկտիվ աշխարհը: Պայմանագրի մեկնաբանման տեսության հետ կապված՝ այդպիսի հրաժարումը նշանակում է վիճելի պայմանի հեղինակային նշանակությունից հեռացում:

²⁰ Sին Lüderitz A. Auslegung von Rechtsgeschäften. Köln, 1966. էջ 8:

²¹ Sին Эннекцерус Л., Кипп Т., Вольф М. Курс германского гражданского права. Т. 1. М., 1949. էջ 340:

Սոցիալական ճանաչողության տեսանկյունից՝ ինտերսուբյեկտիվությունը բնութագրվում է որպես ընկալման ընդհանուր հորիզոն, ինչը ենթադրում է համագործակցող սուբյեկտների փորձի ընդհանրություն և դրանց արդյունքների համընդհանրություն: Այդպիսի ընդհանուր փորձը, վերջին հաշվով, ապահովում է փոխըմբռնման հնարավորությունը և դրված է հաղորդակցման հիմքում²²:

Ինտերսուբյեկտիվության խնդիրն ամենօրյա ճանաչողության օրինակով ներկայացնում է Է. Գուսերլի հետևորդներից Ա. Շյուցը՝ առօրյա կյանքում բանական միտքը ես ընդունում եմ այնպես, ինչպես ենթադրվում է այլ մարդկանց բանականության մեջ: Սրանից հետևում է, որ այս աշխարհի օբյեկտները, որպես կանոն, հասանելի են նրանց ճանաչողությանը, կամ արդեն հայտնի են, կամ ճանաչելի են նրանց կողմից: Բայց ես նաև գիտեմ, որ, խիստ ասած՝ այդ նույն օբյեկտն ունի մի քանի նշանակություն ինձ համար և ցանկացած այլ անձի համար²³:

Ա. Շյուցի կողմից առաջ քաշված թեզիսը պայմանագրի վիճելի պայմանի տարբերվող ընկալումների տեսանկյունից կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ կողմը, որն առաջարկում է վիճելի պայմանը, հիմնվում է այն փաստի վրա, որ մյուս կողմի համար բավարար է այդ պայմանի մեջ դրված նշանակությունը: Եվ հակառակը՝ մյուս կողմը նույնպես ենթադրում է, թե վիճելի պայմանի իր ընկալումը համընկնում է հեղինակ-կողմի նշանակության հետ: Ընդհանուր ընկալումը ձևավորվում է այն ելակետից, որ երկու կողմերն էլ մտածում են մեկը մյուսին ինտերսուբյեկտիվորեն: Այդ իսկ պատճառով եթե հիմնավորվի, որ մի կողմը գիտեր կամ չէր կարող չիմանալ մյուս կողմի անհատական ընկալման մասին, ապա այդպիսի ընկալումը համարվում է ճիշտ և իրավաչափ ու ենթակա է պաշտպանության իրավունքի կողմից: Այս գաղափարը դրված է պայմանագրի **մեկնաբանման սուբյեկտիվ տեսության** հիմքում:

Ինչպես ընդգծում է Շյուցը՝ կարելի է են-

թադրել, թե աշխարհի այն մասը, որ ես դիտարկում եմ որպես անվիճելի իրողություն, այդպիսին է նաև ձեզ համար, այսինքն՝ իմ անհատական **ԵՍ**-ի հակառակին, ավելին՝ այդպիսին է համարվում **Մեր** համար: Բայց այդ **Մենքն** իր մեջ պարունակում է ոչ միայն ինձ և ձեզ, այլև ցանկացածին, ով մեզանից մեկն է, այսինքն՝ ցանկացածի, ում արդիականության համակարգն էականորեն կամ բավարար կերպով համապատասխանում է իմին և ձերին²⁴:

Պայմանագրի մեկնաբանման տեսանկյունից՝ եթե ինչ-որ պատճառով կողմերի ընկալման հորիզոնները չեն համընկնում, ապա կարելի է ենթադրել, թե կողմերից մեկի ներդրած նշանակությունը համապատասխանում է ցանկացած մեկի, այսինքն՝ վերացական երրորդ անձի ընկալմանը: Այս միտքն էլ, իր հերթին, ընկած է **մեկնաբանման օբյեկտիվ տեսության** հիմքում:

Սակայն չպետք է մոռանալ, որ լեզուն և ընկալումն ամուր կապված են միմյանց հետ, քանզի *լեզուն հասկացողության պայմանն է*: Այս միտքը Հ. Գ. Գադամերը ձևակերպում է հետևյալ կերպ. հասկանալ այն, ինչ ասում է ուրիշը, նշանակում է փոխըմբռնման գալ խնդրի էության հարցում, այլ ոչ թե քեզ դնել դիմացինի տեղում ու վերարտադրել նրա զգացումները: Պետք է ուշադրություն դարձնել, որ այս ողջ պրոցեսը հենց լեզվային պրոցես է: Պատահական չէ, որ անհատական հասկացողության խնդիրը՝ հասկացողությունը որպես արվեստ տիրապետելու փորձը, որն ինքնին հերմենևտիկա է, ավանդապես պատկանում է լեզվաբանության և հռետորաբանության ժանրին: Լեզուն է համարվում այն միջավայրը, որտեղ տեղի է ունենում գրուցակիցների փոխադարձ պայմանավորվածությունը, և ձեռք է բերվում գործի էության շուրջ փոխըմբռնում²⁵:

Կարելի է փաստել, որ խոսքի օբյեկտիվ բազմիմաստությունը և ընկալման սուբյեկտիվ տարբերություններն ամուր կապված են միմյանց հետ, քանզի պայմանագրում կիրառվող բառերի և բառակապակցությունների նշանա-

²² Стів Зайцев І. Д. Інтерсуб'єктивність як проблема соціальної філософії: Автореферат дис...., канд. філософ. наук, М., 2008, էջ 4:

²³ Стів Шюц А. Избранное: Мир светящийся. М., 2004, էջ 14:

²⁴ Стів նույն տեղը:

²⁵ Стів Гадамер Х. Г. Истина и метод, Основы философской герменевтики, М, 1988, էջ 446-447:

կությունն ուղղակիորեն կախված է կիրառելու համատեքստից, ինչի որոշման հնարավորությունն էլ, իր հերթին, կախված է կողմերի ընկալման հորիզոններից:

Այդ իսկ պատճառով, խոսելով պայմանագրի բովանդակության մեջ առկա հակասությունների պատճառների մասին՝ պետք է առանձնացնել օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալներ: Առաջինը կապված է պայմանագրում օգտագործվող բառերի նշանակության բազմակիության, իսկ երկրորդը՝ կողմերի ընկալման հորիզոնների անհամապատասխանության հետ: Ընդ որում՝ այս երկու նախադրյալի առանձնացումն ունի նաև կարևոր գործնական

նշանակություն: Այսպես՝ օբյեկտիվ նախադրյալի առկայության հաստատման տրամաբանական արդյունքն այն է, որ հնարավոր է որոշել մեկնաբանման անհրաժեշտության առկայությունը կամ բացակայությունը: Իսկ սուբյեկտիվ նախադրյալը հնարավորություն է տալիս փաստելու, որ մեկնաբանման վեճը կարող է պայմանավորված լինել ինչպես անորոշությամբ, այնպես էլ այլ հանգամանքով (օրինակ՝ դատական պրոցեսում կողմերից մեկի դիտավորյալ գործողությամբ, որը ցանկանում է խուսափել պայմանագրային պատասխանատվությունից՝ հղում կատարելով պայմանի անորոշությանը)²⁶:



²⁶ Տե՛ս Burton S. j. նշվ աշխ. էջ 9:

ԼՈՒՍԻՆԵ ԹԱՍԱԼՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս, ոստիկանության ավագ լեյտենանտ

**ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ինչպես գիտենք՝ Հայաստանի Հանրապետությունում հաշտարարությունը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային միջոց և արդարադատությանն օժանդակող իրավական ինստիտուտ, նոր է: Իրավական համակարգում դա իր տեղը և դերը ստանձնեց 2015 թվականի մայիսի 7-ին Ազգային ժողովի կողմից օրենսդրական փոփոխությունների և լրացումների միջոցով: Իսկ հիմնադիր փաստաթուղթ կարող ենք համարել քաղաքացիական և առևտրային իրավունքի ոլորտում վեճերի լուծման այլընտրանքային կանաչ փաստաթուղթը (ՎԼԱ) և Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը:

ՀՀ դատական օրենսգրքում, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ՀՀ ընտանեկան և ՀՀ պետական տուրքի մասին օրենքներում ամրագրվեցին այնպիսի նորմեր, որոնք թույլ են տալիս կարգավորել հաշտարարության ինստիտուտի ձևավորման կարգը և հաշտարարի գործունեությունը:

Հաշտարարություն իրականացվում է քաղաքացիաիրավական, աշխատանքային և ընտանեկան բնույթի գործերով: Իսկ հաշտարարության վերաբերյալ համաձայնությունը որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված գրավոր համաձայնություն է:

Հաշտարարի՝ հաշտարարության գործընթացն իրականացվում է օրենքից բխող սկզբունքներով՝ առաջնորդվելով կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

Օրենսդիրը շատ հակիրճ և նրբանկատորեն է շարադրել հաշտարարի իրավունքները և պարտականությունները:

Ըստ իս՝ միևնույն ժամանակ սահմանված ցանկացած իրավունքի և պարտականության տողատակերում հասկանում ենք, որ հաշտարարն իր գործունեությունը պետք է իրականացնի մաքրամաքուր, չգրված ներքին սկզբունքով: Հաշտարարը հաշտարարություն իրականացնելուց հրաժարվելու իրավունք ունի, եթե կարծում է, թե իր մասնակցությունը հաշտարարության գործընթացին կհանգեցնի հաշտարարության որևէ սկզբունքի խախտման:

Միևնույն ժամանակ՝ այս կամ այն իրավունքի անարգել իրականացման երաշխիքների թվում հանդես է գալիս նաև տվյալ իրավունքի իրականացման կարգի հստակ իրավական կարգավորումը:

Ներպետական իրավական նորմերի համաձայն՝ հաշտարարություն իրականացվում է արտադատական և դատավարության ընթացքում՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում դատավարության ընթացքում մինչ վճռի հրապարակումը:

Կարող ենք հաշտարարությունը միաժամանակ դիտարկել՝ որպես քաղաքացիական դատավարության իրավունքի ինստիտուտ կամ դրան սերտ կապված ենթաճյուղ, քաղաքացիական գործընթացի փուլ է և սուբյեկտիվ իրավունքի իրացման ձև: Հաշտարարությունը որպես քաղաքացիական գործընթացի փուլ քաղաքացիական ընթացիկ փուլն է և շատ հաճախ վերջնական կարող է հանդիսանալ: Այս դեպքում ավարտը նշանակում է դատավարական փուլի կամ գործընթացի հաջորդ փուլի արագ անցում:

Թեպետ դատական փուլի կամ գործընթացի հաջորդ հաշտարարության փուլի անցումը չի նշանակում սուբյեկտիվ իրավունքների կամ դատավարության կողմերի իրավունքների դադարում, դրանք կարող են շարունակ-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

վել նաև դատական գործընթացի հաջորդ փուլերում, եթե համաձայնությունը չի կնքվում, կնքված հաշտության համաձայնությունը ոչ իրավաչափ է կամ հակասում է երրորդ անձանց շահերին:

Հաշտարարության փուլի անցման կողմերի իրավունքն անհրաժեշտ է տարբերակել դատավարության սուբյեկտի կամ կողմերի իրավունքների իրացումից: Հաշտարարության փուլի անցնող կողմերը, բացի հաշտության իրավունքից, ունեն օրենսդրական նորմերի հետ չկապված այլ իրավունքներ, և այդ իրավունքներից մեկն էլ հաշտարարության կողմերի իրենց իսկ ներկայացրած փոխշահավետ կամ այլընտրանքային ձևով վեճի լուծումը, օրենքից չկառչելու կամ չկաշկանդվելու իրավունքն է:

Օրենքից չկառչելը կամ չկաշկանդվելը ենթադրում է նաև օրենքով չսահմանափակվելու և օրենքին չհակասող լուծման հնարավորություն, որը հաշտարարության կողմերի իրավունքն է:

Կարելի է ենթադրել, թե այս դեպքերում շրջանառությունից հանվում է մեզանում տարածված «գործի հաղթող և պարտվող» հասկացությունը:

Նկատի ունեմ՝ հաշտարարությամբ վեճի լուծման տարբերակում, քանի որ սովորաբար դատավարության կողմերից մեկը դատարանի վերջնական որոշումը չընդունվելու դեպքում համարում է իրեն պարտված՝ բացառությամբ, եթե հայցվորը հրաժարվում է հայցից կամ դիմումից: Գործնականում չի բացառվում, որ պարտվող հանդիսանա այն անձը, ով հայցը ներկայացրել է, սակայն իր իրավունքները խախտվել են:

Այնուամենայնիվ, կարծում եմ՝ հայցից հրաժարվելու կամ բողոքարկելու իրավունքի դեպքում կիրառել «պարտվող կամ հաղթող կողմը» հասկացությունը սխալ է, քանի որ սահմանված չէ օրենքով, այլ գործում է կողմերի տրամաբանությամբ: Այսպես՝ Քաղաքացիական դատավարության ՀՀ օրենսգրքի որևէ հոդվածի համաձայն կամ հոդվածի կետով նման բան չի սահմանված: Բարեբախտաբար օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացմամբ Ազգային ժողովի որևէ պատգամավոր հանդես չի եկել:

Փաստորեն, անգամ կողմերի գիտակցության մեջ հաշտարարության դեպքում նման տերմիններ չեն կարող ծագել՝ անկախ այն հանգամանքից, թե դատական կամ արտադատական կարգով է վեճը հաշտությամբ լուծվել: Հստակ կարող ենք ասել, որ այս դեպքում կողմերի միջև էլ ավելի է զարգանում բանակցությունների միջոցով վեճ լուծելը, անգամ կարող ենք ասել, որ հաշտարարությունը նպաստում է մարդու գիտակցության և իրավագիտակցության զարգացմանը:

Ավելին՝ կողմերն իրենց իսկ վեճի բանակցողներն են, և գործն ավարտվում է իրենց կայացրած որոշմամբ: Երբ դատավարության կողմերն օրենքի պահանջներին համապատասխան միջնորդություն են ներկայացնում դատարանին, որ գործը լուծվի հաշտությամբ, այդ պահին հաջորդում է հաշտարարության վարույթը, իսկ կողմերի հաշտությամբ վեճը լուծելու նախաձեռնության իրավունքը՝ իրականացված: Այդ պահից, ըստ էության, սկսվում է դատական կարգով վեճի լուծման գործընթացի հաջորդ փուլը կամ հաշտարարության փուլը: Հետևաբար՝ դատավարական փուլերի և հաշտարարության փուլի գործընթացը տարբեր և հաջորդող փուլեր են, ուստի հաշտարարության փուլին անցնել՝ չի նշանակում դատական կարգով իրավունքների պաշտպանությունից հրաժարվել:

Ակնհայտ է, որ անհրաժեշտություն կա հստակ իրազեկել ու մեկնաբանել կողմերի դատական կարգով և հաշտարարության միջոցով վեճը լուծելու առավելության վերաբերյալ:

Այդ իրավունքի իրականացմանն առնչվող մյուս կարևոր հարցադրումն այն է, թե կողմը դատավարության մինչև ի՞նչ փուլն իրավունք ունի դիմել հաշտարարության: Կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ:

Կարելի է փաստել, որ հաշտության գործընթացի հիմնական և բովանդակային աշխատանքը կատարվում է հաշտարարի կողմից: Դա են վկայում նաև այն բոլոր իրավական նորմերը, որոնք կարգավորում են հաշտարարի ինստիտուտը: Հաշտարարի աշխատանքն ավարտվում է կողմերից առնվազն մեկի, կամ հաշտարարի կողմից գործընթացը դադարեց-

նելու, կամ հաշտարարության շնորհիվ հաշտության համաձայնություն կնքելու միջոցով:

Գործնականում հաշտության իրավունքը կողմերին չիրազեկելը, խոչընդոտելը կամ բացասական կարծիք արտահայտելով ներկայացուցչի կողմից հանդես գալը, կարծում եմ, ողջամիտ չէ:

Ինչպես հասկացանք՝ օրենսդիրը սահմանել է հաշտարարության արտադատական և դատավարության փուլում կողմերի կամավոր դիմելաձև, ինչպես նաև հաշտարարի ինքնուրույն գործունեություն: Սակայն բազմիցս նշել եմ, որ հաշտարարությունը, լինելով արդարադատությանն օժանդակող ինստիտուտ, պետք է ստանա իր գործունեությունն իրականացնելու անհրաժեշտ պետական աջակցություն, որն էլ կնպաստի հաշտարարության ինստիտուտի զարգացմանը:

Ավելի հստակ՝ կարծում եմ, որ հաշտարարի դերի բարձրացման և ինստիտուտի կայացման համար ոչ թե դատավորները, փաստաբանները կամ հանրային իրազեկումը պետք է նպաստեն, այլ հենց մինչդատական վարույթում որոշ գործերի համար անհրաժեշտ է սահմանել հաշտարարության դիմելու պարտադիրության սկզբունք, օրինակ՝ ամուսնալուծության, խնամակալության, ալիմենտի, ժառանգման և աշխատանքային իրավունքից բխող վեճերը: Նշված վեճերը պետք է պարտադիր մինչդատական վարույթի գործեր լինեն. իհարկե, դա չպետք է սահմանափակի այս փուլից հրաժարվելու համար դատավարության ցանկացած փուլում հաշտության գնալու իրավունքը:

Եթե ուսումնասիրենք մայրցամաքային երկրներում հաշտարարության ծագման և զարգացման փորձը, ապա կտեսնենք, որ արդարադատության և մինչդատական վարույթի պարտադիր լինելը մեծ դեր է ունեցել: Օրինակ՝ հունական կառավարությունը ձեռնարկել է այս ոլորտում շատ ակտիվ դիրքորոշում, որի նպատակն է այնպիսի պայմաններ ստեղծել քաղաքացիների համար, որոնք թույլ են տալիս նրանց ավելի մեծ չափով պատասխանատվություն կրել

այն հակասությունների լուծման համար, որոնց կողմերը նրանք են:

Նաև առաջարկվել է տեղեկատվություն տրամադրելու հնարավորությունների հաշտարարության վերաբերյալ, հաշտարարների ծառայությունների վերաբերյալ յուրաքանչյուր դատարանում ստեղծել կենտրոնական տեղեկատվական կենտրոն: Այդ իրավական տեղեկատվական «պատուհանները» քաղաքացիներին տրամադրում են խորհրդատվություն, որ նրանք իրենց խնդիրների լուծման համար կարողանան ընտրել առավել հարմար կարգ:

Հաշտարարության ինստիտուտի կայացման և հաշտարարի դերի գնահատման համար ներպետական համակարգում, կարող եմ ասել, հոլանդական աջակցության ձևը ոչ թե պետք է նկատի ունենալ, այլ անհրաժեշտ է և ընդօրինակելի:

Գերմանիայում հաշտարարությունը ներդաշնակորեն ինտեգրված է արդարադատության համակարգում: Օրինակ՝ հաշտարարները ուղղակիորեն աշխատում են դատարանների հետ՝ զգալիորեն նվազեցնելով մի շարք պրոտենցիալ հայցեր: Այսօր հաշտարարությունը ոչ միայն ընտանեկան հարցերում է ինտեգրված գերմանական դատարաններին, այլև ընդհանուր դատական համակարգին, վարչական դատարաններին և այլն: Գերմանական շատ իրավական դպրոցներում մշտապես ուսումնասիրում են հաշտարարություն: Այսինքն՝ յուրաքանչյուր ոք, ով գալիս է բուհի իրավագիտության ֆակուլտետ, անցնում է հաշտարարության դասընթաց¹:

Սակայն ոչ բոլոր երկրներում է հաշտարարությունը ճանաչվում որպես առանձին մասնագիտություն: Շատ երկրներում դա դիտվում է երկրորդ կամ հիմնական մասնագիտության լրացում: Օրինակ՝ Ավստրիան այն սակավաթիվ երկրներից է աշխարհում, որտեղ հաշտարարի մասնագիտությունն ընդգրկված է մի շարք մասնագիտությունների շարքում: Ավելին՝ Ավստրիան միակ երկիրն է, որը 2004թ. ընդունել է Դաշնային օրենքը հաշտարարության ինստիտուտի հիման վրա, որը կարգավորում է

¹ Стн Федеральный закон Российской Федерации от 23 июля 2013 г. N 233-ФЗ «О внесении изменения в статью 18 Федерального закона «Об альтернативной процедуре урегулирования споров с участием посредника (процедуре медиации)».

հաշտարարների ուսուցումը և սահմանում որոշակի վերապատրաստման չափանիշներ²:

Հայաստանում ևս այդպես է, օրինակ՝ փաստաբանը նաև ունի հաշտարարի արտոնագիր, բայց զբաղվում է հիմնականում փաստաբանությամբ, և կարելի է ասել, որ իրենք իրենց ներքին զգացողությամբ փաստաբան են, դա վկայում է այն, որ այդ ոլորտում ունեն բազմաթիվ գործեր, իսկ հաշտարարության գործերի բացակայության պատճառը բարդում են դատարանների վրա: Սակայն անդրադառնամ ներպետական ինստիտուտին, խնդիրներին, և իմ կարծիքով՝ ոլորտի զարգացման համար որպես օրինակելի և ընդունելի են և՛ Գերմանիայի, և՛ Հոլանդիայի մոդելները³, քանզի համարում եմ, որ հաշտարարությունը ինքնուրույն մասնագիտություն է և պետք է դասավանդվի բոլոր իրավաբանական ֆակուլտետներում:

Սակայն, իմ կարծիքով՝ հաշտարար պետք է լինի բացառապես պարտադիր բակալավրի աստիճանով իրավաբանական կրթություն ունեցող անձ, կրկին շեշտում եմ և հիմնավորում այն փաստով, որ մեր գործունեության ընթացքում ցանկացած քայլ կատարելիս պետք է հետևել օրենքի տառին և կարողանալ հասկանալ վեճի առարկան. ի վերջո՝ հաշտարարը արդարադատությանն օժանդակող է: Օրինակ՝ պատկերացրեք, թե դատավորը կամ նոտարը լինի տնտեսագետ, այս դեպքում ինչ կլինի արդարադատության իրականացման ընթացքում, պատասխանը մեկն է՝ իհարկե, ողբերգություն:

Վերոգրյալի համաձայն՝ առաջարկում եմ հետևյալ օրենսդրական փոփոխությունները.

1. Մինչդատական վարույթի պարտադիր

բնույթի գործեր սահմանել՝ ընտանեկան, աշխատանքային, ժառանգության բնույթի բոլոր վեճերը:

2. Հաշտարարության ինստիտուտի կայացման և դատական համակարգի ինտեգրման, ինչպես նաև արդարադատությանն օժանդակ ինստիտուտի դերի կայացման համար անհրաժեշտ է պետական աջակցություն և հսկողություն, ինչը չունենք մենք այսօր:

Միանշանակ՝ չի կարելի դա քննադատություն ընդունել, պետությունը կարող է և, կարծում եմ՝ նաև պարտավոր է հարկային արտոնություններ տրամադրել հաշտարարներին ու հաշտարարական ընկերություններին, քանզի այս ինստիտուտը նոր է և կայացման ուղիում ունի բազում խնդիրներ, այդ իսկ պատճառով հարկային արտոնություններ տրամադրելն անհրաժեշտություն է, ինչպես նաև ժամանակավոր անհատույց գրասենյակային պայմաններ՝ առաջիկա հինգ տարիների համար:

Այդ կառուցակարգի իրավական ամրագրման դեպքում երկուստեք կշահեն և՛ հաշտարարության նախաձեռնողը, և՛ դատավարության կողմերը, քանի որ, մի կողմից՝ ապարդյուն չի անցնի սկզբնական նախաձեռնության հեղինակի արդեն կատարած աշխատանքը, մյուս կողմից՝ կողմերը գործընթացը շարունակելու որոշակի հիմք կունենան իրավունքի իրականացման համար:

Վերոհիշյալ եզրահանգումները և առաջարկությունները, կարծում եմ, օգտակար կլինեն, կնպաստեն մարդու իրավունքների և հաշտարարության ինստիտուտի զարգացմանն առնչվող իրավական ամրագրման հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար:



² Տե՛ս Федеральный закон Российской Федерации от 23 июля 2013 г. N 233-ФЗ/12.04.2017թ/: «О внесении изменения в статью 18 Федерального закона «Об альтернативной процедуре урегулирования споров с участием посредника (процедуре медиации)».

³ Տե՛ս GeramiA. Bridging the Theory-and-Practice Gap: Mediator Power in Practice // Conflict Resolution Quarterly.- 2009.- Vol. 26.- №4.- P. 433-451.- P. 435.

ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳՈՐԾԱՊԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՈՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՄ

Սահմանադրաիրավական զարգացումների արդի պայմաններում գործադիր իշխանության՝ որպես պետության հանրային իշխանության ինքնուրույն և անկախ դրսևորման գործունեությունն արտացոլվում է ընդհանուր իրավասության կառավարչական մարմինների գործունեության մեջ՝ նպատակ ունենալով ապահովել օրենսդիր մարմնի կողմից ընդունված և սահմանադրությամբ նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտերի կենսագործմանը՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում առկա հարաբերությունների կարգավորման նպատակով:

Որպես գործադիր իշխանության բնութագրիչ գծեր՝ իրավաբանական գրականության մեջ առանձնացնում են հետևյալները՝ ա) գործադիր իշխանությունը պետական իշխանության ինքնուրույն թև է, որը սերտորեն համագործակցում է ինչպես օրենսդիր, այնպես էլ դատական իշխանության հետ: Նա ինքնուրույն է թե՛ գործառնական, թե՛ իրավասության բնագավառում, և նրա հիմնական գործառույթն օրենքների կիրառումն է, բ) գործադիր իշխանությունը համապետական մասշտաբով իրականացվում է պետականորեն կազմակերպված հասարակության անհատական և կոլեկտիվ բազմաթիվ բաղադրատարրերի հետ հարաբերություններում՝ որպես իրավակիրառական բնույթ ունեցող պետաիշխանական գործառույթ, գ) գործադիր իշխանությունն իր արտահայտությունն է գտնում գործադիր իշխանության մարմինների կազմակերպական բնույթ ունեցող գործադիր գործունեությամբ, դ) գործադիր իշխանության մարմինների անմիջական տնօրինման և տիրապետման տակ են գտնվում պե-

տական իշխանության էական բաղադրամասերը:¹

Տեսական գրականության մեջ արտահայտված մեկ այլ տեսակետի համաձայն՝ գործադիր իշխանությունը բնորոշում է որպես հասարակության և պետության կառավարմանն ուղղված գործունեություն տարատեսակ, որի հիմքում, ըստ էության, ընկած է պետական կառավարումը, վերահսկվում է պետական իշխանության այլ թևերի կողմից և արտահայտվում է պետական իշխանության մարմինների հատուկ համակարգի կողմից օրենքով սահմանված իրենց իրավասության շրջանակներում իրականացվող գործառույթներով:

Որպես գործադիր իշխանությանը բնորոշ բնութագրիչ գծեր՝ առանձնացվում են՝ ա) գործադիր իշխանությունը միասնական պետական իշխանության ինքնուրույն թև է, որը մշտապես և անդադար իրականացվում է գործադիր իշխանության մարմինների կողմից, բ) գործադիր իշխանության կազմակերպմանը և գործունեությանը բնորոշ է ենթաօրենսդրական բնույթ, գ) գործադիր իշխանությունը պատասխանատու է իր կառավարչական գործողությունների և ընդունված վարչական ակտերի համար, դրանք իրականացնում է պլանավորված և ծրագրավորված ու բացառապես իր իրավասության սահմաններում:²

Գործադիր իշխանությունը վարչական իշխանությունն է՝ ժողովրդավարական և իրավական պետության պայմաններում: Իր հերթին՝ վարչական իշխանություն եզրույթը կարելի է մեկնաբանել երկու տեսանկյունից՝ իրավաբանական և քաղաքագիտական: Իրավաբանական տեսանկյունից՝ վարչական իշխա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

¹ Տե՛ս Административное право (под ред. Козлова Ю.М., Попова Л.Л.), М., 2000, էջ 28:

² Տե՛ս Стариков Ю.Н. Курс общего административного права, Т. 1, М., 2002, էջ 89-98:

նությունը մեկնաբանվում է որպես պաշտոնական ղեկավարների իրավունքը և հնարավորությունը՝ կառավարելու որևէ սուբյեկտի, իրենց կամքին ենթարկելու այլ անձանց և հրապարակելու իշխանական ակտեր: Քաղաքագիտական տեսանկյունից՝ այս եզրույթն ընդգրկում է քաղաքական-իրավական երևույթների ամբողջական մի համակարգ, և ամենից առաջ՝ հանրային վարչակազմը, նրա մարմինների և ծառայողների իրավասությունը, նրանց գործունեությունը:³

Արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ գործադիր իշխանությունը բնորոշվում է որպես պետական քաղաքականությունը ձևավորող և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում դրա իրականացման համար պատասխանատվություն կրող պետական իշխանության թև:⁴ Իրավաբանական հանրագիտարաններում գործադիր իշխանությունը, իշխանությունների տարանջատման հայեցակարգին համապատասխան, բնորոշվում է որպես ինքնուրույն և անկախ հանրային իշխանություն, որը, հանդիսանալով միասնական պետական իշխանության 3 թևից մեկը, կոչված է ապահովելու օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի կենսագործումը և իրականացնելու պետության գործերի անմիջական կառավարումը:⁵ Որպես միասնական պետական իշխանության թև՝ դա պետական գործերի կառավարմանն ուղղված լիազորությունների ամբողջություն է՝ ներառելով ենթաօրենսդրական իրավակարգավորման, արտաքին քաղաքական ներկայացուցչության ոլորտին առնչվող լիազորությունները, տարաբնույթ վարչական վերահսկողության, երբեմն՝ օրենսդրական լիազորություններ:⁶

Համադրված դիտարկելով վերոնշյալ սահմանադրաիրավական բնութագրիչները՝ կարծում ենք, որ գործադիր իշխանությունն իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում հանդես է գալիս որպես միասնական պետական իշխանության անկախ և

ինքնուրույն թև, որը ներառում է պետության գործերի ամենօրյա և անմիջական կառավարմանն ուղղված լիազորությունների համախումբը, որոնք իրականացվում են պետական-իշխանական լիազորություններով օժտված պետական իշխանության մարմինների կողմից իրականացվող ենթաօրենսդրական բնույթի գործադիր գործունեությամբ՝ սերտորեն համագործակցելով պետական իշխանության մյուս երկու՝ օրենսդիր և դատական թևերի հետ:

Գործադիր իշխանության անկախությունը և ինքնուրույնությունն իրենց դրսևորումն են ստանում նրա թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ գործառնական ոլորտում: Ընդ որում՝ այս առումով հարկ է նկատի ունենալ, որ պետական իշխանության և ոչ մի թև բացարձակ անկախ չէ և չի կարող լիովին ինքնուրույն գործել: Բոլոր երեք իշխանությունները փոխկապակցված են միմյանց հետ, ինչը, սակայն, չպետք է հանգեցնի իշխանության մեկ թևի փոխարինմանը մյուսով:

Հիշյալ բնորոշմամբ, սակայն, առաջ են գալիս երկու կարևոր հարցադրումներ, այն է՝ ի՞նչ պետական մարմիններն են իրավասու իրականացնելու գործադիր իշխանություն, և լիազորությունների ի՞նչ համախումբն է կոչվում գործադիր իշխանություն:

Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանությունն իրականացնում է ՀՀ կառավարությունը, որի կարգավիճակը՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, սահմանված է երկրի հիմնական օրենքի՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ գլխում: Բացի այդ՝ ՀՀ Սահմանադրության մյուս գլուխներում ամրագրված բազմաթիվ հոդվածներ նույնպես դրույթներ են պարունակում տարբեր բնագավառներում Հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի իրավական կարգավիճակի վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ, ի տարբերություն 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի, որի առաջին

³ Տե՛ս Бахрах Д.Н. Административное право: Учебник для ВУЗов, М., 2000, էջ 8-14:
⁴ Տե՛ս Hillaire Barnett «Constitutional and Administrative law», Oxford University Press, 2002, էջ 99-100:
⁵ Տե՛ս Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право: Энциклопедический словарь, Москва, 2006, էջ 184-185, Тихомирова Л.В., Тихомиров М.Ю. Юридическая энциклопедия, издание 5-е, дополненное и переработанное, (под ред. Тихомирова М.Ю.), М., 2006, էջ 382:
⁶ Տե՛ս http://ru.wikipedia.org/wiki/executive_branch, կամ <http://dic.academic.ru/dic.nsf/lower/15162>:

մասն ամրագրում էր, որ Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանությունն իրականացնում է ՀՀ կառավարությունը, 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների հետևանքով 85-րդ հոդվածից հանվել է այդ դրույթը, ինչի պատճառով առաջացել է մի իրավիճակ, երբ երկրի հիմնական օրենքը չի սահմանում, թե ո՞ր պետական մարմինն է վերապահված գործադիր իշխանության իրականացման իրավասությունը: Այս առումով բացառություն չէ նաև 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը, որի 146-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածն ազդարարում է, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ նմանատիպ իրավակարգավորումը որևէ կերպ չի բխում սահմանադրական կարգի հիմնասյուն հանդիսացող իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքից, քանի որ պետական իշխանության տարանջատումը թևերի և դրանք իրականացնող մարմինների սահմանումը բացառապես սահմանադրաիրավական կարգավորման առարկա են:

Անդրադառնալով գործադիր իշխանության իրավասությանը վերապահված լիազորություններին՝ հարկ է առաջին հերթին նկատել, որ «լիազորություն» եզրույթը բնորոշվում է որպես պետական մարմնի, պաշտոնատար անձի, կազմակերպության կառավարչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձի, ինչպես նաև օրենսդրությամբ կամ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերով սահմանված գործառույթներն իրականացնող այլ անձանց իրավասության և իրավական կարգավիճակի բաղկացուցիչ մաս, որը ներառում է համապատասխան իրավասությունների իրավունքը (միաժամանակ նաև՝ պարտականությունը) որոշակի իրավիճակներում գործելու օրենքով

կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով և ձևերով:

Գործադիր իշխանության մարմիններին վերապահված լիազորությունների ծավալը և բնույթը կանխորոշվում են գործադիր իշխանության գործառույթներով: Վերջիններս իրենց հերթին բնորոշվում են որպես գործադիր իշխանության մարմինների գործունեության ուղղություններ, որոնցում իրենց արտահայտությունն են գտնում պետական իշխանության տվյալ թևի էությունը, սահմանադրաիրավական բովանդակությունը և նշանակությունը:

Տեսական գրականության մեջ գործադիր իշխանության գործառույթները պայմանականորեն տարանջատված են երկու մակարդակի: Առաջին մակարդակը ներառում է երեք հիմնական գործառույթներ, որոնք հիմնարար նշանակություն ունեն հասարակական կյանքի համար և ելնում են գործադիր իշխանության սուբստանցիոնալ բնույթից: Դրանց շարքն են դասվում հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովման, կանոնակարգող-կառավարչական, որը տնտեսության, ֆինանսների, մշակույթի, գիտության, կրթության, առողջապահության, պաշտպանության, արտաքին և ներքին գործերի բնագավառների ղեկավարմանն ուղղված գործունեությունն է, ինչպես քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման գործառույթները:

Երկրորդ մակարդակի գործառույթները, ուղղված լինելով հիմնական գործառույթների իրականացման ապահովմանը, ստանում են օժանդակող բնույթ: Որպես կարևորագույն օժանդակող գործառույթ է մատնանշվում գործադիր իշխանության մարմինների իրավաստեղծագործությունը, որն իր արտահայտությունն է գտնում գործադիր իշխանության մարմինների կողմից կառավարչական նորմատիվ ակտերի հրապարակման մեջ: Մեկ այլ օժանդակող գործառույթ է օպերատիվ-կատարողական գործառույթը, որն արտահայտվում է գործադիր իշխանության մարմինների կողմից օրենքների կամ այլ նորմատիվ-իրավական ակտերի նորմերի կատարման ապահովման մեջ:⁷

⁷ Стів Бельский К.С. О функциях исполнительной власти // Государство и право, 1997, N3, էջ 14-21:

Առանձնացվում են նաև գործադիր իշխանության այնպիսի կարևորագույն գործառույթներ, ինչպիսիք են գործադիրը, այսինքն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարման գործառույթը, իրավապահպանը, այսինքն՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության գործառույթը, բնակչության բարեկեցության բարձրացմանն ու հանրային շահերի բավարարմանն ուղղված սոցիալ-տնտեսական գործառույթը, օրինականության և սահմանադրական կարգի պահպանման գործառույթը, կարգավորման գործառույթը, որի շրջանակներում իրականացվում է ղեկավարում, վերահսկողություն, համակարգում, հաշվառում, կանխատեսում և այլն, նորմաստեղծ և պահպանման գործառույթները:

Անհրաժեշտ է նշել, որ գործադիր իշխանության գործառույթները, իրենց հերթին, սերտորեն փոխկապակցված են պետության գործառույթների հետ, որոնք պայմանավորված են արդի զարգացումների փուլում պետության առջև ծառայած խնդիրների և դրված նպատակների հետ: Դրան համապատասխան՝ պետության պատմական զարգացման հետևանքով՝ գործադիր իշխանության գործառույթների համակարգում տեղի ունեցած որոշակի փոփոխությունների շնորհիվ առաջացան գործունեության նոր ուղղություններ, որոշները կորցրեցին իրենց անհրաժեշտությունը, փոփոխվեց մյուսների բովանդակությունը, սակայն անփոփոխ մնաց գործադիր իշխանության գործադիր գործառույթը, որը հիմնարար նշանակություն ունի մյուս բոլոր գործառույթների համար:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կառավարության՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմնի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Կառավարության իրավասությանն են ենթակա գործադիր իշխանությանը վերաբերող բոլոր այն հարցերը, որոնք վերապահված չեն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման այլ մարմինների: ՀՀ կառավարության՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմնի լիազորությունները կազմում են նրա սահմա-

նադրաիրավական կարգավիճակի կարևորագույն և անբաժանելի մասը: Իրականացնելով ՀՀ գործադիր իշխանությունը՝ կառավարությունն իր իրավասության սահմաններում կառավարում է Հանրապետության տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական գործունեության բոլոր հիմնական ոլորտներն ու ճյուղերը: Նա համակարգում, միավորում և վերահսկում է հանրապետական գործադիր և տարածքային կառավարման մարմինների աշխատանքը, որոշում է դրանց խնդիրները, միջոցներ ձեռնարկում այդ մարմինների համակարգի, աշխատանքի ձևերի ու մեթոդների կատարելագործման ուղղությամբ:

Դրա հետ մեկտեղ՝ հարկ է արձանագրել, որ 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանվեցին պետության քաղաքականության հիմնական նպատակները, որոնք, ըստ էության՝ ունեն պարտադիր բնույթ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար և իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները: Մասնավորապես՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

- 1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը,
- 2) բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը,
- 3) բնակարանային շինարարության խթանումը,
- 4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը,
- 5) ծնելիության և բազմազավակության խթանումը,
- 6) երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը,
- 7) բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը,
- 8) հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը,
- 9) սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայու-

թյունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը, 10) տարածքային համաչափ զարգացումը, 11) ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը, 12) քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը, 13) անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը, 14) հիմնարար և կիրառական գիտության զարգացումը, 15) ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը, 16) բարեգործության խթանումը՝ մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Այս համատեքստում հարկ է նաև նկատել, որ թվարկված նպատակներն իրենց սահմանադրաիրավական բովանդակությամբ կանխորոշիչ բնույթ ունեն նաև կառավարության գործունեության համար, քանի որ ՀՀ Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված՝ Ազգային ժողովին ներկայացվող տարեկան զեկույցի շրջանակներում նա պարտավոր է տեղեկատվություն ներկայացնել այդ նպատակների իրագործման վերաբերյալ:

Քննարկվող հիմնախնդիրների դիտարկման համատեքստում կարևորվում է նաև «պետական կառավարում» և «գործադիր իշխանություն» եզրույթների հարաբերակցության բացահայտման հիմնահարցը:

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի կարծիքով՝ պետական կառավարում եզրույթը պետք է դիտարկել երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով դիտարկելիս դա պետության կանոնակարգող ներգործությունն է՝ ուղղված հասարակական հարաբերությունների նկատմամբ դրանց՝ որոշակի իրավիճակի բերելուն: Այս իմաստով դիտարկելիս պետական կառավարումն իրականացվում է ողջ պետական ապարատի կողմից և ողջ պետական իշխանության գործառույթն է ու նպատակը: Սոցիալական կառավարման այլ տարատեսակներից դա տարբերվում է իր հանրային իշխանական և իրա-

վական բնույթով: Պետական կառավարումն իրականացվում է վարքագծի համապարտադիր կանոնների՝ իրավական նորմերի սահմանման և դրանց կատարման ապահովման միջոցով՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով պետական հարկադրանքի միջոցներ: Ընդ որում՝ պետական կառավարման բաղկացուցիչ մաս հանդիսացող գործունեության բոլոր տեսակները կարգավորվում են իրավական նորմերով և պետական կառավարում իրականացնելիս բոլոր պետական մարմինները և պաշտոնատար անձինք գործում են այն ձևերով և կարգով, որոնք սահմանված են Սահմանադրությամբ, օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով նախատեսված իրենց իրավասությամբ:⁸

Նեղ իմաստով դիտարկելիս պետական կառավարումը գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացվող, սոցիալական հարաբերությունների որոշակի օբյեկտների և բնագավառների, ինչպես օրինակ՝ պետական սեփականություն, կրթություն, առողջապահություն, պաշտպանություն, սոցիալական ապահովություն, ամենօրյա անմիջական կառավարմանն ուղղված գործադիր-կարգադրիչ գործունեություն է: Պետական կառավարումն ունի խիստ ենթաօրենսդրական բնույթ, այսինքն՝ իրականացվում է օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի պահանջների: Պետական կառավարման իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասությունը վերապահվում է օրենսդիր և դատական իշխանության մարմիններին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարելի է եզրակացնել, որ գործադիր իշխանությունը նույնական չէ պետական կառավարման հետ, քանի որ վերջինս հանդես է գալիս որպես պետական-իշխանական գործունեության որոշակի տարատեսակ, որի շրջանակներում գործնականում իրականացվում է գործադիր իշխանությունը: Գործադիր իշխանությունը, ըստ էության, առավելապես քաղաքական-իրավական կատեգորիա է, իսկ պետական կառավարումը՝ կազմակերպական-իրավական: Վերջինս իր գործառույթային նշանակությամբ, ըստ էության, կազմում է պետական կառավարչական գոր-

⁸ Տե՛ս Арутюнян Г.Г., Баглай М.В. Նշված աշխ., էջ 107:

ծունեության բովանդակությունը: Ընդ որում՝ գործադիր իշխանությունը գործնականում իրականացվում է պետական ապարատի հատուկ օղակի՝ գործադիր իշխանության մարմինների կողմից, որոնք, ըստ էության, հանդես են գալիս որպես պետական կառավարման մարմիններ:

«Սահմանադրությունը, ինչպես նաև օրենսդրության վերլուծությունը վկայում են, որ որպես պետաիրավական հավասարազոր կատեգորիաներ օգտագործում են նաև «պետական կառավարում», նաև «գործադիր իշխանություն» հասկացությունները: Օրինակ՝ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրության 159-րդ հոդվածին համապատասխան՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները:

Որպես արդյունք՝ ստացվում է, որ «պետական կառավարման մարմին» հասկացությունը նույնացվում է «գործադիր իշխանության մարմին» հասկացության հետ, և վերոնշյալ նորմերի վերլուծության և համադրված դիտարկման շնորհիվ կարելի է եզրակացնել, որ «պետական կառավարման մարմինը» միաժամանակ հանդես է գալիս որպես «գործադիր իշխանության մարմին»: Կարծում ենք, որ ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ օրենսդրության եզրութաբանության միասնականության ապահովման տեսանկյունից՝ առանձնակի կարևորություն է ներկայացնում հիշյալ հասկացությունների փոխարինումը միասնական՝ «գործադիր իշխանության մարմիններ» եզրույթով, ինչը, մեր կարծիքով, թույլ կտա քիչ

թե շատ որոշակիություն ներմուծել առկա խառնաշփոթ իրավիճակում, ինչպես նաև խուսափել պրակտիկայում առկա ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենսդրական նորմերի տարաբնույթ մեկնաբանություններից:

Վերոգրյալի հաշվառմամբ կարող ենք փաստել, որ պետական կառավարումն իր նշանակությամբ ոչ այլինչ է, եթե ոչ պետական-իշխանական գործունեության տարատեսակ, որի շրջանակներում իրագործվում է գործադիր իշխանությունը: Չնայած վերոնշյալ հասկացությունների նույնացման վերաբերյալ առկա մտեցումներին՝ կարծում ենք, որ, այնուամենայնիվ, հիշյալ հասկացությունները չեն կարող փոխարինել միմյանց: Դա, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ գործադիր իշխանության խնդիրները գործնականում իրականացվում են պետական գործունեության այնպիսի տարատեսակի շրջանակներում, ինչպիսին պետական կառավարումն է:

Ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ եզրակացնում ենք, որ գործադիր իշխանությունն իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում կարելի է բնորոշել որպես միասնական պետական իշխանության ինքնուրույն թև, որն իր արտահայտությունն է գտնում պետական ապարատի հատուկ օղակի՝ գործադիր իշխանության մարմինների համակարգում, և կոչված է ապահովելու օրենսդիր մարմնի կողմից ընդունվող օրենքների և Սահմանադրությամբ նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտերի կենսագործումը՝ պետության ամբողջականության ու պետության կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների կայուն զարգացման ապահովման նպատակով:



ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Խորհրդարանական հանրապետությունների սահմանադրական կարգավորումների համեմատական վերլուծությունից բխում է, որ հանրապետության նախագահների սահմանադրական կարգավիճակները՝ պետական իշխանության մարմինների համակարգում հանրապետության նախագահի ինստիտուտի ինստիտուցիոնալ տեղը, գործառույթների և լիազորությունների շրջանակները, դրանց իրականացման կարգը, ինչպես նաև հանրապետության նախագահի ընտրության մեխանիզմները և հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակի հետ կապված որոշ այլ կարգավորումներ, խորհրդարանական հանրապետություններում միմյանցից որոշակիորեն տարբերվում են:

Խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի ինստիտուտի սահմանադրական կարգավիճակի հետ կապված հարցերից մեկը վերաբերում է պետական իշխանության եռաթև բաժանման համակարգում *հանրապետության նախագահի ինստիտուտի տեղին*: Այս առումով հիմնական հարցադրումն այն է, թե խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի ինստիտուտն արդյոք ներառվում է գործադիր իշխանության համակարգում, թե՞ գտնվում է գործադիր իշխանության համակարգից դուրս:

Պետական իշխանության մարմինների համակարգում հանրապետության նախագահի ինստիտուտի տեղի հստակեցումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևորու-

թյուն: Գործնական կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական իշխանության մարմինների համակարգում գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթան հնարավոր է պատշաճ երաշխավորել միայն այն պարագայում, երբ հստակեցվի պետական իշխանության գործառույթներն իրականացնող ինստիտուտների շրջանակը:

Կառավարման նախագահական և կիսանախագահական ձևերի դեպքերում հանրապետության նախագահի ինստիտուտը գործադիր իշխանության համակարգի մաս է, մինչդեռ խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի ինստիտուցիոնալ կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում միանշանակ չի ընկալվում²: Որոշ խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի ինստիտուտը գործադիր իշխանության համակարգի մաս է³, օրինակ՝ Ֆինլանդիայի Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ գործադիր իշխանությունն իրականացնում են հանրապետության նախագահը և կառավարությունը: Սակայն, ընդհանուր առմամբ՝ խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի ինստիտուտը պետական իշխանության որևէ ճյուղի համակարգի մաս չէ և ձևական առումով գտնվում է պետական իշխանության եռաթև բաժանման համակարգից դուրս:

Պետական իշխանության մարմինների համակարգում հանրապետության նախագահի ինստիտուցիոնալ տեղը առավել որոշակիացված է

¹ Աշխատանքը կատարվում է՝ ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահի «04» սեպտեմբերի 2018 թ. N 36-Ա/Ք հրամանով հաստատված 18T-5E130 գիտական հետազոտական թեմայի շրջանակներում:
² Առավել մանրամասն տեսն. К. А Половченко «Особенности правового статуса президента в системе органов государственной власти Республики Сербия», Москва, «Право и управление, XXI век» журнала, №2(35)/2015:
³ Հունաստանի Սահմանադրության 26-րդ հոդված, Իսլանդիայի Սահմանադրության 2-րդ հոդված:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

այն խորհրդարանական հանրապետություններում, որտեղ հանրապետության նախագահն ունի համեմատաբար լայն լիազորություններ: Այդ պետություններում հանրապետության նախագահի ինստիտուտը, որպես կանոն, գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգի մաս է: Մինչդեռ պետական իշխանության մարմինների համակարգում հանրապետության նախագահի ինստիտուցիոնալ տեղն առավել դժվար է որոշել այն պետություններում, որտեղ հանրապետության նախագահի գործառույթները՝ առավելապես, երբեմն՝ բացառապես ունեն արարողակարգային և ներկայացուցչական բնույթ:

Խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակը բնութագրող հիմնական հատկանիշներից մեկն այն է, որ հանրապետության նախագահը քաղաքական առումով գտնվում է չեզոք կարգավիճակում, որի պարագայում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ⁴: Սահմանադրությամբ հանրապետության նախագահի քաղաքական առումով չեզոք կարգավիճակի երաշխավորումը միտված է պետական իշխանության մարմինների հետ փոխհարաբերություններում ապահովելու հանրապետության նախագահի անաչառությունը: Այդ հանգամանքը հատկապես կարևորվում

է այն պետությունների դեպքում, որտեղ պետությունում առաջացած քաղաքական ճգնաժամերի հաղթահարման գործում հանրապետության նախագահին վերապահված է «քաղաքական արբեիրի» դերակատարություն: Օրինակ՝ Հունաստանի Սահմանադրությամբ հանրապետության նախագահին լիազորություն է վերապահվել քաղաքական դերակատարություն ստանձնել այն դեպքում, երբ քաղաքական ուժերին չի հաջողվում համաձայնության գալ այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել սահմանադրական անկայունության և ճգնաժամի (Սահմանադրության 37-րդ հոդված)⁵:

Խորհրդարանական հանրապետությունների սահմանադրություններում հանրապետության նախագահի գործառույթային կարգավիճակը բավականին ընդհանրական է բնորոշվում, մասնավորապես՝ հանրապետության նախագահը «պետության գլուխն է», «ներկայացնում է ժողովրդի միասնությունը», «պետության ինքնիշխանության և անկախության երաշխավորն է», «ժողովրդի միասնության և պետական իշխանության խորհրդանիշն է», «մարմնավորում է պետության միասնությունը», «հետևում է Սահմանադրության պահպանմանը», «հոգ է տանում պետական կառավարման կանոնավոր և ներդաշնակ գործունեության և կայունության մասին»⁶ և այլն: Նշվածից բխում է,

⁴ Խորվաթիայի նախագահը ընտրվելուց հետո պետք է հրաժարվի կուսակցության անդամակցությունից (Սահմանադրության 96-րդ հոդված): Ղրղստանի նախագահը պաշտոնավարման ընթացքում կասեցնում է իր անդամակցությունը քաղաքական կուսակցությանը և դադարեցնում է քաղաքական կուսակցությունների գործունեության հետ կապված ցանկացած գործողություն (Սահմանադրության 63-րդ հոդված): Նմանատիպ կարգավորում նախատեսված է նաև Էստոնիայի Սահմանադրությամբ (Սահմանադրության 84-րդ հոդված):

⁵ Հանրապետության նախագահին նմանատիպ լիազորություն վերապահված է նաև Ռումինիայում (Սահմանադրության 80-րդ հոդված): Պետությունում քաղաքական ճգնաժամերից խուսափելու գործում որոշակի լիազորություն վերապահված է նաև Լատվիայի նախագահին: Լատվիայի Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ պետությունում անհաղթահարելի քաղաքական ճգնաժամ առաջանալու դեպքում հանրապետության նախագահը կարող է առաջարկել խորհրդարանի արձակում, որի հետևանքով տեղի է ունենում հանրաքվե, եթե մեծամասնությունը կողմ է քվերարկում հանրապետության նախագահի առաջարկությանը, ապա խորհրդարանը արձակվում է, հակառակ դեպքում՝ հանրապետության նախագահի լիազորությունները դադարում են:

⁶ Իտալիայի նախագահը պետության գլուխն է, մարմնավորում է պետության միասնությունը (Սահմանադրության 87-րդ հոդված), Ալբանիայի նախագահը պետության ղեկավարն է և ներկայացնում է ժողովրդի միասնությունը (Սահմանադրության 86-րդ հոդված), Մոլդովայի նախագահը պետության ղեկավարն է, ներկայացնում է պետությունը, պետության ինքնիշխանության, անկախության, տարածքային միասնության և ամբողջականության երաշխավորն է (Սահմանադրության 77-րդ հոդված), Ղրղզստանի նախագահը ժողովրդի միասնության և պետական իշխանության խորհրդանիշն է (Սահմանադրության 66-րդ հոդված), Բուլղարիայի նախագահը պետության ղեկավարն է, ով երաշխավորում է ազգի միասնությունը և միջազգային հարաբերություններում ներկայացնում է պետությունը (Սահմանադրության 92-րդ հոդված), Սակեդոնիայի նախագահը ներկայացնում է պետությունը, պետության զինված ուժերի գլխավոր հրամանատարն է (Սահմանադրության 79-րդ հոդված), Խորվաթիայի նախագահը ներկայացնում է պետությունը միջազգային հարաբերություններում, հոգ է տանում պետական կառավարման կանոնավոր և ներդաշնակ գործունեության և կայունության մասին, պատասխանատու է պետության անկախության և տարածքային ամբողջականության համար (Սահմանադրության 92-րդ հոդված):

որ խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի գործառույթային կարգավիճակը բնութագրող հասկացությունները բավականին ընդգրկուն են:

Խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահներին վերապահված գործառույթների և լիազորությունների⁷ ուսումնասիրությունից, առաջին հայացքից, կարող է տպավորություն ստեղծվել, թե հանրապետության նախագահն օժտված է հզոր դերակատարմամբ: Սակայն, դա իրականում թվացյալ է, քանի որ պետությունների սահմանադրություններում նախատեսված են որոշակի գործիքակազմեր, որոնք էականորեն թուլացնում են հանրապետության նախագահի ազդեցության լծակները: Մասնավորապես՝ մի շարք պետություններում հանրապետության նախագահն իր լիազորություններն իրականացնում է կառավարության կամ վարչապետի առաջարկությամբ կամ օրենքով սահմանված այնպիսի ընթացակարգով, որը կանխորոշում է հանրապետության նախագահի որոշման բովանդակությունը: Կամ՝ խորհրդարանական մի շարք հանրապետություններում հանրապետության նախագահի որոշումները կրկնաստորագրվում են⁸, որի պարագայում հանրապետության նախագահը գրկվում է առանց գործադիր իշխանության համաձայնության որոշում ընդունելու հնարավորությունից:

Ընդհանուր առմամբ՝ եթե խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահների լիազորությունների ծավալները դիտարկենք կոնկրետ պետությունների օրինակներով, ապա պարզ է դառնում, որ հանրապետության նախագահներին վերապահված լիազորությունների ծավալները միմյան-

ցից որոշակիորեն տարբերվում են: Մի շարք պետություններում հանրապետության նախագահի լիազորություններն առավել ծանրակշիռ են, իսկ որոշ պետություններում՝ առավելապես արարողակարգային և ներկայացուցչական: Օրինակ՝ Էստոնիայի նախագահին Սահմանադրությամբ վերապահված են շուրջ 20 լիազորություն, Հունգարիայի նախագահին՝ 23 լիազորություն, համեմատաբար լայն լիազորություններով են օժտված նաև Բուլղարիայի և Չեխիայի նախագահները, սակայն Չեռնոգորիայի, Մակեդոնիայի, Խորվաթիայի նախագահների լիազորությունները համեմատաբար նվազ են:

Նշվածով հանդերձ՝ հատկանշական է, որ խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի դերակատարությունը որոշ դեպքերում պայմանավորված է ոչ այնքան հանրապետության նախագահի սահմանադրական գործառույթների և լիազորությունների ծավալով, որքան հասարակությունում իր հեղինակությամբ, որի առկայության պարագայում հանրապետության նախագահը կարող է ազդեցություն ունենալ իր «հեղինակության ուժով»:

Հատկանշական է նաև, որ որոշ խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահին վերապահվել են այնպիսի լիազորություններ, որոնք լայն առումով քնորոշ չեն խորհրդարանական կառավարման ձևի հանրապետություններին, օրինակ՝ Իտալիայի նախագահը լիազորված է ընդունելու օրենքի ուժ ունեցող որոշումներ, բացի այդ՝ նախագահում է բարձրագույն դատական խորհուրդը (Սահմանադրության 87-րդ հոդված), Լատվիայի նախագահն ունի օրենսդրական

⁷ Ընդհանուր առմամբ՝ խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահն ունի հետևյալ հիմնական լիազորություններ՝ ա) սահմանված կարգով ներկայացնում է պետությունը միջազգային հարաբերություններում (Սլովակիա, Չեռնոգորիա), բ) ստորագրում է պառլամենտի ընդունած օրենքները, որպես կանոն՝ կարող է վետո կիրառել դրանց նկատմամբ, գ) Սահմանադրությամբ սահմանված դեպքերում և կարգով կարող է լուծարել պառլամենտը (Սլովակիա), դ) սահմանված կարգով նշանակում և ազատում է կառավարության անդամներին, բարձրաստիճան այլ պաշտոնյաների (Բուլղարիա, Իտալիա), ե) սահմանված կարգով կարող է կնքել միջազգային պայմանագրեր (Սլովակիա), զ) սահմանված կարգով շնորհում է պետական պարգևներ և կոչումներ, լուծում է քաղաքացիություն և ներում շնորհելու հետ կապված հարցերը (Չեռնոգորիա, Հունգարիա), է) մի շարք պետություններում սահմանված կարգով գլխավորում է զինված ուժերը, նշանակում և ազատում է զինված ուժերի ղեկավարությանը (Մակեդոնիա, Հունաստան, Բուլղարիա), ը) պետությունների մեծ մասում մասնակցում է դատական իշխանության ձևավորմանը (Չեռնոգորիա, Մակեդոնիա)

⁸ Սլովակիայի Սահմանադրության 102-րդ հոդված, Հունգարիայի Սահմանադրության 9-րդ հոդված, Բուլղարիայի Սահմանադրության 102-րդ հոդված

նախաձեռնության իրավունք (Սահմանադրության 47-րդ հոդված), Հունաստանի (Սահմանադրության 47-րդ հոդված) և Իսլանդիայի (Սահմանադրության 2-րդ հոդված) նախագահները պառլամենտի հետ համատեղ՝ օրենսդիր իշխանություն իրականացնող սուբյեկտ են, Բուլղարիայում գործում է փոխնախագահի պաշտոն (Սահմանադրության 92-րդ հոդված):

Խորհրդարանական հանրապետություններում տարբեր է հանրապետության նախագահների լիազորությունների ծավալը *գինված ուժերի* ոլորտում: Որոշ պետություններում հանրապետության նախագահը գինված ուժերի ոլորտում ունի ոչ ֆորմալ բնույթի լիազորություններ, օրինակ՝ Իտալիայի, Բուլղարիայի, Սլովակիայի և Հունգարիայի նախագահները համարվում են գինված ուժերի գերագույն հրամանատարներ, բացի այդ՝ Իտալիայի և Բուլղարիայի նախագահները նաև Անվտանգության խորհուրդի նախագահներ են:

Խորհրդարանական հանրապետություններում առանձնահատկություններ կան նաև՝ հանրապետության նախագահի կողմից *վերադրվող կիրառելի* լիազորության հետ կապված, ընդհանուր առմամբ՝ կարող ենք առանձնացնել հանրապետության նախագահի վետո կիրառման հետևյալ տարատեսակները՝

ա) հանրապետության նախագահը կարող է վետո կիրառել և պառլամենտի կողմից ընդունված օրենքները վերադարձնել պառլամենտը, եթե պառլամենտը հաղթահարում է վետոն՝ հանրապետության նախագահը ստորագրում է պառլամենտի ընդունած օրենքը⁹.

բ) հանրապետության նախագահը կարող է վետո կիրառել պառլամենտի կողմից ընդունված օրենքի նկատմամբ, եթե պառլամենտի հաղթահարում է վետոն՝ հանրապետության նախագահը կարող է վիճարկել Սահմանադրական դատարանում¹⁰.

գ) հանրապետության նախագահը չի կարող վետո կիրառել պառլամենտի կողմից ընդունված օրենքի նկատմամբ, սակայն մինչև ստորագրելը կարող է պառլամենտի ընդունած օրենքը վիճարկել Սահմանադրական դատարանում¹¹:

Խորհրդարանական հանրապետություններում առանձնահատուկ կարգավորումներ են նախատեսված նաև՝ հանրապետության նախագահի *պաշտոնավարման անհնարինության* դեպքում հանրապետության նախագահի լիազորությունների իրականացումն ապահովող մեխանիզմների հետ կապված: Խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի լիազորությունների իրականացումն ապահովվում է հետևյալ մեխանիզմներով՝

ա) հանրապետության նախագահի պաշտոնավարման անհնարինության դեպքում հանրապետության նախագահի լիազորությունները փոխանցվում են պառլամենտի նախագահին, ընդ որում՝ որոշ պետություններում հանրապետության նախագահի լիազորությունների կատարման ընթացքում պառլամենտի նախագահի լիազորությունները կասեցվում են¹².

բ) հանրապետության նախագահի լիազորությունները փոխանցվում են հանձնաժողով-

⁹ Սլովակիայի նախագահն իրավունք ունի պառլամենտի կողմից ընդունված օրենքն իր առարկությամբ հետ վերադարձնել պառլամենտ: Պառլամենտի կողմից այդ օրենքը վերստին հաստատվելու դեպքում հանրապետության նախագահը պետք է ստորագրի և հրապարակի: Ընդ որում՝ նախատեսված է, որ օրենքները պետք է ստորագրվեն ոչ միայն հանրապետության նախագահի, այլ նաև պառլամենտի նախագահի ու վարչապետի կողմից: Հանրապետության նախագահի անհամաձայնության դեպքում օրենքը կարող հրապարակվել է առանց հանրապետության նախագահի ստորագրման (Սահմանադրության 88-րդ հոդված): Սերբիայի նախագահը ևս իրավունք ունի պառլամենտի կողմից ընդունված օրենքն իր առարկությամբ հետ վերադարձնել պառլամենտ: Պառլամենտի կողմից այդ օրենքը վերստին հաստատվելուց հետո, եթե հանրապետության նախագահը չի ստորագրում պառլամենտի կողմից ընդունված օրենքը, այդ լիազորությունը փոխանցվում է պառլամենտի նախագահին (Սահմանադրության 113-րդ հոդված):

¹⁰ Էստոնիայի նախագահը կարող է պառլամենտի ընդունած օրենքը հետ վերադարձնել պառլամենտ, և եթե հանրապետության նախագահի վետոն հաղթահարվում է, ապա հանրապետության նախագահը պառլամենտի կողմից վերստին հաստատված օրենքի սահմանադրականությունը կարող է վիճարկել Սահմանադրական դատարան (Սահմանադրության 107-րդ հոդված):

¹¹ Խորվաթիայի նախագահը պառլամենտի ընդունած օրենքը կարող է վիճարկել միայն Սահմանադրական դատարանում՝ սահմանադրականությունն ստուգելու նպատակով (Սահմանադրության 89-րդ հոդված):

¹² Էստոնիայի Սահմանադրության 83-րդ հոդված:

վի, որը բաղկացած է վարչապետից, պառլամենտի նախագահից և Գերագույն դատարանի նախագահից¹³.

գ) հանրապետության նախագահի լիազորությունների մի մասը փոխանցվում է վարչապետին, մի մասը՝ պառլամենտի ներքին պալատի նախագահին, իսկ մյուս մասը՝ սենատի նախագահին¹⁴.

դ) հանրապետության նախագահի լիազորությունների մի մասը փոխանցվում է կառավարությանը, մի մասը՝ վարչապետին, իսկ մյուս մասը՝ պառլամենտի նախագահին¹⁵.

ե) հանրապետության նախագահի լիազորությունները փոխանցվում են վարչապետին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վարչապետին փոխարինող անձին¹⁶.

զ) հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության դեպքում հանրապետության նախագահի լիազորությունները իրականացնում է փոխնախագահը¹⁷:

Խորհրդարանական հանրապետությունների սահմանադրություններում առկա է նաև հանրապետության նախագահի պաշտոնակություն ինստիտուտը, և որպես պաշտոնակության հիմք՝ պետությունների մեծ մասում նշվում է հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության խախտումը¹⁸:

Խորհրդարանական հանրապետություններում տարբեր են նաև հանրապետության նախագահի ընտրության և հանրապետության նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջները: Հանրապետության նախագահի ընտրություններն անցկացվում են ուղղակի կամ անուղղակի ձևերով¹⁹: Անուղղակի ընտրության

դեպքում հանրապետության նախագահն ընտրվում է պառլամենտի կողմից, ընդ որում՝ գոյություն ունեն անուղղակի ձևով հանրապետության նախագահի ընտրության տարբեր մեխանիզմներ, մասնավորապես՝ ա) հանրապետության նախագահն ընտրվում է պառլամենտի երկու պալատի կողմից համատեղ նիստում²⁰, բ) հանրապետության նախագահն ընտրվում է պառլամենտի երկու պալատի և տարածքային ներկայացուցիչների կողմից կազմված խորհրդի կողմից²¹, գ) եթե պառլամենտին չի հաջողվում հանրապետության նախագահ ընտրել, ապա հանրապետության նախագահն ընտրվում է ընտրական խորհրդի կողմից, որը բաղկացած է պառլամենտի և տարածքների ներկայացուցիչներից²²:

Խորհրդարանական հանրապետություններում առանձնահատկություններ կան նաև՝ հանրապետության նախագահի թեկնածուներին ներկայացվող պահանջների հետ կապված, ընդհանուր առմամբ՝ հանրապետության նախագահի թեկնածուներին առաջադրվում են հետևյալ հիմնական պահանջները՝

ա) քաղաքացիություն (Մակեդոնիա, Սլովակիա), ի դեպ՝ Լատվիայի, Ալբանիայի և Բուլղարիայի Սահմանադրություններում ամրագրված է, որ երկքաղաքացիություն ունեցող անձինք չեն կարող ընտրվել հանրապետության նախագահ, դեռ ավելին՝ Ֆինլանդիայում հանրապետության նախագահ կարող է ընտրվել միայն ծագումով Ֆինլանդիայի քաղաքացին, նմանատիպ կարգավորում է նախատեսված նաև Հունաստանի Սահմանադրությամբ.

բ) քաղաքային շեմ՝ Բուլղարիայում հանրապետության նախագահ կարող է ընտրվել

¹³ Իսլանդիայի Սահմանադրության 8-րդ հոդված, Իռլանդիայի Սահմանադրության 14-րդ հոդված:

¹⁴ Չեխիայի Սահմանադրության 66-րդ հոդված:

¹⁵ Սլովակիայի Սահմանադրության 105-րդ հոդված:

¹⁶ Ֆինլանդիայի Սահմանադրության 59-րդ հոդված:

¹⁷ Բուլղարիայի Սահմանադրության 98-րդ հոդված:

¹⁸ Չեռնոգորիայի Սահմանադրության 98-րդ հոդվածի համաձայն՝ հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել Սահմանադրության խախտման պատճառով: Խորվաթիայի Սահմանադրության 105-րդ հոդվածի համաձայն՝ հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել Սահմանադրության յուրաքանչյուր խախտման համար: Սերբիայի Սահմանադրության 118-րդ հոդվածի համաձայն՝ հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել սահմանադրության խախտման դեպքում:

¹⁹ Ուղղակի ձևով են ընտրվում Իռլանդիայի, Ֆինլանդիայի, Սլովենիայի, Սերբիայի, Մոլդովայի նախագահները, իսկ անուղղակի ձևով են ընտրվում Չեխիայի, Գերմանիայի, Իտալիայի նախագահները:

²⁰ Չեխիայի Սահմանադրության 54-րդ հոդված:

²¹ Գերմանիայի Սահմանադրության 54-րդ հոդված, Իտալիայի Սահմանադրության 83-րդ հոդված:

²² Էստոնիայի Սահմանադրության 79-րդ հոդված:

քառասուն տարին լրացած անձը, Մակեդոնիայում՝ հիսուն տարին լրացածը, իսկ Ղրղզստանի նախագահի թեկնածուն պետք է լինի ոչ պակաս, քան երեսունհինգ և ոչ ավելի, քան յոթանասուն տարեկան:

գ) նսրակյացության ցենզ՝ Մակեդոնիայում հանրապետության նախագահ կարող է ընտրվել այն անձը, ով վերջին տասնհինգ տարիներից առնվազն տասը եղել է պետության մշտական բնակիչ, Ալբանիայում հանրապետության նախագահը պետք է վերջին հինգ տարիները մշտապես բնակություն հաստատած լինի պետությունում:

Այսպիսով՝ կատարված վերլուծությամբ կարող ենք առանձնացնել հետևյալ եզրահանգումները՝ ա) հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակը որոշակի առանձնահատկություններ ունի խորհրդարանական տարբեր մոդելի հանրապետություններում, բ) խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի ինստիտուցիոնալ կարգավիճակը պետական իշխանության եռաթև բաժանման համակարգում միանշանակ չի ընկալվում, գ) խորհրդարանական հանրապետությունների սահմանադրություններում նախատեսված են գործիքակազմեր, որոնք հանրապետության նախագահի լիազորությունների մեծ մասի իրականացումը ֆորմալացնում են, դ) խորհրդարանական հանրապետություններում որոշակիորեն տարբեր են նաև հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման կարգը, ընտրության մեխանիզմներ, ինչպես նաև հանրապետության նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջները:

նական տարբեր մոդելի հանրապետություններում, բ) խորհրդարանական հանրապետություններում հանրապետության նախագահի ինստիտուցիոնալ կարգավիճակը պետական իշխանության եռաթև բաժանման համակարգում միանշանակ չի ընկալվում, գ) խորհրդարանական հանրապետությունների սահմանադրություններում նախատեսված են գործիքակազմեր, որոնք հանրապետության նախագահի լիազորությունների մեծ մասի իրականացումը ֆորմալացնում են, դ) խորհրդարանական հանրապետություններում որոշակիորեն տարբեր են նաև հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման կարգը, ընտրության մեխանիզմներ, ինչպես նաև հանրապետության նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջները:



ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Եվրասիա» միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս,
նույն ամբիոնի հայցորդ

ՊԱՌԱՄԵՆՏԱՐԻՉՄԸ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Եվրոպան ժամանակակից պառլամենտարիզմի ծագման և կայացման բնօրրանն է: Եվրոպական խորհրդարանական ինստիտուտները լայն տարածում են գտել ամբողջ աշխարհում: Այդ իսկ պատճառով եվրոպական պետությունների պատմական փորձի ուսումնասիրությունը բացառիկ անհրաժեշտություն է պառլամենտարիզմի էությունը և դրա տարբեր ձևերի առանձնահատկությունները հասկանալու համար:

Մասնագետները եվրոպական պառլամենտարիզմի ուսումնասիրությունն ավանդաբար սկսում են Մեծ Բրիտանիայից, որի խորհրդարանը հաճախ անվանում են խորհրդարանական նախահայր կամ բոլոր խորհրդարանների «մայրը»¹: Եվ իրոք, խորհրդարանական ինստիտուտները Բրիտանական կղզիներում ունեն բազմադարյա պատմություն: Այսպես՝ Անգլիական խորհրդարանի (պառլամենտի)² ծագման տարեթիվ է համարվում 1265 թվականը, երբ երկրի փաստացի ղեկավար (լորդ-պրոտեկտոր) Սիմոն դը Մոնֆորը՝ կոմս Լեստերացին, համատեղ նիստի հրավիրեց **Թագավորական մեծ խորհրդի անդամներին** (միապետական իշխանությանն առընթեր խորհրդակցական մարմին, որի կազմում ընդգրկված էին առավել ազնվատոհմիկ, աշխարհիկ և հոգևոր անձինք), կոմսությունների և քաղաքների ներկայացուցիչներին (երկուական ասպետ յուրաքանչյուր կոմսությունից և երկուական ներկայացուցիչ՝ յուրաքանչյուր քաղաքից): Այս իրադարձությունն անմիջականորեն կապված էր Հենրիխ III արքայի և ֆեոդալական վերնախավի միջև ծավալվող պայքարի հետ, որի առաջնորդը Մոն-

ֆորն էր: Պայքարի ընթացքում երկու կողմն էլ ձգտում էին նվաճել առավել ազդեցիկ սոցիալական խմբերի աջակցությունը: Սակայն այս, առաջին հայացքից, մեկանգամյա իրադարձությունն ունեցավ հեռուն գնացող հետևանքներ: Անգլիայի թագավորները խորհրդարանի մեջ շատ արագ նշմարեցին սեփական իշխանությունն ամրապնդելու հզոր գործիքի դերը, նրանք միաժամանակ սկսեցին դիմել խորհրդարանի օգնությանը ֆինանսական խնդիրների լուծման համար: 1295թ. Էդվարդ I թագավորը հրավիրեց, այսպես կոչված՝ Օրինակելի խորհրդարանը (Model Parliament) Մոնֆորի սխեմայով՝ արիստոկրատներ, եպիսկոպոսներ, ինչպես նաև կոմսությունների և քաղաքների ներկայացուցիչներ, որոնք ժամանակի ընթացքում սկսեցին կոչվել «համայնքներ» (the Commons): 1297թ. թագավորը հաստատեց խորհրդարանի չափազանց կարևոր՝ **հարկերի վերաբերյալ՝ քվեարկությամբ որոշումներ կայացնելու իրավունքը**:

XIV դարի կեսերին տեղի ունեցավ Անգլիայի խորհրդարանի բաժանումը երկու պալատի՝ լորդերի և համայնքների; Առաջինում իրենց նիստերն էին անցկացնում բարձրաշխարհիկ արիստոկրատները և եկեղեցու իշխանները, իսկ երկրորդում՝ ասպետները և քաղաքացիները: Ջուզահեռաբար՝ XIV-XVդդ. խորհրդարանին աստիճանաբար իրավունք վերապահվեց հրապարակելու օրինագծեր (բիլլեր), որոնք հետագայում ստանում էին օրենքի ուժ (նախկինում խորհրդարանը կարող էր միայն խնդրագրեր ներկայացնել, որոնց հիման վրա արքայական պալատը հրապարակում էր իր

¹ Տե՛ս Graham H. The mother of parliaments. London: Methuen & Co., 1910, 181-185 p.:
² «Պառլամենտ» բառը (անգլերեն՝ «parliament») ունի ֆրանսիական ծագում («parler»՝ խոսել բայից): Դա կապված է այն փաստի հետ, որ Անգլիայի նորմանդական զավթումից հետո (1066թ.) պալատական շրջաններում և ֆեոդալական վերնախավում ֆրանսերենը դարձավ գերակշռող լեզու: «Պառլամենտ» բառը կիրառվել է նաև մինչև 1265թ., սակայն ի սկզբանե նշանակել է ֆեոդալների ժողով (օրինակ՝ հայտնի է «Կատաղի պառլամենտը»՝ բարոնների համագումարն Օքսֆորդում 1258թ.):
³ Տե՛ս Барашков Г. М. Парламенты мира. Саратов: Наука, 2008, 65-69 с.:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

ստատուները): Ըստ որում՝ միջնադարյան Անգլիայի խորհրդարանը ֆեոդալական դարաշրջանի տոհմական ազնվականների ներկայացուցչության ինստիտուտ էր և շատ հեռու էր ժամանակակից տիպի բարձրագույն օրենսդիր մարմնի կարգավիճակից:

Այդ ժամանակներում համանման ինստիտուտներ կային նաև Եվրոպական այլ երկրներում: Այսպես՝ 1302թ. Ֆրանսիայում Ֆիլիպ IV թագավորը հրավիրեց **Գլխավոր շտատներ (Etats Généraux)**, որը երկրի երեք տարբեր խավերի՝ հոգևորականների, ազնվականության և երրորդ խավի ներկայացուցիչների համաժողով էր, որն ընդգրկում էր մնացած ամբողջ բնակչությանը, և որի անունից հանդես էր գալիս քաղաքացիների վերնախավը: Սրա անմիջական առիթը Հռոմի Պապ Բոնիֆացիուս VIII-ի հետ տեղի ունեցած հակամարտությունում մեծամասնության աջակցությունը նվաճելու թագավորի ցանկությունն էր: Հետագայում Ֆրանսիայի թագավորները սկսեցին կանոնավորապես հրավիրել Գլխավոր շտատներ՝ ֆինանսական հարցերն առավել հաճախ քննարկելու համար: Չնայած սեփական դիրքերն ամրապնդելու առանձին փորձերին՝ Գլխավոր շտատները միաժամանակ կախվածության մեջ էին թագավորական իշխանությունից: Պետք է նկատի ունենալ նաև, որ միջնադարյան Ֆրանսիայում միջդասային հակասությունները չափազանց ուժեղ էին, ինչը ծայր աստիճանի դժվարացնում էր դրանց ներկայացուցիչների կողմից միասնական դիրքորոշման ձեռքբերումը:

Անգլիայից և Ֆրանսիայից էլ առաջ դասային-ներկայացուցչական հաստատություններ էին գործում Պիրենեյան թերակղզու երկրներում, որտեղ կոչվում էին **կորտեսներ (cortes)**: 1188թ. Լիոնում Թագավորական կուրիայի (Curia Regia) նիստերին, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներից զատ, սկսեցին մասնակցել նաև քաղաքների ներկայացուցիչները: XIII դարում կորտեսներ ձևավորվեցին Արագոնում, Կաստիլիայում, Պորտուգալիայում և Նավառայում (Կաստիլիայում դրանցում ներկայացված էր նույնիսկ ազատ գյուղացիությունը)⁴: Մի շարք հան-

գամանքների բերումով (առաջին հերթին՝ արաբների հետ մշտական պատերազմի՝ ռեկոնկիստայի պայմաններում)՝ կորտեսներն օժտված էին բավականին լայն իրավունքներով և ընդունում էին ոչ միայն հարկերին վերաբերող որոշումներ, այլև քննարկում էին օրենսդրությանը և գահաժառանգությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

Գերմանական ազգի Սրբազան Հռոմեական կայսրությունում (որի կազմում, գերմանական և ավստրիական տարածքներից բացի՝ ընդգրկված էին նաև Չեխիան, Իտալիայի մի մասը և այլն) նույնպես ստեղծվեց դասային ներկայացուցչության մարմին՝ **կայսերական սեյմը (ռայխստագը)**: Սակայն երկար ժամանակ այս կառույցը ձևական ինստիտուտի գործառույթ ուներ, դրա կազմը փոփոխական էր, իսկ նիստերը հրավիրվում էին առիթից առիթ: Եվ միայն 1495 թ. կայսերական բարեփոխումից հետո ռայխստագը իսկապես դարձավ «կայսերական խավերի» (հոգևոր և աշխարհիկ կուրֆյուրստների, իշխանների և ազատ կայսերական քաղաքների) բարձրագույն ներկայացուցչական մարմին:

Միջնադարում յուրօրինակ ներկայացուցչական մարմիններ գոյություն ունեին նաև Հյուսիսային Եվրոպայի որոշ երկրներում: Ծագումով դրանք հասնում էին մինչև նախաֆեոդալական դարաշրջանի ազգային ժողովները (**տինգերը**), որոնց մասնակցում էին բոլոր հասուն տղամարդիկ: Այսպես՝ Իսլանդիայում 930թ. առաջին անգամ հրավիրվեց **ալտինգ**, որը դարձավ երկրի բարձրագույն օրենսդիր և դատական մարմինը՝ այդ ժամանակաշրջանի կլանների (գոդորդների) յուրատեսակ դաշնությունը: Յուրաքանչյուր տարվա հունիսին երկու շաբաթով հրավիրվող ալտինգի աշխատանքում տեսականորեն կարող էին մասնակցել բոլոր հասուն տղամարդիկ, չնայած՝ գլխավոր դերակատարներն այստեղ կլանների առաջնորդներն էին (գոդինները): Նորվեգիային Իսլանդիայի միացումից հետո 1262թ. ալտինգն իր գործառույթների մեծ մասից զրկվեց, չնայած՝ անվանական շարունակում էր հրա-

⁴ Sին Конституция зарубежных государств: Соединённые Штаты Америки. Великобритания. Франция. Германия. Италия. Испания. Греция. Япония. Канада; [Офиц. тексты] / пер., сост., авт. введ., вступ. ст. В. В. Маклаков. 2-ое изд., испр. и доп. М.: Бек, 1997, 318-327 с.:

վիրվել մինչև 1799թ.: Տեղային մակարդակում ժողովրդական օրենսդիր ժողովներ (լագտինգներ) գոյություն ունեին նաև միջնադարյան Նորվեգիայում, որտեղ ֆեոդալիզմը եվրոպական այլ երկրների համեմատությամբ նվազ զարգացած էր:

Միջնադարում Արևելյան Եվրոպայի երկրներում նույնպես կային դասային ներկայացուցչության մարմիններ: Որոշ չափով դրանք սլավոնական ժողովուրդների հնագույն վեչեային ավանդույթների ժառանգորդներն էին: Միաժամանակ, ի տարբերություն արևմտաեվրոպական պետությունների՝ այս մարմիններում ներկայացված էին միայն ֆեոդալների տարբեր խմբեր: Սա վերաբերում է Լեհական սեյմին, որի առաջացման տարեթվի առթիվ մինչ օրս միասնական տեսակետ չկա (պատմաբանների մեծ մասը նշում է XV դարի վերջը, չնայած՝ որ երբեմն հանդիպում է նաև 1180 թվականը): Նույնը կարելի է ասել նաև միջնադարյան Չեխական սեյմի (ազնվականության ներկայացուցիչների յուրատեսակ համագումարի) մասին:

XV դարի վերջից սկսած՝ եվրոպական առաջատար երկրներում աստիճանաբար անցում է տեղի ունենում դեպի բացարձակ միապետություն (աբսոլյուտիզմ): Թագավորական իշխանության ամրապնդմանը զուգահեռ՝ պետական բյուրոկրատիայի զարգացման ֆոնի վրա, դասային ներկայացուցչության մարմիններն սկսեցին կորցնել իրենց նշանակությունը կամ ընդհանրապես դադարեցրին իրենց գոյությունը, կամ էլ՝ մնացին որպես գուտ անվանական ինստիտուտներ: Այսպես՝ կտրուկ նվազեց կորտեսների դերն Իսպանիայի բոլոր մարզերում, դրանք սկսեցին ավելի ու ավելի հազվադեպ հրավիրվել (օրինակ՝ Կարլոս II-ի օրոք Կաստիլիայի կորտեսները ոչ մի անգամ չհրավիրվեցին), իսկ դրանց գործունեությունը հանգեցրեց ընդամենը գահին տրամադրվող սուբսիդիաների հաստատմանը: Ֆրանսիայում 1484թ. մինչև 1560թ. Գլխավոր շտատներն ընդհանրապես չհրավիրվեցին, իսկ դրանից հետո դասային ներկայացուցիչները մի քանի անգամ հավաքվեցին XVI դարի երկրորդ կեսի կրոնական պատերազմների ճգնաժամային շրջանում,

սակայն դրանց ավարտից անմիջապես հետո թագավորական իշխանությունը կրկին հրաժարվեց Գլխավոր շտատներին դիմելու պրակտիկայից (այդ դադարը ձգվեց ավելի քան մեկ և կես հարյուրամյակ՝ ընդհուպ մինչև Ֆրանսիական մեծ հեղափոխությունը): Գերմանական ազգի Սրբազան Հռոմեական կայսրությունում Ռայխստագը շարունակում էր իր նիստերը մինչև 1806թ., երբ լուծարվեց, սակայն Գերմանիայի քաղաքական մասնատվածության պայմաններում, որը վերջնականապես ամրագրվեց 1648թ., դրա իրական իշխանությունը հասցվեց նվազագույնի: Ռայխստագը մնաց որպես դասային մի մարմին, որտեղ ներկայացված էր միայն ֆեոդալական վերնախավը:

Վերը նշվածից միակ բացառությունն անգլիական խորհրդարանն էր: Ի տարբերություն դասական ֆեոդալիզմի մնացած բոլոր եվրոպական պետությունների՝ Անգլիայում տեղի ունեցավ ֆեոդալների ստորին խավի (ասպետների և ջենթրիի) մերձեցումը ձևավորվող բուրժուազիայի հետ: Հենց սրանց վրա էին հենվում Թյուդորների դինաստիայի (1485-1603) թագավորները, որոնց գահակալության տարիներին Անգլիայում սկսեց ձևավորվել միապետությունը: Որպես արդյունք՝ խորհրդարանը ոչ միայն չկորցրեց իր նշանակությունը, այլ՝ ընդհակառակն՝ որովհետև անհրաժեշտ էր թագավորական իշխանությանը՝ ներքին և արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերի լուծման համար: Օրինակ՝ խորհրդարանն ակտիվորեն սատարեց Հենրիխ VIII-ի կողմից ռեֆորմացիայի և եկեղեցու հողերի սեկուլյարիզացիայի իրականացումը և աջակցեց Եղիսաբեթ I-ին՝ Իսպանիայի դեմ պայքարում:

XVII դարում Անգլիայում պատկերացում ձևավորվեց այն մասին, որ խորհրդարանը, թագավորի հետ պետական իշխանության բարձրագույն մարմինն է, իսկ դրա պատգամավորներն օժտված են անօտարելի իրավունքներով և արտոնություններով «անհիշելի ժամանակներից»⁵: Մասնավորապես՝ նման գաղափարներ էին ձևակերպված 1604թ. կազմված «Համայնքների պալատի ապոլոգիայում»: Սթյուարտների նոր արքայական տոհմի առաջին երկու

⁵ Стѹ Очерки парламентского права: (Зарубеж. опыт): сб. ст./ под ред. и с предисл. Б. Н. Топорнина. М.: ИГПАН, 1993, 145-162 с.:

թագավորի (Հակոբ I և Կարլոս I)՝ Անգլիայում միապետական կարգեր հաստատելու և խորհրդարանից հրաժարվելու փորձերը վերջինիս կողմից հանդիպեցին կայուն դիմադրության, ինչն ստացավ նաև բնակչության լայն շերտերի աջակցությունը: XVII դարի առաջին տասնամյակներում թագավորները մի քանի անգամ լուծարեցին խորհրդարանը, սակայն այդպես էլ չկարողացան իրավիճակը փոխել հոգուտ իրենց: Կարլոս I-ի տասնմեկամյա «խորհրդարանագուրկ» իշխանավարումը հանգեցրեց խորը ճգնաժամի: Որպես արդյունք՝ թագավորը ստիպված էր հրավիրել նոր խորհրդարան, ինչն էլ ելակետային դարձավ անգլիական առաջին հեղափոխության համար, որը ըստ էության՝ թագավորի պատերազմ էր ընդդեմ խորհրդարանի, և որն էլ, ի վերջո՝ հաղթանակ տարավ: 1649-1653թթ. Անգլիայում գործում էր կառավարման հանրապետական ձևը (ինդեփենդանս հանրապետություն): Այնուհետև՝ սոցիալական և քաղաքական անկայունության պայմաններում, իշխանությունն անցավ Օլիվեր Քրոմվելի ձեռքը, ով էլ սահմանեց պրոտեկտորատի վարչակարգ (ըստ էության՝ ռազմական դիկտատուրա): Քրոմվելի մահից հետո հանրապետությունը կարճ ժամանակով վերականգնվեց, սակայն արդեն 1660թ. Սթյուարտները կրկին իշխանության եկան, և Անգլիան կրկին դարձավ միապետություն: Ռեստավրացիայի ժամանակաշրջանում (Կարլոս II-ի և Հակոբ II-ի օրոք) թագավորի և խորհրդարանի դիմակայությունը շարունակվեց, ընդ որում՝ վերջինիս կազմում առաջին անգամ ընդգրկվել էին այդ ժամանակ ծնունդ առած երկու քաղաքական խմբավորումների (ապագա կուսակցությունների)՝ թորիների և վիգերի ներկայացուցիչները: Պառլամենտը հաստատակամորեն պնդում էր, որ թագավորը կարող է կառավարել երկիրը միայն «իր հետ համատեղ և իր համաձայնությամբ»: 1679թ. խորհրդարանը վերջապես հասավ չափազանց կարևոր մի օրենքի ընդունմանը՝ Habeas Corpus Act, որով երաշխավորվում էր անձի անձեռնմխելիությունը⁶:

1688թ. Անգլիայի բոլոր առաջատար քաղաքական ուժերը հանդես եկան Հակոբ II-ի դեմ, ում վարած քաղաքականությունն ընդհանրապես բարի համբավ չէր վայելում: Երկրում տեղի ունեցավ հեղաշրջում՝ գործնականում առանց արյունահեղության, որը պատմության մեջ մտավ «Փառավոր հեղափոխություն» անվանմամբ: Իշխանությունն անցավ Վիլիելմ III և Մարիա II ամուսիններին, և հենց նրանց օրոք էլ 1689թ. հոկտեմբերին ընդունվեց **Բիլլ իրավունքների մասին**, որում հստակ արտացոլված էին խորհրդարանական իշխանության սահմանադրական երաշխիքները: Այդ պահից սկսած՝ Անգլիայում վերջնականապես հաստատվեց սահմանադրական միապետություն: Թագավորի իշխանությունն օրենսդրական, ֆինանսական, ռազմական և դատական ոլորտներում սահմանափակվեց կանոնավորապես հրավիրվող խորհրդարանի կողմից:

XVIII դարի ընթացքում խորհրդարանի դերը Անգլիայի (1707 թվականից՝ արդեն Մեծ Բրիտանիայի) պետական իշխանության մարմինների համակարգում է՛լ ավելի է ամրապնդվում: Աստիճանաբար մշակվում են կառավարման խորհրդարանական համակարգի հիմնական սկզբունքները՝ կառավարության (կաբինետի) ձևավորումը խորհրդարանում մեծամասնություն ստացած կուսակցության կողմից, նախարարների պատասխանատվությունը խորհրդարանի առաջ, կանոնավոր անցկացվող ընտրություններ և այլն: Իհարկե, չպետք է մոռանալ, որ այդ ժամանակ խորհրդարանը ներկայացնում էր երկրի բնակչության լոկ մի խմբին՝ իշխող դասակարգի վերնախավին, իսկ ծայրի իրավունք ուներ բնակչության ընդամենը 5%, պատգամավորության թեկնածուների համար սահմանված էր գույքային մեծ ցեղք, ընտրական համակարգը խիստ հեռու էր կատարյալ լինելուց: Եվ, այնուհանդերձ՝ Անգլիայի քաղաքական համակարգն ամենաառաջադիմականն էր իր ժամանակի համար և օրինակ էր ծառայում մյուս երկրների համար:

⁶ Sfin Parlaменты мира: сб. М.: Высш. школа Интерпракс, 1991, 98-107 с.:

ՍԱՄՎԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՆԱԿԱՐԳԻ ՏԵՂԸ ԵՎ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ժամանակակից ազգային, տարածաշրջանային և համաշխարհային պետաիրավական գաղափարախոսության կառուցվածքում իրավական պետության տեսությունը խիստ կարևոր տեղ է զբաղեցնում: Ընդ որում՝ դա գործառնում է ոչ թե ինքն իրեն, այլ՝ իր էությանը, բնույթով, սոցիալական դերով և նշանակությամբ այլ համանման տեսությունների հետ սերտ կապով և փոխազդեցությամբ:

Խոսքը, մասնավորապես, ավանդական, մաքուր իրավական և պետական տեսությունների մասին է. մի կողմից՝ բնական իրավունքի տեսություններ, իսկ մյուս կողմից՝ պոզիտիվ իրավունքի տեսություններ: Դա, մասնավորապես՝ իրավունքի ֆենոմենոլոգիական, բնական իրավունքի էքզիստենցիալ և հերմենևտիկ տեսությունն է, իրավունքի հոգեբանական նորմատիվիզմի, սոլիդարիզմի, իրավունքի սոցիոլոգիական ռեալիզմի, ինստիտուցիոնալիզմի, ֆունկցիոնալիզմի, նեոֆունկցիոնալիզմի տեսությունները: Նկատի է առնվում նաև Արևմուտքում համընդհանուր բարեկեցության պետության տեսությունը, սոցիալական պետության հայեցակարգը, զուգամիտման տեսությունը և այլն, իսկ Արևելքում՝ նախկին ԽՍՀՄ-ում, համաժողովրդական պետության տեսությունը: Իհարկե, իրավական պետության տեսության և այլ տեսությունների փոխկապվածության և փոխազդեցության բնույթն ու մակարդակը միմյանց հանդեպ միշտ չէ, որ պարզ է և միանշանակ: Դա զգալիորեն կախված է մի շարք հանգամանքներից, որոնք առնչվում են, մասնավորապես, դիտարկվող տեսության բնույթին և այլ առանձնահատկություններին:

Կարելի է ասել, որ, օրինակ՝ իրավական

պետության տեսության փոխկապվածության և փոխազդեցության մակարդակը, որի հիմքում ընկած է իրավունքի հետ պետության կապվածության մասին բնական-իրավական տեսություններով թեզը, որն ուշադրությունը կենտրոնացրել է «բնական», «համընդհանուր», «անքակտելի», «հիմնարար» իրավունքների վրա¹, կլինի ավելի բարձր, քան պոզիտիվիստական տեսությունների հետ իր փոխկապվածության և փոխազդեցության մակարդակը:

Գիտական գրականության մեջ արձանագրվում է, որ բնական-իրավական տեսությունների հետ որոնելի տեսության զգալի մոտ լինելը պայմանավորված է, բացի դրանց բնույթի և բովանդակության ընդհանրությունից՝ նաև, որ. «Նոր ժամանակներում իրավական պետության պատկերացումների մասին գաղափարների ձևավորումն ընթանում էր բնական իրավունքի դոկտրինի հաստատման, աշխարհիկ աշխարհայացքի ծագման և ամրապնդման, ֆեոդալական կամայականության քննադատության, աբսոլյուտիստական և ոստիկանական կարգերի, բոլոր մարդկանց հավասարության և ազատության ճանաչման հունով»²:

Հետևելով այլ տեսությունների հետ իրավական պետության տեսության փոխկապվածության և փոխազդեցության բնույթին ու մակարդակին՝ կարելի է նաև պնդել, որ որոնելի տեսության և դրա հիմքում ընկած գաղափարների կապն անհամեմատ ավելի մեծ չափով է հետևում ժամանակակից նույնանման գաղափարների և տեսությունների հետ հարաբերություններին, ինչպիսիք են, օրինակ՝ սոցիալական պետության տեսությունը, համընդհանուր բարեկեցության տեսության պետությունը, հա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

¹ Упоров И.В., Схатум Б.А. Естественное и позитивное право: понятие, история: тенденции и перспективы развития/ предисл. М.Н. Марченко. Краснодар, 2000.: С. 12-16.

² Философский словарь: 8-е изд./ подред. И.Т. Фролова. М.; 2009. С. 530.

մաժողովրդական պետությունը և այլն, քան իր ծագման և կայացման ժամանակով ավելի վաղ տեսությունները և գաղափարները:

Սակայն դա ամենևին չի նշանակում, ինչպես երբեմն պնդում են գիտական գրականության մեջ, որ իրավական պետության և դրա տեսության սաղմերը միայն վերջերս են ի հայտ եկել պատմական համաչափության մեջ, իսկ ավելի կոնկրետ՝ Նոր ժամանակներում³, որ ոչ մի կապ չկա անցյալի համապատասխան գաղափարների, տեսությունների և դոկտրինների հետ: Մի տեսություն և դոկտրին չի ծագում ոչնչից, մի ակնթարթում, դրան նախորդող այլ գաղափարների, տեսությունների և դոկտրինների պատմական կապից դուրս: Ծագելով հասարակության, պետության և իրավունքի զարգացման նույն փուլերում՝ մարդասիրական գաղափարները և մարդուն շրջապատող պետաիրավական աշխարհի մասին պատկերացումները բավականին հստակ կերպով ձևափոխված և կերպափոխված ձևով արտահայտվում են հաջորդող մյուս փուլերում, ընդհուպ մինչև ներկայիս փուլը, երբ ավարտվում է իրավական պետության տեսության սահմանադրական և այլ իրավական ակտերով ձևավորման և ձևական-իրավական ամրագրման գործընթացն այն տեսքով, որ առաջացել և գործում է մինչև այժմ:

Իրավական պետության տեսության, ինչպես և այլ տեսությունների վերաբերյալ խոսք կա, մի կողմից՝ հասարակության զարգացման միայն որոշակի փուլում այս կամ այն մարդասիրական գաղափարների մշակման, այդ իմաստով՝ դրանց որոշակի նույնականության, իսկ մյուս կողմից՝ դրանց հետագա զարգացման և շարունակության մասին:

Միանգամայն բնական և օրինաչափ է այն հանգամանքը, որ տեսությունների և գաղափարների տեսքով շատ մարդասիրական երևույթներ այդ գործընթացում խաղում են շատ կարևոր համակարգ ձևավորող դեր՝ անկախ այն հանգամանքից, թե իրավական պետության տեսության ձևավորման գործընթացում,

միմյանց հետ կապված լինելով «գենետիկորեն», վերջին հաշվով՝ դառնում են «շինանյութ», թե՛ ոչ: Միայն մեկ տարբերությամբ, որ դրանցից որոշներն ուղղակի ազդեցություն են ունենում տվյալ գործընթացի վրա, իսկ մյուսները՝ անուղղակի: Դրանցից որոշներն, իրավական պետության տեսության ձևավորման գործընթացում հանդես գալով իբրև «շինանյութ», դրա վրա ազդում են անմիջականորեն, այն դեպքում, երբ մյուսները, չլինելով այդպիսին, ազդում են միջնորդավորված ձևով:

Դրա հետ կապված՝ իրավական պետության տեսությունը դիտարկելիս տեսական և գործնական տեսանկյունից կարևոր է թվում այդ գործընթացի, միջավայրի ձևավորման և զարգացման վրա ազդող ոչ միայն նյութական, այլև հոգևոր (ինտելեկտուալ) առումով ուշադրություն դարձնելը:

Ինչն է մերձեցնում իրավական պետության տեսությունը դրա հետ զուգակից այլ տեսությունների հետ: Ինչն է դրանց ընդհանրությունը, և ինչն է դրանց առանձնահատկությունը: Ինչն է պայմանավորված այդ ընդհանրությունները և առանձնահատկությունը: Նմանատիպ այլ հարցերը, մի կողմից՝ առաջանում են, երբ փորձում ենք որոշել որոնելի տեսության էությունը և բնույթը, իսկ մյուս կողմից՝ սահմանել դրա տեղն ու դերը՝ դրա հետ սերտորեն կապված այլ տեսությունների համակարգում:

Դրանց պատասխանելով ընդհանուր տեսական դիրքերից՝ թվում է, թե պետք է ուշադրություն դարձնել, առաջին հերթին՝ հոգևոր և նյութական պայմաններին՝ բառի ամենալայն իմաստով: Ընդ որում՝ հենց դրանք են վճռական դեր խաղում՝ հաշվի առնելով, որ նման օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններում նախադրյալներ են առաջանում «գենետիկ առումով» միմյանց միջև փոխկապակցված ընդհանրությունների, իրավունքի տեսությունների և գաղափարների ի հայտ գալու և ամրապնդվելու համար և ընդհակառակն⁴:

Իսկ երկրորդը՝ պատասխանելով նմանա-

³ Раянов Ф.М.. Теория. правового государства. Проблемы модернизации. Уфа, 2010. С. 8-9.

⁴ Зорькин В.Д. Закономерности взаимосвязи правовых и философских учений // Закономерности возникновения развития политико-юридических идей и институтов. М., 1986; Козлихин И.Ю. Идея правового государства: история и современность. СПб, 1993; Величко Я. М. Философия русской государственности. СПб., 2001 и др.

տիպ մյուս հարցերին, որոնք վերաբերում են իրավական պետության տեսության և դրա հետ զուգակից իրավունքի տեսությունների ընդհանրություններին և առանձնահատկություններին, միաժամանակ վերաբերում են դրանց էությանը, բնույթին, ձևական-իրավաբանական և փիլիսոփայական բովանդակությանը և նշանակությանը:

Խոսելով այդ մասին՝ չպետք է տեսադաշտից բաց թողնել այն որոշիչ փաստը, որ բոլոր դիտարկվող տեսությունները ոչ այլ ինչ են, քան համասեռ և համաձև երևույթներ, իսկ ավելի կոնկրետ՝ տեսություններ, որոնք այս կամ այն չափով համարժեք կերպով արտացոլում են իրավունքի կյանքն ու իրականությունը, բայց ինքնին օբյեկտիվորեն գործող «նյութականացված» իրականության բաղադրիչ չեն: Փիլիսոփայական տեսանկյունից դրանք՝ որպես տեսություն, առանձնահատկություններից անկախ, «պատկերացումների, գաղափարների մի համալիր են, որն ուղղված է որևէ երևույթի մեկնաբանությանը և բացատրությանը»⁵, տվյալ դեպքում՝ գլխավորապես՝ պետությանը, մասամբ՝ իրավունքին: «Ավելի նեղ ու հատուկ իմաստով» ամեն տեսություն հանդես է գալիս որպես «գիտական գիտելիքների բարձրագույն, ամենազարգացած ձև՝ ամբողջական պատկերացում տալով իրականության օրինաչափությունների և էական կապերի՝ տվյալ տեսության օբյեկտի մասին»⁶, ինչպիսիք դիտարկվող դեպքում պետությունն է և իրավունքը:

Վերլուծելով իրավական պետության և տեսության վերջին տասնամյակների միտումները՝ թեև որոշ վերապահումներով, անհնար է չհամաձայնել գրականության մեջ արտահայտված այն կարծիքին, թե. «XX դարի վերջին տասնամյակի ռուսական հետտրավմատիկ իրավագիտակցությունը բնութագրվում է իրավական պետության նկատմամբ բարձր պահանջներով, «դրա կերպարի միֆականացմամբ» և «իրականացնելով կոմպենսատորական գործառույթ՝ իրավական պետությունն ընկալվում է

որպես սոցիալական իդեալ, չտեսնված ու խորհրդավոր Կիտեժգրադ, ինչի փնտրտուքը կլուծի բոլոր սոցիալական խնդիրները և իմաստ կտա համընդհանուր կյանքին»⁷:

Չնայած տվյալ պնդման արդարացիությանը՝ վերապահումները վերաբերում են «ռուսական հետտրավմատիկ իրավագիտակցությանը», որտեղ խախտված է տրամաբանությունը: Բացի այդ՝ դրանք վերաբերում են այն պնդման ոչ բավարար լինելուն, որ Կիտեժ-գրադի փնտրտուքով զբաղվում են միայն ժամանակակից Ռուսաստանում, այլ ոչ թե՛ «քաղաքակիրթ»⁸ աշխարհում, որը, «մասնակիորեն հրաժարվելով «համընդհանուր բարեկեցության պետությունից», վաղուց գործածության մեջ է դրել «սոցիալական պետությունը» և «իրավական պետությունը»:

Ըստ երևույթին՝ արտասովոր երևակայությամբ պայմանավորված ակնհայտ չափազանցություն է պնդում այն մասին, որ «իրավագիտության մեջ իրավական պետության կառուցման հետ են գիտնականները կապում ռուս ժողովրդի կյանքն ու մահը»⁹: Շատ կատեգորիկ և բարձրաձայն է հնչում, բայց ինչպես ցույց է տալիս համապատասխան գրականության վերլուծությունը, այդքան էլ ճշմարտանման չէ: Նույնիսկ այն հեղինակները, ովքեր Հայաստանի ճակատագիրը կապում են միայն իրավական պետության հետ, ամենևին էլ չեն պաշտպանում այդպիսի ծայրահեղական, ապոկալիպտիկ հայացքները: Համենայն դեպս՝ դա չի բխում հայտնաբերված մասնագիտական եզրակացություններից և դատողություններից: Ուշադրություն դարձնելով նշված վերապահումներին՝ այնուամենայնիվ, պետք է նկատել, որ հարցն այժմ դրանցում չէ, այլ՝ իրավական պետության միֆականացման և իդեալականացման վերաբերյալ պնդման:

Իրավական պետության տեսության նման մոտեցումը, մի կողմից, դրան մոտեցնում է զուգակից տեսություններին, քանի որ դրանցից յուրաքանչյուրը, արտահայտելով պետաիրա-

⁵ Философский словарь. 8-е изд./подред. Фролова И. Т. М., 2009. С. 665.

⁶ Նույն տեղում:

⁷ Поляков А.В. Общая теория права. Феноменолого-коммуникативный подход. СПб., 2003. С. 571.

⁸ Glenn H. Legal Traditions of the World. Sustainable Diversity in Law. Oxford. 2007; Ratnapala S. Jurisprudence. Camb. 2009; Travers M. Understanding Law and Society. N.Y. 2010 etc.

⁹ Поляков А.В. Նշվ. աշխ. էջ 571:

վական իրականության այս կամ տեսակետները, որպես կանոն՝ որոշակիորեն իդեալականացնում է դա:

Սակայն, մյուս կողմից էլ՝ իրավական պետության տեսությունն իր հետ կապված տեսությունների ամբողջությունից առանձնանում է, առաջին հերթին՝ իդեալականացման ձևով և անուղղակի առարկայով:

Իրավական պետության տեսությունն այդ տեսանկյունից համադրելով այլ տեսությունների հետ՝ դժվար չէ նկատել, որ եթե ինքն է ուշադրություն դարձնում և հայտնի չափով իդեալականացնում, առաջին հերթին, պետության հարաբերությունների բնույթը և իրավունքը, ապա, օրինակ՝ «համընդհանուր բարեկեցության տեսությունն» իր ուշադրությունը կենտրոնացնում է և որոշակիորեն իդեալականացնում կապիտալիստական պետության հարաբերությունների բնույթը տնտեսության, նյութական արտադրության և քաղաքացիների կենսապահովման հետ¹⁰: Մինչդեռ «սոցիալական պետությունը» ջանքեր է գործադրում և իդեալականացնում պետության սոցիալական հարաբերություններն իր քաղաքացիների և ընդհանրապես հասարակության հետ¹¹:

Իրավական պետության տեսությունը, ինչպես նաև շատ այլ տեսություններ, անցնում են դրա ձևավորման և զարգացման շատ երկար պատմական և տրամաբանական ուղի: Այդ ուղին սկսվում է հասարակության զարգացման վաղ փուլերում իրավական պետության և դրա տեսության համար բարոյաքաղաքական հիմք ստեղծող մարդասիրական գաղափարների և դատողությունների առաջացման ու զարգացման հետ կապված էմպիրիկ տեսության աստիճանից և ավարտվում իրավական պետության սեփական տեսության ձևավորման հետ ասոցացվող տեսական աստիճանով, ընդհուպ մինչև իր էվոլյուցիայի ժամանակակից փուլերը:

Ինչ վերաբերում է համակարգային իդեա-

լականացված օբյեկտի տեսքով դիտարկվող իրավական պետության տեսության բարդությանը և բազմամակարդակությանը¹² դա, ինչպես և ցանկացած այլ համանման տեսություն, կազմված է այնպիսի տարրերից, ինչպիսիք են որոնելի տեսության հիմքը կազմող տարբեր մարդասիրական գաղափարների ամբողջության տեսքով հանդես եկող ելակետային էմպիրիկ բազան՝ որպես նախնական (միջանկյալ) եզրակացությունների ընդհանրացումների և դատողությունների ամբողջություն:

Հետևողականորեն տանելով այն միտքը, որ «իրավական պետության իդեալի հիմքում» ընկած է «բոլորի համար միասնական և հավասար իրավունքների» պահանջը՝ Պ. Նովոգորոդցևն այդ կապակցությամբ նշել է. «Պետությունն ընդհանուր կյանքի նպատակով պետք է միավորի բոլոր դասակարգային, խմբակային և անհատական շահերը»¹³:

Արտացոլելով ժամանակակից պետաիրավական իրականության իդեալականացված տեսակետը՝ իրավական պետության տեսությունը ձգտում է ի մի բերել բոլոր այն բազմաթիվ և խիստ բազմազան մասնավոր և հանրային շահերը, որոնք գոյություն ունեն և դրսևորվում են այս կամ այն առանձին վերցված հասարակության շրջանակներում:

Դա վերաբերում է նաև ավանդական՝ ազգային և այլ արժեքներին, որոնք ընկած են կոնկրետ հասարակության և նրա սահմաններում ստեղծվող իրավական պետության հիմքում:

Լինելով այս կամ այն հասարակության քաղաքական, իրավական պետությունը և դրա տեսությունը՝ արտացոլում են ազգային, ներպետական կամ վերազգային իմաստով շահեր և արժեքներ, որոնք ներկայումս ակնհայտ առաջնահերթություն ունեն բոլոր, այդ թվում և՛ համաշխարհային շահերի, և արժեքների նկատմամբ, ինչի մասին վկայում է համաշխարհային հասարակական-քաղաքական և պետաիրա-

¹⁰ Марченко М.Я. Политические теории и политическая практика в развитых капиталистических странах. М., 1992. С. 166-170.
¹¹ Леонов Я.Д. Правовое, социальное государство: трудности становления // Право и управление: XXI век. 2005. N 2. С. 17-19.
¹² Коновалов В.К. Понятие «государство» в ракурсе системного подхода // Вестник МГУ. Сер. 11; Право. 2010. N 6.
¹³ Новгородцев П.И. Лекции по истории философии права. Учения Нового времени XVI-XIX вв. // История политических и правовых учений. Хрестоматия/ сост. Г.Г. Демиденко, Г.А. Борисов. Белгород, 1999. С. 829.

վական պրակտիկան¹⁴: Օրինակ՝ ինչպես դա մասնակիորեն կա Եվրամիության սահմաններում¹⁵: Այս առումով խիստ վիճելի է թվում հայրենական իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեցող դատողություններն այն մասին, որ ժամանակակից Հայաստանը, սահմանադրական մակարդակով իրեն հռչակելով իրավական պետություն, պետք է «ամբողջովին վերանայի այն արժեքները, որոնք պետք է դրվեն հասարակական կյանքի հիմքում: Անկյունում պետք է դրված լինեն համամարդկային արժեքները, իսկ ավանդականները համարվեն որպես երկրորդական»:

Միայն այդ ժամանակ, այդ, ըստ Ֆ.Մ.Ռայանովի կարծիքի. «Ռուսաստանը կարող է ներգրավվել զարգացող գլոբալ աշխարհում, ինտեգրվել քաղաքակիրթ մարդկության հետ»¹⁶:

Ավելին՝ կարծում է հետազոտողը, «Եթե Ռուսաստանը չընկալի համամարդկային արժեքները և ապավինի միայն իր ավանդական արժեքներին», ապա իր ամբողջականության և միասնության պահպանման նրա ձգտումները, որոնք «առաջին հերթին ապահովվում են միջազգային իրավունքի նորմերով», այլ ոչ թե՛ «միայն սեփական ուժի և ավանդույթի» վրա հենվելով, կարող են միայն արագացնել երկրի ոչնչացումը ներսից»: Քանզի այսօր ինտերնետի դարաշրջան է, հենց իրենցից՝ հայերից, ավելի ու ավելի դժվար է թաքցնել այս կամ այն համամարդկային արժեքների առաջնահերթությունները¹⁷:

Ակադեմիական միջավայրում ցանկացած դիտարկվող հարցի կապակցությամբ տարբեր, այդ թվում՝ շատ վիճելի տեսակետների առկայությունը միանգամայն բնական և ցանկալի երևույթ է, քանի որ խթանում է վիճելի հարցի լուծման որոնումը և թարմացնում մտածողությունը: Սակայն պետք է նշել, որ տվյալ դատողությունը խոցելի է.

ա) Քանզի, իրավական պետություն ստեղծելով՝ պետք է «վերաիմաստավորի» իր ավանդական ազգային արժեքները և դիտարկի դրանք որպես «երկրորդական արժեքներ»: Ճիշտ է՝ հեղինակը տվյալ թեզը հասցեագրում է միայն նրանց, ովքեր շատ բան գիտեն իրավական պետության մասին և «զոմբիացված չեն Ռուսաստանի երկաթետոնե ինքնության, յուրօրինակության գաղափարախոսությամբ», քանի որ մյուս բոլորի «իրավական պետության իդեալները քիչ բանով կօգնեն»¹⁸:

բ) «Քաղաքակիրթ մարդկության կողմից» ստեղծված ազգային արժեքները և շահերը, ինչպես ցույց է տալիս Եվրամիության և այլ պետությունների փորձը, երբեք չեն մնացել երկրորդ պլանում՝ առաջնահերթությունը տալով յուրաքանչյուր այլ տարածաշրջանային կամ համաշխարհային շահերին կամ արժեքներին¹⁹:

գ) Դրույթների ոչ համոզիչ լինելու մեջ, որ «ցանկացած պետության», այդ թվում՝ Հայաստանի ամբողջականությունը պահպանվում է առաջին հերթին միջազգային իրավունքով, ոչ թե սեփական ուժերով և ավանդույթներով: Այս դեպքում ակնհայտ է, որ ցանկալին իրականության տեղ է ներկայացվում: Միջազգային իրավունքին հակառակ՝ ՆԱՏՕ-ի կողմից «մարդասիրական ռմբակոծության» ենթարկված, իսկ հետո Հարավսլավիայի բռնի մասնատման տխուր փորձը, ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից ժամանակակից Իրաքի և Աֆղանստանի օկուպացման, ինչպես նաև նմանատիպ այլ երկրների փորձերը վկայում են, որ երբևէ ագրեսիայի ենթարկված այդ և մյուս պետություններին չեն բավականացրել ոչ թե դրանց «պահպանելուն» կոչված միջազգային իրավունքի նորմերը կամ սկզբունքները, այլ՝ դրանց պաշտպանելու համար նախատեսված սեփական ուժերը:

Բնականաբար, իրավական պետությունը և դրա տեսությունը, մի կողմից՝ չեն կարող և չպետք է նույնիսկ ամենանվազագույն չափով

Բնականաբար, իրավական պետությունը և դրա տեսությունը, մի կողմից՝ չեն կարող և չպետք է նույնիսկ ամենանվազագույն չափով

¹⁴ Sclothe J. Global capitalism and the State International Affairs. 1997. N 3. P. 427-453, Andersen J Europeanisation in Context: Concept and Theory // Dyson K. and Goetz K (eds). Germany, Europe and the Politics of Constraint. Oxf., 2003. P. 37-53: etc.

¹⁵ Марченко М.Н., Дерябина Е.М. Право Европейского союза. Вопросы истории и теории. М., 2010.

¹⁶ Раянов Ф.М. Правовое государство – судьба России. Уфа, – 2007. С. 9.

¹⁷ Նույն տեղում. էջ 8-9:

¹⁸ Նույն տեղում. էջ 6:

¹⁹ Schmidt V. The Futures of European Capitalism. Oxford. 2002. Kohler-Koch B. (ed). Linking EU and National Governance. oxf, 2003; McCormick J. European Union. Politics and Policies. Camber, 2004; etc.

անտեսեն այդ թվում և իր ազգային արժեքներն ու շահերն արտացոլող և պաշտպանող միջազգային իրավունքի պահանջները: Մյուս կողմից՝ միջազգային իրավունքի վրա հիմնված իրավական պետությունը չի կարող և չպետք է հասցվի ինչ-որ մի սոցիալական կազմավորման, որը, ինչ էլ լինի՝ նախապատվությունը տալիս է համամարդկային շահերին: Համենայն դեպս՝ ներկայումս, ժամանակակից աշխարհում տեսական և, հատկապես՝ գործնական առումով, դա կարևոր ոչ այնքան իդեալական, այլ նաև՝ ուտոպիստական է: Միաժամանակ պետք է նշել, որ իրավական պետության տեսության բովանդակության և էության արտահայտությունները պոզիտիվ իրավունքի նմանությամբ, փիլիսոփայական լեզվով ասած, «ավելի շատ «անհրաժեշտ են», քան «գույություն ունեն»:

Կախված այն հանգամանքից, թե ներկայումս որքան համարժեք է իրավական պետության տեսության մեջ արտացոլվում կամ էլ տեսանելի ապագայում կարտացոլվի պետաիրավական իրականությունը, դրանցից թե միմյանց հետ ինչպես կհարաբերակցվեն իրենց հիմքում «դրված» «անհրաժեշտը» կամ «գույություն ունեցողը»:

Դիտարկվող տեսության մեջ «գույություն ունեցողի», գերակշռումը, անկասկած, վկայում է դրա իրական լինելու մասին՝ գիտականության ու կենսունակության առումով: Եվ ընդհակառակն՝ իրավական պետության տեսության մեջ «անհրաժեշտի» ամբողջական գերիշխումը «գույություն ունեցողի» նկատմամբ խոսում է դրա ձևականության և մտացածին լինելու մասին:

Որոշ հեղինակներ, իրավական պետությունը դիտարկելով ժամանակակից և ապագա պետության իդեալի և նմուշի տեսքով, վճռականորեն հայտարարում են, որ «աշխարհում չի եղել, չկա և չի լինի իրավական պետություն այն պատճառով, որ յուրաքանչյուր իդեալ անհասանելի է», և հետևաբար՝ դրա տրամաբանությունը դասում են իդեալականացվածների, ձևական երևույթների կարգը, իսկ մյուս հետա-

զոտողները, զարգացնելով իրավական պետության մասին գաղափարները՝ որպես «պետության իդեալական տեսակ», որի վրա պետք է կենտրոնանան ժամանակակից բոլոր պետությունները, ելնում են տվյալ պետաիրավական կազմավորման իրականությունից և, հետևաբար՝ իր տեսության համարժեքությունից և կենսունակությունից²⁰:

Ի տարբերություն իրենց գործընկերների, ովքեր հակված են այն տեսակետին, որ իրավական պետությունը մի իդեալ-ուտոպիա է, այս տեսակետի կողմնակիցները, խոսելով իրավական պետության մասին՝ որպես մի իդեալի, իսկ ավելի կոնկրետ՝ որպես մի պետության իդեալական տեսակի, ամենևին էլ դա չեն համարում ուտոպիական:

Իրավական պետության իրական լինելը, նշում է Ֆ.Մ. Ռայանովը, հաստատվում է իրավական պետությունը կազմող տարրերի կամ սկզբունքների ճանաչողության տարբեր մակարդակներով, այդ թվում և՛ «ռեֆլեքսիվ-ճանաչողական գործունեության միջոցով»²¹:

Իրավական պետությունը ժամանակակից պետությունն է, պնդում է հեղինակը, «որի ձևավորումը որոշ երկրներում նոր միայն սկսվում է, իսկ որոշ երկրներում արդեն ստացել է միանգամայն իրական հատկանիշներ»: Եվ եթե այսօր, եզրակացնում է հետազոտողը, «Գերմանիան, Իսպանիան և որոշ այլ երկրներ հայտարարել են, որ իրենք իրավական պետություններ են, ապա դրան հավատալու ինչպիսի հիմքեր ունենք»²²: Իրականում ինչպիսի հիմքեր ունենք, օրինակ, որ չճանաչենք ԱՄՆ-ը, որը (Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Կանադայի, Ավստրիայի և «որոշ այլ պետությունների» հետ) իրեն հայտարարել է իրավական՝ որպես այդպիսին:

Միթե, XX դարի 60-ական թվականներին ԱՄՆ-ի նախագահ Քենեդիի սպանությունը, ամերիկյան քաղաքացիների միջազգային հեռախոսային խոսակցությունների չսանկցավորված գաղտնալսման՝ մամուլի սեփականությունը դարձած բազմաթիվ փաստերն այդ չեն հաստատում: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակների կամ որևէ այլ «քաղաքա-

²⁰ Иванников- И.А. Актуальные проблемы теории государства и права. М., 2009. С. 316.

²¹ Проблемы общей теории права и государства. М., 1999. С. 540.

²² Раянов Ф. М. Теория правового гогосударства. Проблемы модернизации.

կիրթ» պետության կողմից «իրենցում հայտարարված» իրավական, ժողովրդավարական, ժողովրդական և այլ վարչակարգերի առկայությանը՝ դրա, ինչպես ցույց է տալիս պատմությունը, պակասությունը երբեք չի եղել և չկա:

Որպեսզի համոզվենք դրանում՝ բավական է հայացք նետենք, օրինակ, Արևմուտքում, իսկ XX դարի 90-ական թվականներից հետո՝ Խորհրդային Հայաստանում զարգացող «ամենամարդասիրական»՝ ազատական, իսկ ավելի կոնկրետ՝ նորազատական գաղափարախոսության, «ամենաժողովրդավարական»՝ «համընդհանուր բարեկեցության պետության» տեսքով սոցիալ-քաղաքական տեսությունների ժամանակակից քաղաքացիական հասարակության, դրանում կենտրոնական դեր խաղացող ազգային և վերազգային կորպորացիաների, ժամանակակից աշխարհում Միացյալ Նահանգների բացառիկության (exclusiveness) և, վերջապես՝ քաղաքացիների իրավունքների և ազատությունների բազմաթիվ սահմանադրական հոչակագրերի վրա և այլն:

Իհարկե, բոլոր հնարավոր հոչակագրերին, տեսություններին և արևմտյան պետությունների, ինչպես և ժամանակակից Հայաստանի պաշտոնական շրջանակների ներկայացուցիչների ամեն տեսակի հայտարարություններին կարելի էր հավատալ, եթե դրանք, ներառյալ իրավական պետության տեսությունը, ակտիվորեն արտացոլեին իրականությունը, և իրենց հիմքում լինեին ոչ թե ձևական, իդեալիստական, այլ՝ իրատեսական երևույթներ:

Սակայն «պրակտիկայում», ռեալ իրականության մեջ, ինչպես ցույց է տալիս իրենց ժողովրդավարական, իրավական և այլն կոչող ժամանակակից պետությունների հասարակական-քաղաքական փորձը, հաճախ ամեն ինչ ամենևին էլ այդպես չէ՝ ոչ հաճախ նրանց կողմից կանխադրությամբ պաշտոնական վարկածը և «մարդասիրական» գաղափարախոսությունն այդպես էլ կմնան ոչ այլ ինչ, քան որպես

կյանքի չկոչված տեսություն և գաղափարախոսություն:

Արդյոք սա նշանակում է, թե իրավական պետության տեսությունը, ինչպես և իր նշանակալից մասով ձևականացված և այս իմաստով յուրահատուկ ցանկացած այլ մաքուր տեսություն ոչ մի նշանակություն չունի այլ պետաիրավական տեսությունների համակարգում: Կարելի է դրանից եզրակացնել, որ իրավական պետության տեսության հանգամանալից դիտարկումը և կատարելագործումը հասարակության զարգացման ժամանակակից փուլում առավելապես նրա ձևականացված բնույթի պատճառով կորցնում են ամեն իմաստով:

Ակնհայտ է, որ՝ ո՛չ, առաջին հերթին՝ այն պատճառով, որ այս տեսությունը, դատելով Արևմուտքի և Արևելքի շատ երկրներում իր տարածման աշխարհագրությունից ու բարձրացված այն ուշադրությունից, որն այլ պետաիրավական տեսությունների հետ դարձվում է դրա վրա աշխարհի տարբեր տարածաշրջաններում, հասարակության զարգացման ժամանակակից փուլում առաջատար տեսությունների հետ դառնում է տեսական կառուցվածքներից մեկը, որն ունի խիստ կարևոր տեսական-մեթոդաբանական և քաղաքական-գաղափարական նշանակություն: Բնականաբար, տվյալ հանգամանքը տեսադաշտից բաց թողնելը և որոնելի տեսության զարգացման ու կատարելագործման գործընթացին չմասնակցելը, անկասկած, սխալ որոշում կլինեին: Չպետք է մոռանալ նաև, որ ներկա պահին Հայաստանի, ինչպես նաև շատ այլ կապիտալիստական և կիսակապիտալիստական պետությունների համար իրավական պետության տեսությունը, հետազոտողների արդարացի դիտողությամբ, ծառայում է որպես մի յուրատեսակ «գործողության ուղեցույց», մի յուրահատուկ կողմնորոշիչ ազգային պետականության հետագա զարգացման և կատարելագործման գործընթացում²³:

²³ Фармирование правового государства в России: путь к справедливому обществу. Саратов, 2008. С. 31; Философский словарь /под ред. И. Т. Фролова. 2009. С. 531 и др.

ՀԵՐՄԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՊՄՀ զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ, արդարադատության կապիտան

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՅ ԵՎ ԴԱՏԱԴԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՌԻՏՈՂԵՍՏՐՈՒԿՏԻՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ

Քրեակատարողական հիմնարկների¹ հարցը բոլոր ժամանակներում բավականին սուր է քննարկվում: Դա համարվում է պետական կարևոր ծառայություն, որը կոչված է Հայաստանի Հանրապետությունում քրեական պատիժների կատարմանը: 2006թ. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում գործում է սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին, որի գործառույթներն իրականացվում են «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը» հաստատելու մասին ՀՀ արդարադատության նախարարի 13.07.2016թ. թիվ 279-Ն հրամանով²: Բաժնի խնդիրներից է կալանավորված անձանց ու դատապարտյալների հոգեկան առողջությունը պահպանելը և ամրապնդելը: Այս հարցի շուրջ ՔԿ համակարգում հատկապես վերջին տարիներին նկատվում է դրական առաջընթաց. կա որոշակի մշակված գործիքակազմ, մասնագետների վերապատրաստում և այլն, այնուամենայնիվ, այդքանով հանդերձ՝ դեռևս կան չլուծված խնդիրներ, և հայեցակարգում դրված է անազատության մեջ գտնվող անձի՝ կալանավորված անձի և/կամ դատապարտյալի և շրջակա միջավայրի անվտանգության հարցը:

Մինչ օրս անազատության մեջ գտնվող անձանց աուտոդետրոկտիվ վարքագծի կանխատեսումը համարվում է ոչ լիարժեք ուսումնասիրված: Այս ոլորտի հետազոտողների, ուսումնասիրողների դրսևորումները հիմնականում սահմանափակվում են արդեն իսկ կալանավորված անձի և/կամ դատապարտյալի կողմից կատարված վարքագծի սոցիալ-հոգեբանական բնութագրի վերլուծությամբ:

Թեմայի շուրջ հասարակության տարբեր խմբերում կատարվել են հետազոտություններ, սակայն փակ տիպի համակարգերում, ինչպիսիք են ՔԿ հիմնարկները, թեման լիարժեք ուսումնասիրված չէ: 2012–2018թթ. ընթացքում մոտ 4000 կալանավորված անձանցից և դատապարտյալներից (2017թ.՝ մոտ 5000) ՔԿ հիմնարկներում ինքնասպանություն են գործել 22-ը, իսկ ինքնավնասումներին թիվը շատ ավելի մեծ է³: Պատկերը մտահոգիչ է, ուստի աուտոդետրոկտիվ վարքի հիմնախնդրի ախտորոշման գործընթացը դարձել է մեր ուսումնասիրման հիմնական նպատակը: Նպատակի շուրջ իրականացված հետազոտությունը հնարավորություն է տվել դուրս բերելու այն նախանշանները, որոնք բնորոշ են ինքնակործանիչ վարք կրողներին, այն գործոնները, որոնք նպաստում են աուտոդետրոկտիվ վարքի առաջացմանը և դրսևորմանը, ինչպես նաև նման վարքագծի հետա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

¹ Այսուհետ՝ ՔԿ հիմնարկ:
² Այսուհետ՝ ՀՀ արդարադատության նախարարի 13.07.2016թ. թիվ 279-Ն հրամանը [էլեկտրոնային տարբերակ]. – URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107555> (մուտք՝ 25.04.2019թ.):
³ 2011-2017թթ. ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկներում արձանագրված ինքնասպանությունների և ինքնավնասումների դեպքերի վիճակագրություն [էլեկտրոնային տարբերակ] – URL: <http://pmg.am/hy/news/successful-cases/2011-2018> (մուտք՝ 15.04.2019թ.) <http://pmg.am/hy/news/successful-cases/2017-2020> (մուտք՝ 10.05.2019թ.):

գա հաղթահարման համար մշակել ռազմավարության պլան:

Նախքան «աուտոդեստրուկտիվ վարքագծի» կանխատեսման քննարկումը՝ անհրաժեշտ է հասկանալ տվյալ հասկացության նշանակությունը: Գիտական գրականության մեջ դեստրուկտիվ հասկացությունը մշակվել է գերմանացի հոգեբան, սոցիոլոգ, փիլիսոփա Է. Ֆրոմի կողմից⁴: Յու.Մ. Անտոնյանի կողմից առաջադրվել են ինքնասպանությունների պատճառների երկու խմբի դասակարգում՝ ինքնասպանության դեպքեր հասարակության մեջ և պենիտենցիար՝ բնորոշ միայն ՔԿ հիմնարկներին⁵:

Այսպես՝ աուտոդեստրուկտիվ կամ ինքնակործանիչ վարքը (անգլ. *auto* – ինքնա, *destruction* – կործանել, ոչնչացնել) մարդկության սոցիալական հրատապ խնդիրներից մեկն է և այնքանով գոյություն ունի, որքանով մարդն է ապրում երկրի վրա՝ ընդգրկելով հասարակության գրեթե բոլոր շերտերը՝ սեռից, տարիքից, դավանանքից, կրթական մակարդակից, ընտանեկան և սոցիալական կարգավիճակից անկախ: Սովորաբար ինքնասպանությունը սահմանվում է որպես հոգեբանական դեզադապտացիայի արդյունք, երբ անձը հոգեկանի ախտաբանական կամ սահմանային վիճակում ինքնակամ (ներքին կամ արտաքին ազդակներից դրդված) դիմում է լետալ ավարտով աուտոդեստրուկտիվ գործողությունների: Ցանկացած սուիցիդալ գործողություն ենթադրում է դեզադապտացիա, և բոլոր սուիցիդենտների մեջ նախասուիցիդալ շրջանում դրսևորվել է առաջնային և երկրորդային դեզադապտացիա՝ իր ֆունկցիոնալ և օրգանական, սոմատիկ հետևանքներով⁶:

«Աուտոդեստրուկտիվ վարք» հասկացությունը կիրառվում է շատ գիտություններում ու ոչ միանշանակ ձևով և հանդիպում է ժամանակակից գիտական գրականության մեջ տարբեր կերպ՝ «դևիանտ վարք», «սուիցիդալ վարք», «աուտոագրեսիվ վարք», «ադիկտիվ վարք»:

Կիրառվող աուտոդեստրուկտիվ վարք հասկացությունը պետք է հասկանալ որպես գործողություն, որը նպատակ ունի կործանելու սեփական կյանքը (ինքնասպանություն), կամ էլ՝ անձնագոհություն, կամ էլ՝ երկարատև ինքնակործանում (անառողջ ապրելակերպ): Վարքային այս բոլոր ձևերը պարունակում են սեփական անձին վնաս հասցնելու տարրեր:


Ամերիկյան հոգեբան Ռ. Բերոնը նշում է, որ ագրեսիվ վարքագծի մոդելները կարող են ձևավորվել սոցիալական տարբեր գործոնների ազդեցությամբ, դրանք են՝ անձի սոցիալական կարգավիճակը, ֆրուստրացիան, սթրեսը, միջավայրը, ինչպես նաև ՔԿ հիմնարկներում տիրող քրեական ենթամշակույթը և այլն⁷:

Աուտոագրեսիվ վարքագիծը, ըստ իր ուղղվածության, բաժանվում է ինքնասպանության, որտեղ նպատակը հենց սեփական անձի մահն է և ինքնավնասման, որտեղ նպատակը կյանքից զրկելը չէ, այլ՝ նման վարքագծի միջոցով հասնել ուրիշ արդյունքի: Անշուշտ, այս սահմանումը և դասակարգումը միանշանակ չեն: Մեր կարծիքով՝ այս առումով նպատակահարմար է կիրառել ինքնակործանիչ վարքագիծ հասկացությունը, որը ՔԿ հիմնարկներում բաժանել ինքնասպանություն և ինքնակործանիչ վարքային ձևերի (**Տես նկար 1**):

Առաջ քաշված նպատակից բխող խնդիրները բացահայտելու համար ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿ հիմնարկում 2012–2017թթ. որպես հոգեբան աշխատելու ընթացքում հեղինակի կողմից իրականացվել է հետազոտություն, որին մասնակցել են թվով արական սեռի 18–60 տարեկան մեկ և ավելի անգամ դատապարտված 80 կալանավորված անձինք և դատապարտյալներ: Նրանցից 19-ը՝ ՀՀ արդարադատության նախարարի թիվ 13.07.2016թ. 279-Ն հրամանի 10-րդ գլխի 47-րդ կետի 2-րդ ենթակետի⁸ համաձայն, վերցված են եղել ինքնասպանության և ինքնավնասման հակումներով հաշվառման:

⁴ Տես Фромм Э. Анатомия человеческой деструктивности / Э. Фромм; пер. с нем. Э.М. Телятниковой.– М.: АСТ: АСТ МОСКВА, 2009.– С. 8.
⁵ Տես Антонян Ю.М. Преступность в местах лишения свободы и ее причины / Уголовное право, 2002г., №4.– СС. 101–104.
⁶ Տես Վարդանյան Կ.Ե. «Աուտոդեստրուկտիվ հակումների տարբեր դրսևորումները որպես փոխակերպվող հասարակության բնութագրիչ» [էլեկտրոնային տարբերակ]. – URL: <https://cyberleninka.ru/article/n/different-manifestation-of-self-destructive-dispositions-as-a-characteristic-feature-of-a-transforming-society> էջ 237(մուտք՝ 01.03.2019թ.):
⁷ Տես Бэрон Р., Ричардсон Д. Агрессия.– СПб: Питер, 2001.– СС. 22–27.
⁸ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107555> (մուտք՝ 25.04.2019թ.):

Նկար. 1. ՔԿ հիմնարկներում ինքնակործանիչ վարքի ձևերը



Հետազոտության համար կիրառվել է հոգեբանական պրոյեկտիվ մեթոդիկաներից Լյուշերի գունային թեստը՝ հոգեհուզական վիճակի գնահատման համար, իսկ ավանդական՝ էմպիրիկ մեթոդներից՝ դիտման, զրույցի, անձնական գործերի ուսումնասիրության և վերլուծության մեթոդները: Հետազոտությունն իրականացվել է երկու փուլով, առաջին փուլում, հաշվի առնելով հետազոտության նպատակն ու խնդիրները, իրականացվել է աուտոագրեսիվ վարքի հոգեբանական հիմքերի ժամանակակից ուղղորթացների վերաբերյալ առկա գրականության տվյալների վերլուծություն, իսկ երկրորդ փուլում իրականացվել է հետազոտություն, որը ներառում է ընտրված մեթոդների միջոցով ստացված արդյունքներ, վերլուծություն և ընդհանրացում:

Պարզվել է, որ ինքնակործանիչ վարքային ձևեր կատարած անձանց մեծ մասը բնութագրվել է բացասական՝ (23,75%) չեն ուղղվել, խախտել են ՔԿ հիմնարկի ներքին կանոնակարգը, ենթարկվել են կարգապահական տույժերի, վերցված են եղել բացասական հակումներով հաշվառման, պատժի կրման ընթացքում կրկնակի դատապարտվել են: Դրական բնութագրվող անձինք, ովքեր ընդունել և զղջացել են կատարած հանցանքի համար, կանգնել են ուղղման ճանապարհին, մասնակցել են իրականացված միջոցառումներին, արժանացել

են խրախուսանքների՝ շատ քիչ մասն են կազմել ինքնակործանիչ վարքի թվում (2,5%):

Հետազոտություն է կատարվել նաև ՔԿ հիմնարկում ձևավորված ոչ ֆորմալ խմբերում (ագատագրկվածը, հայտնվելով ՔԿ հիմնարկում, բախվում է այնտեղ գործող ոչ ֆորմալ հարաբերությունների համակարգի հետ, որի նկարագրման համար կիրառվում է հատուկ տերմինաբանություն: Այստեղ յուրաքանչյուր դատապարտյալ հիերարխիկ համակարգում զբաղեցնում է իրեն համապատասխան կարգավիճակ): Պարզվել է, որ ինքնակործանիչ վարքային ձևերին դիմել են այն անձինք, ովքեր ընդգրկված են եղել, այսպես կոչված, «մերժվածների» խմբում՝ 20%, իսկ 6,25%-ը կազմել են հեղինակության ձգտող և նրանց միջավայրին մոտ գտնվող անձիք:

ՔԿ հիմնարկներում աուտոդեստրուկտիվ վարքագիծը կապված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից: Դրանք են՝ ՔԿ հիմնարկի ռեժիմը, նախկին միջավայրից հարկադրաբար մեկուսացումը, իրավունքների և ազատությունների սահմանափակումը, ընտանեկան կապերի խզումը, ադմինիստրացիայի կողմից մշտական վերահսկողությունը, պարտադրաբար միևնույն սեռի խմբում ընդգրկվելը, մենակ մնալու անկարողությունը, կյանքի ռիթմի միատոնությունը, քնի խանգարումը, տեղեկատվության սահմանափակումը, շարունակա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

⁹ Ագրավացիա – (լատ.՝ *aggravatio* – ճնշում)՝ հիվանդության առանձին ախտանիշների (երբեմն՝ տառապանքի) չափազանցում հիվանդի կողմից: Ագրավացիան առանձնապես հակված են հոգեկան խանգարում ունեցողները, հիստերիայով տառապողները: Ագրավացիան պետք է տարբերել սիմուլյացիայից, որի մեջ մղումներով ցուցադրվում են հիվանդության փաստացի բացակայության նշանները:

կան սթրեսները, ֆրուստրացիան, քրեական միջավայրի շերտավորումը, ոչ ճիշտ սոցիալական ընկալումները, խառնվածքը, անկայուն հուզականային ոլորտը, կյանքին սպառնացող վտանգը՝ ինչը հանգեցնում է անվտանգության զգացումի նվազմանը, անձնային հատկանիշների, բնավորության գծերի շեշտվածության:

Դիտարկումների ընթացքում պարզվել է, որ ՔԿ հիմնարկներում ինքնակործանիչ վարքի դիմում են հիմնականում կարանտինային բաժանմունքում գտնվող առաջին անգամ անազատության մեջ հայտնված անձինք: Դատապարտյալի անձի հոգեբանության տեսանկյունից այս փուլը համարվում է *հոգեբանական հարմարման՝ ադապտացիայի* փուլ, որը տևում է 1-3 ամիս և կոչվում է ընդհանուր կողմնորոշման փուլ: Այս ընթացքը մշտապես ուղեկցվում է մի շարք սթրեսներով: Ազատագրված անձաններում գտնվող անձանց ադապտացիայի մեխանիզմները հասկանալու համար պենիտենցիար հոգեբանության մեջ վերջին ժամանակներում լայն տարածում է գտել *քրեակադարողական սթրես* հասկացությունը: Ընդ որում՝ քրեակատարողական սթրեսը հաճախ համարվում է հուզական լարվածության հոմանիշ՝ մեկուսացման պայմանների հետ կապված¹⁰: Քրեակատարողական սթրեսը բացասաբար է անդրադառնում ոչ միայն պատիժը կրող անձի առողջության վրա, այլև նպաստում է տարբեր ապակառուցողական գործողությունների դրսևորմանը, ինչպիսիք են հակաիրավական վարքը, ինքնավնասումները, ինքնասպանությունները, անօրինական գործողությունները, կոնֆլիկտները և այլն:

Նրանց հետ իրականացված հոգեբանական աշխատանքների ընթացքում ուշադրության է արժանացել նաև այն հանգամանքը, որ կարանտինային բաժանմունքում գտնվելիս հետազոտվողների 42%-ն ունեցել է Լյուշերի մեթոդիկայի վերլուծության համաձայն անկայուն հոգեվիճակ, տագնապի, անորոշության զգացում, կյանքի անիմաստության, ինքնամեկուսանալու և ինքնառնջացման մտքեր, որոնցից 14,75%-ի դեպքում ինքնասպանության միտքը

կապված է եղել ազատությունից զրկվելու հետ: Ընդ որում՝ այս խումբը համարվել է թիրախային, և նրանց հետ հետազայում իրականացվել են համապատասխան կանխարգելիչ աշխատանքներ:

Կարանտինային բաժանմունքն այն վայրերն է, որտեղ ինքնակործանիչ վարքային դրսևորումները, որպես կանոն, ամենաշատն են իրականացվում: Այստեղ ինքնակործանիչ վարքը ինչպես առաջին անգամ դատապարտվածների, այնպես էլ կրկնահանցագործների շրջանում կարելի է բացատրել տարբեր դիրքերից. նախաքննության շրջանում (հարցաքննություն, առերեսում և այլն) առաջացած կոնֆլիկտային իրավիճակը (հաճախ առաջանում են նաև ներանձնային կոնֆլիկտներ), անորոշությունը, կատարած հանցագործության համար դատապարտվելու և դրա բացասական հետևանքների մասին վախը կալանավորված անձին ստիպում են գտնվել մշտական սթրեսի մեջ: Մարդկային հոգեբանության վրա հատկապես ցավալի է ազդում նորեկների ընդունման արարողությունը, նրանց փորձելը և այլն, որը նպատակ ունի պարզելու նորեկի անձը, ընդգծելու հանցավոր հեղինակության առավելությունը: Տվյալ իրավիճակում նորեկների շրջանում զգայունակության շեմը շատ ավելի բարձր է, և նրանք այդ ֆոնի վրա հաճախ են դիմում աուտոդեստրուկտիվ վարքային ձևերի:

Այսպիսով՝ մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությամբ կարող ենք ասել, որ.

1. Ինքնակործանիչ վարքի ձևերին հակված են հիմնականում բացասական բնութագրվող դատապարտյալները:
 2. Ինքնակործանիչ վարքի դիմում են ՔԿ հիմնարկում ձևավորված ոչ ֆորմալ խմբերում ընդգրկված դատապարտյալները, ովքեր մերժվել են ռեֆերենտային համարվող խմբի կողմից:
 3. Ինքնասպանության հակված են առաջին անգամ անազատության մեջ հայտնված անձինք:
- ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի¹¹ հիմնական նպատակն է համարվում կալանավոր-

¹⁰ Мельникова Д.В. Пенитенциарный стресс и особенности его проявления у осужденных, подозреваемых, обвиняемых // Д.В. Мельникова, М.Г. Дебольский / Психология и право, 2015. – №2. – С. 107.

¹¹ Այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ:

ված անձանց և դատապարտյալների ուղղումը, վերասոցիալականացումը հասարակություն վերադառնալու համար, որի իրականացման համար ՔԿ հիմնարկների կողմից ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

ՀՀ ՔԿՕ-ի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՔԿՕ-ի խնդիրներից են՝ սահմանել քրեական պատիժներ կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու և կրելու կարգն ու պայմանները, ապահովել դատապարտյալի ուղղման համար անհրաժեշտ պայմաններ, պաշտպանել նրա իրավունքները և ազատությունները: Նույն օրենսգրքի 16-րդ և 17-րդ հոդվածները վերաբերում են դատապարտյալի ուղղմանը և դրա հիմնական միջոցներին¹²: Իսկ ըստ ՀՀ արդարադատության նախարարի 13.06.2016թ. թիվ 279-Ն հրամանի 27-րդ կետի 6-րդ ենթակետի՝ պետք է կալանավորված անձի կողմից սննդի ընդունումից հրաժարվելու, ինքնավնասման, հիվանդության սիմուլյացիայի դեմ կանխարգելիչ մասնագիտական՝ հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացվեն¹³:

Մենք տեսնում ենք, որ բավականին ընդգրկուն մշակված է օրինախախտ անձանց ուղղման գործընթացը, սակայն, այդքանով հանդերձ՝ անազատության մեջ պահվող անձանց ինքնակործանիչ վարքային առանձնահատկությունները, դրանց ժամանակին ախտորոշումը դեռևս լիովին լուծված չեն տարբեր պատճառներով:

Ինքնակործանիչ վարքի ախտորոշման համար իրականացվող աշխատանքները պետք է նպատակաուղղված և կազմակերպված կերպով տարածվեն բոլոր դատապարտյալների վրա, քանի որ, համեմատած այլ սոցիալական խմբերի, այս խումբը համարվում է բարձր ռիսկայնություն պարունակող խումբ: Նման վարքային դրսևորումը պետք է դիտարկել որպես անձի և միջավայրի փոխազդեցության արդյունք, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ

ՔԿ հիմնարկներում բազմաթիվ իրավախախտ, անօրինական գործողությունների, ինքնակործանիչ վարքի ձևերի արմատները նաև պետք է փնտրել դատապարտյալների փոխհարաբերություններում և նրանց նեղ սոցիալական միջավայրում, որտեղ նրանց շահերը, հետաքրքրությունները սերտորեն հատվում են: Դատապարտյալների միկրոմիջավայրը՝ որպես սոցիալական միջավայր, կապված է հանցավոր գործողությունների և պատժի կրման հետ: Սա նշանակում է, որ մասնագետները, տիրապետելով ՔԿ հիմնարկներում սոցիալ-հոգեբանական մթնոլորտին, հնարավոր է կանխատեսեն դատապարտյալի վարքագիծը և արագ ազդեն պատճառների, պայմանների վրա՝ կանխելով կատարվելիք ինքնակործանիչ վարքը:

ՔԿ հիմնարկներում պահվող ինքնակործանիչ վարքով անձանց հարմարումը բավականին բարդ շրջան է՝ ստեղծված իրավիճակի, պայմանների և պատճառների հետ կապված: Թեպետ պայմանները և պատճառները փոխկապված են իրար հետ, այնուամենայնիվ, ախտորոշելու և նախականիելու համար նպատակահարմար է դրանք վերլուծել առանձին: Յու.Մ. Անտոնյանը նշում է, որ քրեագիտության կողմից պայմանները, պատճառները չեն կարող լիովին տարածվել ՔԿ հիմնարկներում դատապարտյալների շրջանում, քանի որ ՔԿ հիմնարկները որոշ առումով նպաստում են անձի քրեականացմանը¹⁴: Այս առումով ուշադրության են արժանի պրոֆեսոր Վ. Գրոմովի ուսումնասիրության արդյունքները, որոնց համաձայն ազատագրվում կրող դատապարտյալների 51,5%-ը նշել է, որ ուղղիչ հիմնարկները նպաստում են իրենց հանցավոր վարքագծի խորացմանը¹⁵:

Անխոս՝ ՔԿ հիմնարկներում իրականացվող վերականգնողական աշխատանքները կարևոր դեր ունեն դատապարտյալների ուղղման, վերասոցիալականացման գործընթացում: Իրականացվող աշխատանքների շնորհիվ կազմվում է դատապարտյալի հոգեբանա-

¹² Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=52053> (մուտք՝ 25.04.2019թ.):

¹³ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107555> (մուտք՝ 25.04.2019թ.):

¹⁴ Антонян Ю.М., Эминов В.Е. Преступление и наказание: криминологический психологический анализ: монография.– М.: Норма: Инфра-М, 2010.– СС. 243–245.

¹⁵ Громов В.Г. Криминогенность мест лишения свободы и ее нейтрализация // Автореф. Дис. д-...ра юрид. наук.– Тамбов: Тамбовский государственный университет имени Г.Р. Державина, 2009.– С. 4.

սոցիալական բնութագիրը, որը ՔԿ ծառայողներին թույլ է տալիս հետագա աշխատանքները դատապարտյալների հետ իրականացնել՝ ունենալով որոշակի հիմք: Սակայն անձնային ավելի խոր որակները, հակվածությունները, ինչպիսին է ինքնասպանության և ինքնակործանիչ վարքի նախատրամադրվածությունը, որը ամենապատեհ պահի կարող է դրսևորվել, մնում է ոչ լիարժեք փսխորոշված:

Այս առումով անազատության մեջ գտնվող անձանց հետ կատարվող աշխատանքների գործառույթներից մեկն էլ պետք է համարվի **կանխատեսող և կանխարգելիչ**, որի նպատակն է անազատության մեջ պահվող անձանց խմբային և անհատական վարքի կանխատեսումը, միջանձնային կոնֆլիկտների, սուիցիդալ վարքի, հուզական այրման, նեգատիվ դրսևորումների ժամանակին բացահայտումը և կանխարգելումը: Կանխատեսման դեպքում ժամանակին կբացահայտվեն ինքնակործանիչ վարքին հակված անձինք, որոնց հետ կիրականացվեն հետագա աշխատանքները: Իսկ այդ նպատակով անհրաժեշտ է, որ նրանց հետ կատարվող հոգեբանական աշխատանքներն ունենան շարունակական բնույթ: Ուստի ՔԿ հիմնարկներում ինքնակործանիչ վարքի պատկերը մեղմելու համար, նախ, անհրաժեշտ է.

1. Բոլոր ՔԿ հիմնարկներում իրականացնել մշտադիտարկում՝ հասկանալու համար, թե ո՞ր տիպի հիմնարկներում, անազատության մեջ պահվող անձանց ո՞ր խմբերում, պատժի կրման ո՞ր փուլերում, ի՞նչ հանցատեսակով և պատժա-

չափով անձինք են հակված ինքնակործանիչ վարքի:

2. Այնուհետև մշակել նրանց հետ հետագա աշխատանքների ռազմավարության և մեթոդաբանության ծրագրեր:

3. Հոգեբանների ընտրության հարցում վարել կադրային ճիշտ քաղաքականություն, քանի որ մոտ 300 (որոշ հիմնարկներում այդ թիվը շատ ավելի մեծ է) կալանավորված անձի և դատապարտյալի հետ աշխատում է ընդամենը մեկ հոգեբան (կան նաև հիմնարկներ, որտեղ ժամանակ առ ժամանակ հոգեբանի հաստիքը մնում է թափուր), ով ունի բազային հոգեբանական կրթություն, բայց ո՛չ պենիտենցիար հոգեբանական ուղղվածության մասնագիտացում:

Մենք տեսնում ենք, որ անազատության մեջ գտնվող անձանց ինքնակործանիչ վարքի պատճառները համարվում են, այսպես կոչված, «պենիտենցիար» պատճառներ, որոնք տեղի են ունենում բացառապես ՔԿ հիմնարկներում և անազատության մեջ հայտնվելու հետևանքով: Ուստի, տիրապետելով անազատության մեջ պահվող անձանց վրա ազդող օբյեկտիվ և սյուբեկտիվ գործոններին, նրանց հետ տարվող մշտական հոգեբանական աշխատանքների միջոցով հնարավոր է ժամանակին բացահայտել անձի աուտոդեստրուկտիվ վարքի նախնական գաղտնի շրջանը և խուսափել բացասական հետևանքներից, ինչպիսիք են ինքնասպանությունը և ինքնակործանիչ վարքը:



ԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ-ռուսական համալսարան,
 Իրավունքի և քաղաքականության ինստիտուտ
 Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՈՇ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածում հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվում կաշառք տալու, կաշառքի միջնորդության և կաշառք ստանալու համար քրեական պատասխանատվությունից ազատող նորմերը. օտարերկրյա պետությունների օրենսդրության համաձայն՝ իրականացվում է նշված խրախուսական նորմերի իրավական կարգավորումների իրավահամեմատական վերլուծություն՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսդրության հետ: Մասնավորապես՝ անցկացվում է ԵԱԶԲ, ԱՊՀ երկրների, որոշ եվրոպական երկրների քրեական օրենսդրության իրավահամեմատական վերլուծությունը ՀՀ և ՌԴ քրեական օրենսդրության հետ:

Բանալի բառեր. խրախուսական նորմեր կաշառակերության դեմ պայքարում, քրեական պատասխանատվությունից ազատելը, օտարերկրյա պետությունների օրենսդրությունը, ՀՀ քրեական օրենսգիրք, կաշառակերություն:

АНУШ АКОПЯН

Российско-Армянский университет,
 Институт права и политики,
 аспирант Кафедры уголовного права и уголовно-процессуального права

ЗАКОНОДАТЕЛЬНОЕ РЕГУЛИРОВАНИЕ ПООЩРИТЕЛЬНЫХ НОРМ В БОРЬБЕ СО ВЗЯТОЧНИЧЕСТВОМ В НЕКОТОРЫХ ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ

В данной работе автором рассматриваются нормы, устанавливающие возможность освобождения от уголовной ответственности за дачу взятки, посредничество во взяточничестве и получение взятки по законодательству некоторых зарубежных стран, проводится сравнительно-правовое исследование законодательного регулирования указанных поощрительных норм с уголовным законодательством Республики Армения и Российской Федерации. В частности, проводится сравнительно-правовое исследование уголовного законодательства стран-участников ЕАЭС, стран СНГ, некоторых европейских стран и уголовного законодательства РА и РФ.

Ключевые слова: поощрительные нормы в борьбе со взяточничеством, освобождение от уголовной ответственности, законодательство зарубежных стран, УК РА, взяточничество.

ANUSH HAKOBYAN

Russian-Armenian University,
 Institute of Law and Politics,
 PhD Student at the Department of Criminal Law and Criminal Procedure Law

LEGISLATIVE REGULATION OF INCENTIVES RULES IN FIGHT AGAINST BRIBERY IN SOME FOREIGN COUNTRIES

In this paper, the author examines the rules that establish the possibility of exemption from criminal liability for giving a bribe, mediation in bribery and accepting a bribe under the laws of some foreign countries; conducts a comparative-legal analysis of the legislative regulation of these promotional rules with the criminal legislation of the Republic of Armenia and the Russian Federation. In particular, a comparative-legal analysis of the criminal legislation of the countries participating in the EAEU, the CIS countries, some European countries and the criminal legislation of the Republic of Armenia and the Russian Federation is being conducted.

Keywords: incentive norms in fight against bribery, exemption from criminal liability, legislation of foreign countries, RA Criminal Code, bribery.

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

ԳՈՇԱՐ ԱԴՈՆՑ

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ՝ ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածը նվիրված է վերաքննության սահմաններին և վերաքննիչ դատարանում նոր ապացույցներ ներկայացնելու կողմերի հնարավորության հիմնահարցին, որը քննարկման առարկա է դարձել անմեղության կանխավարկածի սկզբունքի համատեքստում: Հոդվածում ներկայացվել են անմեղության կանխավարկածի սկզբունքի հիմնական բովանդակությունն ու ապացուցման բեռի վերաբերյալ կանոնի նշանակությունը, այնուհետև այդ մեկնաբանությունների համատեքստում քննարկման առարկա են դարձել վերաքննիչ դատարանում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորության սահմանափակումները:

Քննարկման շնորհիվ հեղինակը եզրահանգել է, որ վերաքննության սահմանների վերաբերյալ իրավակարգավորումներն ու դրանց մեկնաբանությունները չեն համապատասխանում անմեղության կանխավարկածի սկզբունքին, քանի որ, ուղղակիորեն բացասական հետևանքներ առաջացնելով իր անմեղությունն ապացուցելու համար առաջին ատյանի դատարան ապացույց չներկայացրած ամբաստանյալի համար ու զրկելով նրան այդ ապացույցը վերաքննիչ դատարան ներկայացնելու հնարավորությունից, անուղղակիորեն նրա վրա դնում են իր անմեղությունն ապացուցելու պարտականություն:

Հեղինակը եզրակացրել է, որ վերաքննիչ դատարանում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը սահմանող դատավարական նորմերը պետք է մեկնաբանվեն դատական վերանայման սահմանները շրջանցելու դատավարական հնարավորությունների համատեքստում և այն տրամաբանությամբ, որը թույլ կտա ամբաստանյալին քրեական հետապնդումը բացառող հանգամանքը և իր անմեղությունը հաստատող ապացույցներ ներկայացնել՝ առաջին ատյանի դատարանում դրանք ներկայացրած լինելու կամ այդպիսի հնարավորություն ունենալու հանգամանքից անկախ: Վերաքննիչ դատարան նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը չի կարող սահմանափակվել նաև այն դեպքում, երբ նոր ապացույց ներկայացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է բացառապես վերաքննիչ բողոքով՝ դրանում ներկայացված փաստարկը հերքելու համար:

Բանալի բառեր. անմեղության կանխավարկած, ապացուցման բեռ, դատական վերանայում, վերանայման սահմաններ, վերաքննություն:

ГОАР АДОИЦ

Прокурор прокуратуры административных округов Ачапняк и Давташен

ВОПРОСЫ ПРЕДЕЛОВ АПЕЛЛЯЦИОННОГО РАССМОТРЕНИЯ ДЕЛА В КОНТЕКСТЕ ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ

Статья посвящена вопросам пределов апелляционного рассмотрения дела и возможностей представления сторонами новых доказательств в Апелляционном суде, который в статье стал предметом обсуждения в контексте принципа презумпции невиновности. В статье представлены основное содержание принципа презумпции невиновности и значение правила бремени доказывания, и в контексте этих комментариев ограничения в возможностях предъявления новых доказательств в Апелляционном суде стали предметами обсуждения.

В результате обсуждений автор пришел к выводу о том, что правовые нормы, регулирующие пределы апелляционного рассмотрения дела и их толкования, не соответствуют принципу презумпции невиновности, так как, прямо пробуждая негативные последствия для подсудимого, который в суде первой инстанции не представил доказательств своей невиновности, и лишая его возможности представления данных доказательства в апелляционном суде, косвенно возлагают обязанность доказывания своей невиновности на подсудимого.

Автор пришел к выводу, что нормы, устанавливающие возможности представления новых доказательств в Апелляционном суде, должны толковаться в контексте процессуальных возможностей, позволяющих обойти пределы судебного пересмотра, и по той логике, которая позволит подсудимому предоставлять обстоятельство, исключающее уголовное преследование, и доказательства своей невиновности независимо от того, было ли оно представлено или было ли в суде первой инстанции.

Возможность представления новых доказательств в апелляционном суде также не может быть ограничена в тех случаях, когда необходимость их представления обусловлена исключительно апелляционной жалобой для опровержения доводов, представленных в нем.

Ключевые слова: презумпция невиновности, бремя доказывания, судебный пересмотр, пределы пересмотра, апелляция.

GOHAR ADONTS

Prosecutor in the prosecutor’s office of Ajapnyak and Davtashen administrative districts

THE ISSUE OF THE LIMITS OF THE APPELLATE REVIEW IN THE CONTEXT OF THE PRINCIPLE OF PRESUMPTION OF INNOCENCE

The article is devoted to the issues of the limits of the appellate review and the possibilities of the parties to present new evidences, which has been discussed in the context of the principle of presumption of innocence. The article presents the main content of the principle of the presumption of innocence and the meaning of the concept of the burden of proof. In the context of these interpretations it has been discussed the limitations of the possibilities to present a new evidence in the Appellate court.

As a result of the discussion, the author concluded that the legal regulations about the limits of the appellate review and its interpretations did not comply with the principle of the presumption of innocence, because direct causing of negative consequences to the defendant who did not present evidence in the first instance court and depriving him of the opportunity to present that evidence to the Court of Appeal, indirectly shifts the obligation of proving his innocence to the defendant.

The author has found that the procedural norms regulating the possibility of presenting new evidence in the appellate court should be interpreted in the context of procedural capabilities to circumvent the limits of judicial review and with the logic that will allow the defendant to present the circumstance excluding the criminal prosecution and evidences of his innocence, regardless whether they have been presented to the first instance court or whether there have been such opportunity.

The opportunity of presenting new evidence to the Appellate Court can not be restricted also in the cases when the necessity of presenting a new evidence is exclusively due to the appeal in order to refute the arguments presented therein.

Keywords: presumption of innocence, burden of proof, judicial review, the limitations of the review, appellation.

* * *

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 112 2019

ՆԵՐՍԻ ԱՇՐԱՖՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Անհրաժեշտ է տարբերակել տուժողի հետ հաշտության կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը և ինքնին հաշտեցումը: Հաշտեցումը հիմք է դատավարական որոշում կայացնելու համար և կարող է հաշվի առնվել ոչ միայն քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս, այլև կոնկրետ քրեական գործը քննելիս դատարանը կարող է հաշվի առնել որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք: Հաշտեցման ինստիտուտի քրեաիրավական բնույթի ուսումնասիրությունը ենթադրում է համապատասխան սկզբունքների ամրագրում, որը կարևոր է դրա արդյունավետ կիրառության համար:

Բանալի բառեր. հաշտեցում, քրեական պատասխանատվություն, պատիժ, տուժող, սոցիալական արդարություն:

НЕЛЛИ АШРАФЯН

Соискатель Института философии,
социологии и права НАН РА

УГОЛОВНО-ПРАВОВОЙ ХАРАКТЕР ПРИМИРЕНИЯ С ПОТЕРПЕВШИМ

Необходимо проводить различие между уголовными преступлениями и примирением с жертвой. Примирение является основой для процессуального решения. Это может быть учтено не только при решении вопроса об уголовной ответственности, но и при рассмотрении конкретного уголовного дела, суд может принять во внимание обстоятельства, смягчающие ответственность и наказание. Исследование института примирения в области уголовного правосудия предполагает установление соответствующих принципов, которые важны для его эффективного применения.

Ключевые слова: примирение, уголовная ответственность, наказание, жертва, социальная справедливость

NELLI ASHRAFYAN

Aspirant of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

CRIMINAL-LEGAL NATURE OF RECONCILIATION WITH THE VICTIM

It is necessary to distinguish between criminal offenses and reconciliation with the victim. Reconciliation is a basis for a procedural decision. It can be taken into account not only in solving the issue of criminal liability, but also when considering a specific criminal case, the court may take into consideration the circumstance that mitigates liability and punishment. The criminal justice study of the institute for reconciliation implies the establishment of relevant principles that are important for its effective application.

Keywords: reconciliation, criminal liability, punishment, victim, social justice

* * *

ԴԱՎԻԹ ՕՏԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Սույն հոդվածը նվիրված է պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի էության բացահայտմանը և հետազոտմանը: Հոդվածում վերլուծվում են այն տարրերը, որոնք այս ինստիտուտի առաջացման նախադրյալներն են: Այդ վերլուծության արդյունքով քննարկվում է պայմանագրի մեկնաբանման տեսությունների առանձնացման հնարավորությունը:

Մասնավորապես՝ հեղինակի կողմից առաջարկվում է այդ նախադրյալների վրա հիմնված, պայմանագրի մեկնաբանման երկու տեսություն՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ, որոնք կարող են լինել ուղենիշներ պայմանագրի մեկնաբանման կանոնների ձևավորման համար:

Բանալի բառեր. պայմանագրի մեկնաբանում, պայմանագրի մեկնաբանման կանոն, լինգվիստիկա, մեկնաբանման օբյեկտիվ նախադրյալ, մեկնաբանման սուբյեկտիվ նախադրյալ, հասկացողության հորիզոն, թաքնված անորոշություն:

ДАВИТ ОГАНЯН

Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения

ПРЕДПОСЫЛКИ ТОЛКОВАНИЯ ДОГОВОРА

Данная статья посвящена выявлению и исследованию сущности института толкования договора. В статье анализируются те элементы, которые являются предпосылками происхождения данного института. В результате данного анализа обсуждается возможность разделения теорий толкования договора.

В частности, автор предлагает две теории основанные на данных предпосылках: объективную и субъективную. которые могут быть ориентирами для образования правил толкования договора.

Ключевые слова: толкование договора, правила толкования договора, лингвистика, объективная предпосылка толкования, субъективная предпосылка толкования, горизонт понимания, латентный.

DAVIT OHANYAN

Postgraduate student of Educational Complex of Police of RA

THE PREREQUISITES OF INTERPRETATION OF CONTRACT

This article is devoted to the study and research of the essence of the institute of interpretation of contract. In the research have been analyzed the elements, which are the prerequisites of the origin of this institute. As a result, the author discusses the opportunity of the division of the theories of interpretation of contract.

The author, particularly, offers two theories founded on these prerequisites, which can be the guidelines for the creation of the canons of interpretation of contract.

Keywords: interpretation of contract, the canon of interpretation of contract, linguistics, objective prerequisite of interpretation, subjective prerequisite of interpretation, the horizon of understanding, hidden ambiguity.

* * *

ԼՈՒՍԻՆԵ ԹԱՍԱԼՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս,
ոստիկանության ավագ լեյտենանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքում ներկայացված են Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների հաշտարարության ինստիտուտների հիմնախնդիրները: Ուսումնասիրվել է Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի, Հոլանդիայի և այլ եվրոպական երկրների փորձը, և տարվել են համեմատական եզրեր: Հետազոտման արդյունքով առանձնացվել են բոլոր այն առավելությունները, որոնք դրական նշանակություն կունենան իրավակիրառ պրակտիկայում: Հետազոտվել են հաշտարարության գործնական խնդիրները և հաշտարարությունը՝ որպես գիտություն: Աշխատանքում կատարվել են նաև համապատասխան առաջարկություններ, որոնք, կարծում ենք՝ անհրաժեշտություն են ու կնպաստեն հաշտարարության ինստիտուտի կայացման հիմնախնդիրներին:

Բանալի բառեր. հաշտարար, խնդիր, այլընտրանք, Հայաստանի Հանրապետություն:

ЛУСИНЕ ТАСАЛЯН

Преподаватель кафедры уголовного права и криминологии факультета правоведения Академии образовательного комплекса полиции Республики Армения, старший лейтенант полиции

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ МЕДИАЦИИ РА

В работе представлены проблемы институтов медиации Республики Армения и других государств. Изучен опыт Российской Федерации, Германии, Нидерландов и других европейских стран, и было проведено сравнение. В результате исследования были выделены все те преимущества, которые будут иметь положительное значение в практике правоприменения. Исследованы практические медиационные проблемы и медиация, как наука. В работе приведены соответствующие предложения, которые, как мы считаем, необходимы и поспособствуют решению основных проблем становления института.

Ключевые слова: медиации, проблема, альтернатива, Республика Армения.

LUSINE TASALYAN

Lecturer of the Chair Law and Criminology
of the Academy of Educational Complex of Police
of the Republic of Armenia,
Senior Lieutenant

THE ISSUES OF MEDIATION OF RA

The issues of mediation institutes of the Republic of Armenia and other states are represented in the work. The practice of the Russian Federation, Germany, Netherlands and other European countries has been studied and comparisons have been made. As a result of the research all those advantages which held positive significance in the law enforcement practice have been singled out. The practical issues of mediation and mediation as a science have been researched. Corresponding suggestions have also been made in the work, which are necessary from our point of view and will contribute to the issues of formation of mediation institute.

Keywords: mediation, problem, alternative, Republic of Armenia.

* * *

ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սույն հոդվածում հեղինակը, քննարկման առարկա դարձնելով պետական իշխանության համակարգում գործադիր իշխանության բնութագրիչները և դիտարկելով դրանք ժամանակակից սահմանադրական բարեփոխումների համատեքստում, առաջադրում է իր սեփական տեսակետն իշխանությունների բաժանման և հավասարակշռության համակարգում գործադիր իշխանության տեղի վերաբերյալ:

Բանալի բառեր. պետական իշխանություն, իշխանությունների բաժանում և հավասարակշռում, պետական կառավարում, գործադիր իշխանության մարմին, լիազորություն:

БАГРАТ КАЗИНЯН

Прокурор прокуратуры административных районов Арабкир и Канакер-Зейтун города Еревана, Советник юстиции первого класса, кандидат юридических наук, доцент

ИСПОЛНИТЕЛЬНАЯ ВЛАСТЬ В СИСТЕМЕ РАЗДЕЛЕНИЯ И БАЛАНСА ВЛАСТЕЙ

В этой статье автор рассматривает характерные черты исполнительной власти в системе государственного власти и в контексте современных конституционных реформ выдвигает свою точку зрения на положение исполнительной власти в системе разделения и баланса властей.

Ключевые слова: правительство, разделение и баланс власти, государственное управление, орган исполнительной власти, полномочие.

BAGRAT GHAZINYAN

Prosecutor of the Prosecutor’s Office of the Arabkir and Kanaker-Zeytun administrative Districts of the Yerevan,
First Class Counselor of Justice,
PhD in Law, Associate Professor

EXECUTIVE POWER IN THE SYSTEM OF SEPARATION AND BALANCE OF THE STATE POWERS

In this article, the author examines the characteristics of the executive branch in the system of state power and, in the context of modern constitutional reforms, puts forward his point of view on the position of the executive branch in the system of separation and balance of powers.

Keywords: government, separation and balance of state power, state governance, executive authority, competence

* * *

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական
վարչության գլխավոր մասնագետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Հոդվածում համեմատական վերլուծության են ենթարկվել խորհրդարանական հանրապետությունների նախագահների սահմանադրական կարգավիճակները, մասնավորապես՝ պետական իշխանության մարմինների համակարգում հանրապետության նախագահի ինստիտուցիոնալ տեղը, գործառույթների և լիազորությունների շրջանակները, դրանց իրականացման կարգը, ինչպես նաև հանրապետության նախագահի ընտրության հետ կապված հարցերը: Կատարված վերլուծությամբ վեր են հանվել հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունները խորհրդարանական տարբեր մոդելի հանրապետություններում:

Բանալի բառեր. խորհրդարանական հանրապետություն, նախագահ, ինստիտուցիոնալ կարգավիճակ, գործառույթ, լիազորություն, վետո, պաշտոնանկություն:

АЙК КЕСОЯН

Главный специалист юридического
департамента аппарата премьер-министра РА,
кандидат юридических наук

**КОНСТИТУЦИОННЫЙ СТАТУС ПРЕЗИДЕНТА РЕСПУБЛИКИ В ПАРЛАМЕНТСКИХ РЕСПУБЛИКАХ
(СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ)**

В статье анализируется конституционный статус президентов парламентских республик, в частности, институциональное положение президента в системе органов государственной власти, объем функций и полномочий, порядок их реализации, а также вопросы, связанные с президентскими выборами. В результате анализа выявлены особенности конституционного статуса президента республики в разных парламентских республиках.

Ключевые слова: парламентская республика, президент, институциональный статус, функция, власть, вето, отставка.

HAYK KESOYAN

Chief specialist of the legal department of the office of prime minister of RA,
Phd

**THE CONSTITUTIONAL STATUS OF THE PRESIDENT IN THE PARLIAMENTARY REPUBLICS
(COMPARATIVE ANALYSIS)**

The article analyzes the constitutional status of the presidents of the parliamentary republics, in particular, the institutional location of the president in the system of public administration bodies, the scope of functions and powers, the order of their implementation, as well as issues related to the presidential election. As a result of the analysis, in the article highlights the peculiarities of the constitutional status of the president of the republic in parliamentary republics in the various parliamentary republics.

Keywords: parliamentary republic, president, institutional status, function, authority, veto, dismissal.

* * *

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Եվրասիա» միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս,
նույն ամբիոնի հայցորդ

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Եվրոպական պետությունների պատմական փորձի ուսումնասիրությունն անհրաժեշտություն է պառլամենտարիզմի էությունը հասկանալու համար: Սույն հոդվածը վերաբերում է 13-18-րդ դարերում Անգլիայում և Ֆրանսիայում պառլամենտարիզմի էվոլյուցիոն զարգացմանը և բովանդակում է կարևոր տեղեկատվություն՝ պառլամենտարիզմի հիմնական տարրերի զարգացման վերաբերյալ:

Բանալի բառեր. պառլամենտարիզմ, խորհրդարանական, դասական, միապետություն, վարչակարգ:

МАРТИН МАНУКЯН

Преподаватель юридического факультета Международного университета "Евразия",
соискатель той же кафедры

ПАРЛАМЕНТАРИЗМ В ИСТОРИИ: ЕВРОПЕЙСКИЙ ОПЫТ

Изучение исторического опыта европейских стран необходимо для понимания сути парламентаризма. Эта статья относится к эволюционному развитию парламентаризма в Англии и Франции в 13-18 веках и содержит важную информацию, касающуюся развития основных элементов парламентаризма.

Ключевые слова: парламентаризм, парламентский, классический, монархия, режим.

MARTIN MANUKYAN

Lecturer in the Law Department of "Eurasia" International University,
suapplicant of the same chair

PARLIAMENTARISM IN THE HISTORY: EUROPEAN EXPERIENCE

Studying of the historical experience of European countries is essential for understanding the essence of parliamentarism. This article refers to the evolutionary development of parliamentarism in England and France in the 13-18th centuries and includes important information concerning the development of the main elements of parliamentarism.

Keywords: parliamentaryism, parliamentary, classical, monarchy, regime.

ՍԱՄՎԵԼ ԲԱՐՍԵԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի
հայցորդ

**ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՏԵՂԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկել է իրավական պետության հայեցակարգի բովանդակային առանձնահատկությունները և դրանց տեղն ու նշանակությունը իրավունքի տեսության և հայեցակարգերի համակարգում:

Հոդվածում հեղինակն անդրադարձ է կատարել նաև իրավական պետության կայացման հիմնախնդիրներին, բացահայտել է վերջիններիս հիմնական ասպեկտները և դրանց լուծումներին ուղղված մոտեցումները:

Բանալի բառեր. իրավական պետություն, օրենքի գերակայություն, իրավունքի տեսություն, հայեցակարգ, համակարգ, իրավաբանական հավասարություն, ազատություն, արդարություն:

САМВЕЛ БАРСЕГЯН

Соискатель института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения

МЕСТО И ЗНАЧЕНИЕ КОНЦЕПЦИИ ПРАВОВОГО ГОСУДАРСТВА В СИСТЕМЕ ТЕОРИИ ПРАВА

В данной статье автор тщательно обсудил содержательные особенности концепции правового государства и их место и значение в системе концепций и теории права.

В статье автор обратился к проблемам становления правового государства, выявил основные аспекты последних и подходы к их решению.

Ключевые слова: правовое государства, верховенство права, теория права, концепция, система, юридическое равенство, свобода, справедливость.

SAMVEL BARSEGHYAN

Applicant in law at the Institute of philosophy, sociology and law of the
National Academy of Sciences, RA, suppliant

**THE PLACE AND SIGNIFICANCE OF THE CONCEPT OF THE RULE OF LAW IN THE SYSTEM
OF THE THEORY OF LAW**

In this article, the author, the author carefully discussed the substantive features of the concept of the rule of law and their place and importance in the system of concepts and theory of law.

In the article the author turned to the problems of the formation of the rule of law, revealed the main aspects of the latter and approaches to their solution.

Keywords: rule of law, law supremacy, theory of law, concept, system, legal equality, freedom, justice.

ՀԵՐՄԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՊՄՀ զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ, արդարադատության կապիտան

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՌԻՏՈՂԵՍՈՐՈՒԿՏԻՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հոդվածում քննարկվում են ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կատարված աուտոդեստրուկտիվ (ինքնասպանություն և ինքսկործանիչ) վարքագծի վերաբերյալ հեղինակի՝ որպես հոգեբանի սեփական դիտարկումների արդյունքները, ինչպես նաև վերլուծվում են բարձրացված հարցի շուրջ հետազոտող գիտնականների մոտեցումները: Ներկայացվում է նշված համակարգում առկա վիճակը, որը շատ հաճախ բացասական է անդրադառնում անազատության մեջ պահվող անձանց հոգեվիճակի վրա՝ դրդելով դրսևորելու ինքնակործանիչ վարքագիծ: Տրվում են աուտոդեստրուկտիվ վարքի դասակարգումը, ձևերը և դրան նպաստող օբյեկտիվ և սյուբյեկտիվ պատճառները, ինչպես նաև նման վարքագծի հետագա հաղթահարման ռազմավարությունը:

Բանալի բառեր. քրեակատարողական հիմնարկ (ՔԿ), դատապարտյալ, ազատազրկում, աուտոդեստրուկտիվ վարք, ինքնասպանություն և ինքսկործանիչ վարքային ձևեր:

ГЕРМИНЕ ГЕВОРГЯН

Соискатель кафедры развития и прикладной психологии АГПУ им. Хачатура Абовяна, капитан юстиции

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ДИАГНОСТИКИ АУТОАГРЕССИВНОГО ПОВЕДЕНИЯ ЛИЦ, ОБВИНЯЕМЫХ И ОСУЖДЕННЫХ В ПЕНИТЕНЦИАРНЫХ УЧРЕЖДЕНИЯХ МИНИСТЕРСТВА ЮСТИЦИИ РА

В статье обсуждаются авторские результаты собственного наблюдения и исследования психолога, относящиеся к аутодеструктивным (самоубийство и саморазрушение личности) поведением лиц, находящихся в заключении в пенитенциарном учреждении "Горис" Министерства юстиции РА, а также анализируются различные научные подходы учёных к аутодеструктивному поведению обследуемых заключенных. В данной системе представляется текущее состояние, которое зачастую негативно влияет на психологическое состояние лиц, находящихся в заключении, побуждая к проявлению аутодеструктивного поведения. Даются классификация поведенческих форм, виды и способствующие им субъективные и объективные факторы, а также стратегия дальнейшего преодоления такого поведения.

Ключевые слова: исправительные учреждения, осуждённый, лишение свободы, аутодеструктивное поведение, суицидальные и несуйцидальные поведенческие формы.

HERMINE GEVORGYAN

PhD Applicant of Practical Psychology at Khachatur Abovian Armenian State Pedagogical University
Captain of Justice

DIAGNOSIS OF AUTO DISTRACTIVE BEHAVIOR OF PEOPLE, WHO RECENTLY APPEARED BEHIND BARS, AND SOLIAL-PSYHOLOGICAL PROBLEMS THAT COME FORWARD IN THAT PROCESS

The article discusses the findings of the author about auto-aggressive (suicidal and self-destructive) behavior of prisoners and convicts in «Goris» penitentiary of RA Ministry of Justice. It also analyzes the views and approaches of the researchers on the raised issue. The author presents current situation in the system, which often negatively affects the mental state of detainees provoking self-destructive behavior. The classification of auto-destructive behavior, its forms, reasons of objective and subjective factors, as well as the strategy for further overcoming such behavior are given in the article.

Keywords: penitentiary, convict, latency, auto-destructive behavior, suicidal and self-destructive behavior.

ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: